



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

7509

751

80

1

2005

STUDY OF THE  
SOCIETY

STUDY OF THE  
SOCIETY


9 (97.925)  
F-37

~~2249~~

(86011)

**ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՔՆՆԱԴԱ-  
ՏՈՒԹԵԱՆՑ**

**ՄԱԿԱՐ Վ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ**



**Տ Փ Ն Ի Ս**

**ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆԻ:**

**1888**

( 25846-43. )

... 2082 )

757 102

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Мая 1888 года.



( 22032-59 )

Типография М. Д. Ротинянца на Голов. прос. соб. домъ № 41.

„Մի՛ լինի՛ր ընդդէմ ճշմարտութեան և վասն անարժանութեան քո ակնածեալի՛ր“ . . . „Զգժուարագոյնս քան զքեզ՝ մի՛ խնդրե՛ր, և որ ինչ քան քան զքեզ զօրագոյն իցէ, մի՛ քննէ՛ր դնա՛“:

(Սերաբ. գլ. Գ. 30. և գլ. Գ. 22).

Մեր ժամանակի մայրերն ծնում են քննադատներ— այժմ ամեն ոք քննադատ է. վաճառականն քննադատ, արուեստաւորն քննադատ, երկրագործն քննադատ, ծառան քննադատ, դարն քննադատ, ժամանակն քննադատ, ոգին քննադատ, շրջապատդ քննադատ...:

Տակաւին պատմութիւն չուսանողն համարձակ քննադատում է պատմութիւններ. դեռ իւր մայրենի լեզուն ուսմամբ չկատարելագործողն՝ վստահօրէն քննադատ է հանդիսանում լեզուաբանական խնդրոց. դեռ իւր ծննդեան երկրի աշխարհագրական տեղերը չիմացողն՝ լանդգնում է քննադանել աշխարհագրական գիրքեր. տակաւին նոր շինութիւնները չիմաստասիրողն ձեւանում է հնադէտ. տակաւին իւր կարդացածի պարզ միտքը չըմբռնողն՝ ձգտում է քննադատել քաղաքական խնդիրներ...:

Սյս ակտամօլութեանց պատճառն այն է, որ Հայ գրականութեան աշխարհում ցարգ յարգուած չէ մասնագիտութիւնն, ինչպէս յարգուած է այն լուսա-

ւորեալ ազգաց գրականութեանց մէջ: Յաւալի է ասել որ Հայ մամուլն, փոխանակ զսպելու և յուղղութիւն հրաւիրելու այդպիսիները, բազմացնում է այդպիսեաց թիւը, ասպարէզ տալով և միանգամայն հօշակելով նոցա թիւը գրածները, իսկ խեղդելով — չհրատարակելով — գատապարտում է լուսթեան՝ նոցա դէմը գրողները արգար և իրաւացի ձայները:

Սւելորդ է գրել թէ այսպիսով վշտանում են հեղինակներն և թարգմանիչներն, պարզամտաց աչքում արհամարում են հեղինակութիւններն և թարգմանութիւնն, քաջալերում են տհաս գրիչներն և գովաբանում թիւը և խակ քննադատութիւններն: Աերջապէս փոխանակ յառաջ մղելու և զարկ տալու Հայ գրականութեան, այսպիսով լետ է նահանջում այն: Ատաբանում են վատ հեղինակութեանց հետ և լաւ ու ընտիրներն և վնասում են միևնոյն ժամանակ ընթերցանութիւնն և տպագրութիւնն:

Սգտակար են քննադատութիւններն, որք յառաջանում են իւրաքանչիւր մասնաճիւղը կատարելագործող անձինքներից, որք ծագում են անաչառ նպատակից և հասուն հմտութիւնից, որոց մէջ խօսում են անհերքելի փաստերն, որոց մէջ փայլում են քննադատի քաղցր լեզուն, համեստ ոճն և ազնիւ ձևերն ու դարձուածներն: Սգտակար են յաւէտ այդպիսի քննադատութիւններն, փասն զի ծառայում են հասարակաց օգտին, ուղղում են հեղինակաց և թարգմանչաց սխալներն և թերութիւններն եթէ կան. և երկրորդ տպագրութեան ժամանակ ամբողջանում են եղած պակասութիւններն:

Սնօգուտ են քննադատութիւններն, որք յառաջանում են թերուսներից, որք թելագրում են անուանարկ պատճառներից, որք ծագում են չար նախանձից և չկամութիւնից, որոց մէջ խօսում են կարծիքներն,

ենթադրութիւններն և կարկատած փաստերն, որոց մէջ շողշողում են ցուցամուրութիւնն, թշնամական ոգին և շպարեալ ճամարտակութիւնն և որոց մէջ փայլում են քննադատների դառն լեզուն, կծու ոճն, հեզնական ձևերն, ծաղրական դարձուածներն և յարձակողական կիրքն: Բոլորովին անպէտք են այսպիսի քննադատութիւններն, որովհետև շարժում են հմուտների ծաղրը, հեղինակաց և թարգմանչաց արհամարհանքը, զարգացեալ ընթերցողաց զգուանքը. սակայն հիացնում, զարմացնում և շլացնում են պարզամիտները...:

Աերջին տեսակիս է վերաբերում և պ. Լէօ-ի «վէպ թէ պատմութիւն» քննադատութիւնն, որն հրատարակուած է ի Շուշի ընդդէմ «Գաղտնիք Ղարաբաղի» գրքին:

Ընթերցողք տեսնելու են մեր գրածների սուղութիւնը սոյն գործի ընթացքում:

Ըստ մեզ՝ սւելորդ էր պատասխանել այդ տետրակին. բայց որովհետև պղտորուած են մի քանի պարզամտաց սրտերն այդ տետրակի ընթերցանութեամբ, որովհետև շօշափուած են մեր պատիւն և վարկն, վասն որոց հարկ համարուեցաւ պատասխանել: Հետևապէս ներկայ ձեռնարկութեանս շարժառիթն է քննադատել պարոնի «վէպ թէ պատմութիւն» քննադատութիւնը:

Արգարև մենք մեր յառաջաբանութեան մէջ գրած ենք. «Գաղտնիք Ղարաբաղի»-ն լոյս տեսնելու արժանի էր թէ անարժան, պատմութիւն է թէ վէպ, ընտէր գործ է թէ յուրի. — այդ վճիռները մենք թողնում ենք հմուտ պատմաբանների անաչառ քննադատութեան և որոշման» («Գաղտնիք» եր. Ժ):

Ներուրի մեզ ասել որ «այդ վճիռները մէնք լուրջաբար ենք հմուտ պատմաբաններին» և ոչ թէ թերուսներին, մենք թողած ենք պատմութեան մասնաճիւղը մշակող անձանց և ոչ թէ անհմուտ մար-

դոց: Սակայն մենք մէջ կբերենք պ. քննադատի առարկութիւնները և մի առ մի կը ջրենք պատմական փաստերով: «Վէպ թէ պատմութիւն» բառերը յաճախ չկրկնելու և գրաշարը ու ընթերցողը չձանձրացնելու համար, չակերտների մէջ կառնենք պարոնի գրած առարկութիւնները, որոց ստորև կնշանակենք և տետրակին թղթահամարների թիւերը: Իսկ ուր ճապաղ է և կարօտ համառօտագրութեան, միայն կգրենք նոցա բովանդակութիւնը, նմանապէս մատնանիշ անելով երեսներէ թիւերը: Ապա կգծենք մեր պատասխանների առաջևից, որպէս զի ընթերցողք գիւրաւ որոշեն մեր պատասխանները առարկութիւններից:

1) «Արցախը չի տուել մի մեծագործ իշխան, կամ մի քաջարի զօրագունդ, որ կարողանար մի մեծ համբաւ հանել: Նա <sup>1)</sup> չունի իր չտուկ պատմութիւնը» եր. 4:

— Քանի բառ կայ այդ սողերում, կան և այնքան պատմական սխալներ: Արցախն մէն մի դարում տուել է «Ֆեծագործ իշխանների և քաջարի զօրագունդեր»: Սիւնեաց Անդոկ իշխանն ո՞ր գնդով կողոպտեց Որմիզդեան Շապուհ արքայի գանձը <sup>2)</sup>: Ո՞ր գնդով պատերազմեց Վաչական Գ-ն Պարսից ահարկու զօրութեան դէմ: Արցախեցի չէին Ջալալեան իշխաններն, որք կառուցին Գանձասարի մեծագործ և հրաշալի վանքը և ըստ կարելոյն կռուեցին Թաթարաց սոսկալի ուժերի հետ: Արցախեցի չէին Հայ մելիքներն և իւրեանց զօրագունդերը, որք քաջօրէն պաշտպանում էին իւրեանց սուրբ

1) Ոչ թէ նա, այն: Նա բառն գործ է ածուում միայն շնչաւորաց համար և ոչ թէ անշունչ երկրի համար, որն հակառակ է հայկական ուղղագրութեան:

2) Պատ. Աղուանից. եր. 82—83 տպ. Մոսկ. 1860:

հայրենիքի ազատութիւնը և անկախութիւնը՝ մաքառելով ժամանակի հոսանաց անդիմադրելի բռնութեանց դէմ: «Ուստի և յորմէ հետէ բարձաւ իշխանութիւնն ամենուստ աշխարհէն Հայոց... ոմանք արք ի Արցախ աշխարհի Մեծին Հայոց... յոյժ սակաւուք արամբք՝ ամբանալով ի լերինս և յանտառախիտ տեղիս, յարձակմամբ և մերթ ի վերայ թշնամեաց հալածականս առնելով՝ հարկանէին և զյոգունս ի թշնամեաց, որպէս և յոլովից յայտ է) զի բազմիցս այնքան տուեալ զմարտ պատերազմի ընդ Տաճկաց՝ մինչ զի՝ հարեալ հալածեն ի սահմանաց իւրեանց ի վերայ յարուցեալ զամենայն թշնամիս և ժառանգեալ զերկիրս իւրեանց՝ որդի ի հօրէ առնելով՝ մինչև ցայսօր ունին զիշխանութիւնս իւրեանց»:

«Եւ արդ՝ իշխանք Արցախ աշխարհին են այսօրիկ. առաջինն՝ որ ըստ նոցա կոչի Մելիք Աղամ. սա է այլ խոհեմ, և քաղաքավար, և քաջ ի պատերազմի և է ինքնագլուխ իշխան: .....Երկրորդն՝ կոչի Մելիք Յովսէփ. նոյնպէս և սա է ինքնագլուխ իշխան: ..... Ուստի զքաջ սպառազէնն և զքաջամարտիկ ախոյեանն Քրիստոսի զովեմ, որ անընդհատ ջանայ և ճգնի ի պատերազմի վասն ի Քրիստոս հաւատոցն» (Վնոր տետրակ) տպ. ի Հնդիկս ի քաղաքն Մատրաս 1772. հեղ. Յակովբ Շամիրեան):

2) «Արցախը հալ ազդին <sup>(1)</sup> չի տուել մի գիտնական կրօնաւոր, մի պատմաբան, մի քաջամարտիկ հերոս, այլ և չի ունեցել մի շատ թէ քիչ նշանաւոր քաղաք» (անդ):

— Ամենամեծ ապերախտութիւն է որդւոց և թոռանց և միանգամայն ծոռանց համար՝ մոռանալով իւր

1) Հայ ազգին բառերն, ըստ այժմեան ուղղագրութեան, գրուելու էր զլխատառով և ոչ թէ փոքրատառով:

րեանց նախնիքների և սրբերի արդիւնալի երախտիք-  
ները և սիրալի յիշատակները: Միթէ Արցախեցի չէին  
Աղուանից 97 կաթողիկոսների շարքում այնքան ըն-  
տիր կաթողիկոսներն, եպիսկոպոսներն և վարդապետ-  
ներն, որք կուուելով ամեն խոչընդոտների և զանա-  
զան աղանդների դէմ, անվթար պահպանեցին մեր ազ-  
գութիւնը, լեզուն, հայութիւնը, կրօնը, դաւանութիւ-  
նը և եկեղեցին և միմեանց աւանդելով հասուցին մեզ:  
Հոգ չէ որ պարօնն ուրանում է իւր նախնեաց և պա-  
պերի արարքները. «Եթէ դոքա լռեսցեն, քարինքդ ա-  
ղաղակեսցեն»: Տակաւին՝ իբրև խօսուս՝ աղաղակում են  
և քարոզում Արցախի վանքերի, եկեղեցիների, մատուռ-  
ների, խաչարձանների և շիրմաքարերի արձանագրու-  
թիւններն Արցախեցի գիտնական կրօնաւորների և քա-  
ջամարտիկ հերոսների արարքները: Սոքա ոչինչ պա-  
կաս գովաբանուած են Աղուանից Կիրակոս, Եսայի կա-  
թողիկոս, Շամիրեանց և Շահխաթունեանց պատմա-  
բաններից: Հարկ է յիշեցնել Գանձասարի լուսաւորու-  
թիւնը 12 — դարում:

Միթէ Արցախեցի չէին Մովսէս Կաղականդուացին  
և Եսայի կաթողիկոսն, որոց յօրինած պատմութիւննե-  
րըն այժմ կան մեր գրականութեան մէջ: Միթէ Արցա-  
խի Փառիս գաւառից չէր Յովհաննէս — Սարկաւազ —  
վարդապետն, որն պատմագրած է Սելճուկեանց, Տուղ-  
րիլեանց, Ալվիսլանայ և սորա որդի Մելիք-Շահի գոր-  
ծերը 1): Թէև կորսուած է Սարկաւազ — վարդապետի  
պատմութիւնն, սակայն հատուածներ առած են սորա  
երկասիրած պատմութիւնից՝ իւրեանց պատմութեանց  
մէջ Կիրակոս, Վարդան և Մխիթար Ալրիվանեցին: Սար-  
կաւազ — վարդապետն, բացի կորսուած պատմութիւնից,  
երկասիրած է

(1) Անչալտացած է այլ պատմութիւնն:

« ձառ յաղագս քահանայութեան ».  
« Ներբողեանք » 1) զորս յիշած է Կիրակոս.  
« Աղօթագիրք » որ գեղուն է իւրաքանչիւր անձանց  
հասակի յարմար խնդրուածքներով »:  
« Պայծառացիր » Ս. Աւետիսեանց շարականը.  
« Ի սարեակն » ևն:

Միթէ « քաջամարտիկ հերոսներ » չէին բարեպաշ-  
տըն — Վաչական Գ. Համամ-իշխանն, Ջիւանշիր իշխանն,  
Ջալալ-Ռօլան, Մելիք-Ադամ Ա., Մելիք-Աբով Գ., Մե-  
լիք-Եսային, Մատթովն, Լազրեն, Կրամովն, ևն. ևն.  
ինչպէս վկայում են պատմութիւններն: Աւելորդ է յուշ  
ածել որ ուու պատմագիրներն անմահացուցած են վեր-  
ջիններն անունները, ինչպէս և Շամիրեանն՝ « հարա-  
զատ » Մելիքների անունները, նոյնպէս և պարսից և  
Ռուսաց պատմութիւններն գովաբանած են Արցախեցի  
Հայ տղամարդ հերոսների քաջագործութիւնները, որք  
փայլած են 1804 — 1826 Ռուս-պարսկական և Ռուս-չե-  
չենեան պատերազմներում: Միթէ Արցախեցի չէին Ա-  
ղունից Ես. կաթողիկոսի մատնանիշ արած 12000-ից  
բաղկացած քաջարի և Հայ զօրագունդն և չորս իւզ-  
պաշիներն:

Արցախն նշանաւոր դարձած է մանաւանդ Ե. դա-  
րուց ի վեր՝ իւր մէջ ունենալով Աղուանից կաթողիկոսա-  
նիստ մայր աթոռը — Ամարասը և Գանձասարը և թա-  
գաւորանիստ մայրաքաղաքը 2) — Պարտաւը և լետոյ Փա-

1) Նմանապէս՝ անչալտացած է:  
2) Վրաց մի պատմիչն ասում է Պարտաւն հիմնուած է  
Հակ-Նահապետի եղբորից — Պարտոսից, վասն որոյ կոչուած է  
Պարտաւ: Իսկ Մ. Կաղականդուացին՝ թէ շինուած է այս քա-  
ղաքն Ե. դարում Պերոզի հրամանաւ և կոչուած է Պերոզա-  
պատ: Պարտաւն աչքբան բարգաւաճած էր վաճառաչահու-  
թեամբ, մինչև անդամ յորջորջուեցաւ Շահաստի շառն: Վասն  
որոյ և շատ բռնաւորք ձգնում էին չափշտակել այն միմեան:

ախ քաղաքը: Արցախն, լինելով Աղուանից երկրի մի մասը, միացրած է և իւր պատմական կեանքը. այնուամենայնիւ պատմաբաններն—Մովսէս, Նսալի և Սարկ. վարդապետ—եղած են Արցախեցի: Արցախն բացի այդ երեք պատմագիրներից ունեցած է և ուրիշ պատմագիրներ, որոց մասին չեմոյ:

3) Պարոնն լաւ հասկացած չէ թէ Աղուանից Նս. կաթողիկոսն ի՞նչ պատճառաւ «Յրանի տալով աչն ժամանակին, երբ Հայաստանի վերայ տիրում էին անօրէն բռնակալները...»: Եր. 7:

— Նսալի կաթողիկոսն չափոնում է իւր դառն ցաւը այն պատճառաւ, որ Վրաց Վախթանկ թագաւորի քրիստոնեայ գորքն Արցախում գործած է այնպիսի բարբարոսութիւններ, որոց նմանը գործած չեն մինչև անգամ ոչ-քրիստոնեայ բռնաւորներն և ոչ-քրիստոնեայ զօրականներն. «միլեկան ազգն Վրաց առաւել անողորմ քան զՎովկասայինսն (Լէկզիններն) սփռեցան ի լերինս և ի ծորակս... գոր ինչ տեսին աչք նոցա» չորքոտանի անասուն, մինչև ի հաւ և ցկատու և ցշուն, իսկ անշընչից ոչ է ասելի, մինչև ի փայտեղէն և պրտեղէն և խցեղէն՝ տարան» Նս. կաթ. եր. 51 տպ. ի Նուշի:

4) «Մեր 1) մամուլը երկար խօսել է Նորա (Ապրէս Բէկնազարեանցի), մասին և արդէն մի պարզ եզրակացութիւն է կազմել» եր. 10.

ցից: Բ. դարում աչ քաղաքին տիրեցին Հագարացիք և լատոզ Պարսիկներն, ժ.Գ. դարու սկզբում՝ Վրացիք, իսկ ժ.Ձ. դարում Օսմանցիք: Այս ամենի մասին վկայում է և Հ. Ղ. Ա. լիշան:

1) Արդեօք ի՞նչ է կամենում հասկացնել՝ ասելով «Մեր մամուլը»: — Եթէ կամի ասել Հայոց Տաճարը, որն պատկանում է Հայ ազգի ամբողջութեան, սխալ է «մեր» բառն, վասն զի մասնաւորում է ընդհանուրի իրաւունքը: Իսկ եթէ կամեցած է ասել Ռուսահայոց Տաճարը, այդ իմաստը չէ արտադրում «մեր»

— Ներուի մեզ ասել որ սարոնն սիրում է խօսել ընդհանուրի կողմից, որպէս զի ոյժ տալ իւր ձեռնարկութեանց: Գուցէ այս անում է նա, որ հեռաւոր ազգայինք, համարելով զինքը մի կշիւ ունեցող անձնաւորութիւն, ընդունէին իւր գրածները իբրև ճշմարտութիւն:

«Մի պարզ եզրակացութիւն է կազմել» միակողմանի խօսող, ենթադրութիւններով, կասկածներով և կարծիքներով միակողմանի վճիռ արձակող Ռուսահայոց մամուլ կէսն: Այն Ռուսահայոց մամուլ կէսն «մի պարզ (բայց միակողմանի) եզրակացութիւն է կազմել» հրատարակելով այն բոլոր գրուածները, որք զէմ եղած են «Գաղտնիք» ին և չհրատարակելով այն ամեն գրուածները, որք կամ ուղղակի պատասխան եղած են հակառակորդաց և կամ՝ պաշտպանութիւն «Գաղտնիք»-ի 1): Իրաւաբանութիւնն երբէք ընդունած չէ և չէ ընդունում միակողմանի եզրակացութիւնը, որովհետև միակողմանի եզրակացութիւնն արտադրում է Տիպոգրֆանի արգարութիւն: Չնշուած իրաւունքն, բռնաբարուած արգարութիւնն և խեղդուած ձայներն երբէք ներած չեն կազմել մի պարզ եզրակացութիւն:

5) «Յիշենք, որ Արրահամի գրաբարը լաւ չէր, վատ էլ

բառն, քանզի կալ և Տաճկահայոց մամուլ: Այդ երկու մամուլներից միայն «Արձագանք», «Արարատ» և «Մշակ» հոգէն էն Տիպոգրֆանի կողմից հիմնեալ կարծիքների, կասկածների և ենթադրութեանց վերայ, «Նոր Գար»-ն ընդունած չէ այդ առարկութիւնները: «Ազբիւր»-ն չէրք է: Իսկ Տաճկահայոց մամուլից «Արևիկը» աչն աստիճան հաւանած է «Գաղտնիք»-ը, մինչև անգամ արտատպած է «Գաղտնիք»-ի մինչև վեցերորդ գլուխը: Բացառաւոր է որ Հայոց մամուլն կազմած է հակառակ եզրակացութիւն և ոչ թէ մի պարզ եզրակացութիւն: Չունիք տեղեկութիւն միւս թերթերից:

1) Այս մասին գործիս վերջում:

չէր և նա պիտի որբագրէր Եղիշէի ոճ ունեցող Ապրէսի հեղինակութիւնը: Ի՞նչպէս հասկանալ այս մէկը:— Ուրիշ մի ճար չկայ, պիտի ասենք որ Մակար վարդապետը կամ Եղիշէի ոճը չի հակասում, կամ թէ, ինչպէս մի ժամանակ արել էր պ. Գուլամիրեանը «Գուլիթ բէկ» պատմութեան յառաջաբանում, այդ «Եղիշէի ոճ» խօսքը մտնել է իր ապրանքը գովաբանելու» եր. 11—12:

— Կարևոր է մէջ բերել «Գաղտնիք»-ի այն հատուածները, որք կապ ունին սոյն հարցը հիմնովին պարզաբանելու համար: «Առաջին հատորն գրուած է Աբրահամ Բէկնազարեանցի թելադրութեամբ և իւր որդու Ապրէս Բէկնազարեանցի գրութեամբ, իսկ երկրորդը՝ Աբրահամ Բէկնազարեանցի կարգադրութեամբ և հօր ու որդու խորհրդակցութեամբ: Այսու ամենայնիւ պատմագրութեան ղեկավարն միշտ եղած է հայրն» («Գաղտ.» եր. Ե.: «Եղիշէի ոճի նման գեղեցիկ գրաբար էին հեղինակից գրուածներն» եր. Թ.: «Սիրելի որդեակրդ իմ Ապրէս, ես ցանկանում եմ որ դու լինիս «Գաղտնիք Ղարաբաղի» հեղինակն... Ի՞նչու բաւականին արագագիր ես, հօգ չէ որ գրածներումդ կը լինին սխալներ, սրբագրելն հեշտ է: Ասածներս կգրես և հետզհետէ լինելիք եղելութիւնները ևս ժամանակազրական կարգով կաւելացնես դորա վերայ և կլինի մի կարևոր պատմութիւն, քանզի այժմ պատմագիր չկայ մեր Հայրենիքում» եր. 140—141: Յայտնի է և այն որ Ապրէսն, իւր հօր մահից յետոյ, միայնակ գրած է միայն «Գաղտնիք»-ի ԾԸ., ԾԹ և Կ. գլուխները: Ապա ուրեմն հեղինակից գրուած՝ այս երեք գլուխներն միայն ունէին Եղիշէի նման գեղեցիկ ոճ: Պատճառն այն է որ, ինչպէս ասում է հեղինակն, ինքն յաճախ կարգացած է Եղիշէն: Սակայն, ինչպէս յայտնի է շատերին, Ապրէսն կարող էր ունենալ Եղիշէի ոճի նման գեղեցիկ ոճ, բայց ունենալ և տառասխալներ: Իսկ Աբրահամն կարող էր

լինել անսխալ սրբագրող և չունենալ Եղիշէի սահուն և սրտագրաւ ոճը: Այսպիսի օրինակներ բազմաթիւ են, հետևապէս անկարօտ և մէջ բերելու:

«Առաջ էր» զոս շէնիք որ նախ վերջացնէ՝ մեր գործը և յետոյ ճաշէն՝ ապահով: Հասարակութեան գործածած խօսակցութեան այս ձևն, ամեն ոք գիտէ, նշանակում է, լաւ էր, լաւ էլինի որ նախ վերջացնէ՝ մեր գործը և յետոյ ճաշէն՝ ապահով, ևն: Տարբերութիւնն միայն ոճի ձևին միջուկն է և ոչ թէ իմաստին: Ապա ուրեմն «Ի՞նչպէս հասկանալ այս մէկը:— Ուրիշ մի ճար չկայ, պիտի ասենք» որ պ. Ղէօն կամ չէ հասկանում իւր կարգացածի պարզ միտքը և կամ ճշնում է պարզամիտներին «մտնել իւր ապրանքը գովաբանելու նպատակով» զինքը իբրև պատմագէտ ծախելով <sup>1)</sup>:

6) Պարոնն առարկում է թէ «Գաղտնիք»-ում նույնութեամբ պահպանուած լինելու էին Արցախի լեզուով և ոճով գրուած բոլոր նամակներն, ևն. եր. 12:

— Երևում է որ սլարոնն ուշադրութեամբ կարգացած չէ «Գաղտնիք»-ի յառաջաբանն, ուր մանրամասնօրէն բացատրուած են թարգմանուելու պատճառներն: «Յանկալի էր նոյն իսկ մեզ նոյնութեամբ տպագրել տալ «Գաղտնիք Ղարաբաղ»-ին: Բայց այն ժամանակ հարկ էր գրքի երկու չափով ծանօթութիւններ աւելացնել՝ Ղարաբաղի գաւառական, բազմաց անմարտելի, բառերը բացատրելու համար: Ով կարգացած է «Արագը տարին կտարի» (և «Պըլը-Պուղի») գիրքը՝ նա լիովին կը համագուլի, որ Ղարաբաղի գեղջիկական բարբառով և ո-

1) Յատկապէս խնդրում ենք բարեմիտ ընթերցողաց ներողամտութիւնը, որ հակառակ մեր սկզբունքին, գործ ածեցինք պարօնի բառերը: Խնդրում ենք և պ. Ղէօնից չնեղանալ մեզանից, որ վերագործնում ենք իրան՝ իւր՝ մեզ զէմ ուղղած բառերը:

ճով գրուածներն անմարտելի կերակուրներ են ո՛չ միայն արտաքոյ Ղարաբաղի Հայ Հասարակութեան, այլ և նոյն իսկ գիտնոց 1): Ահա և բուն իսկ հեղինակի ինձ ուղղած խօսքերն. «Հիմի ձեզ եմ նուիրում «Քաղտնիք Ղարաբաղ»-ին: Գուք նախ դորա լեզուն աշխարհաբար փոխեցէք և ապա հրատարակել աուէք, որպէս զի դիւրըմբընելի լինին դորա իմաստներն Հայ Հասարակութեան: Հիմի գրականական լեզուն աշխարհաբարն է և ոչ թէ գրաբարն, որ շատերին անհասկանալի է» («Քաղտնիք»):

Եթէ Գեր. Հ. Ալիշանեանի նման հմուտ անձին «շատ բառ անհասկանալի մնաց» Արցախի գեղջկական բարբառից և այն բառարան ունենալով հանդերձ, անհրմուտների համար որպէս կլինէր: Եթէ «հարկ էր գըրքի երկու չափով ծանօթութիւններ աւելացնել», որոց վերայ բարգել և մեր ծանօթիւնները, զորս տեսած են ընթերցողք, որչափ կը մեծանար գիրքն և ո՞վ կվճարէր նորա տպագրութեան ծախքը և թնչպէս դիւրամատչելի կլինէր այն Հայ Հասարակութեան, քանզի խիստ թանկ կլինէր:

Աւելորդ է յուշ ածել որ արդէն աշխարհաբար թարգմանուած են մի քանի պատմութիւններ և գուցէ շատ չանցած, հետզհետէ կթարգմանուին և միւսերն: Եթէ մենք եղած լինէինք մարգարէ և դուշակած լի-

1) Այստեղ գրում ենք մի հատուած այն նամակից, որը Գեր. Հ. Ա. Ալիշանեանն զրած է մեզ: Խճդրում ենք Նորին Գերապատուութեան ներողամտութիւնը որ առանց կանխաւ ստանալու իւր հաճութիւնը, համարձակեցանք հրատարակ հանել: «... Բայց խոստովանիմ բարքս, որ չեմ ուզեր որևէ վիպասանութիւն կարդալ, սակայն ընդգէմ սովորութիւնս կարդացի զԱրաղն («Արաղը տարին կտարի») և խղճացի թիւնուն վրայ... Թէպէտև բառարան մ'ալ գրեր էք վերջը, բայց դեռ շատ բառ ինձ անհասկանալի մնաց»:

նէինք բնագրի կորուստը և ոմանց զրաբանութիւնները, բնաւ թարգմանած չէինք լինիր: Բայց եթէ չթարգմանէինք և բնագրի հետ կորսուած լինէր և չթարգմանուած աշխարհաբարն, միթէ փոքր վնաս եղած կլինէր Հայ մատենագրութեան, քան թարգմանուելով և ի միջի ունենալով գէթ աշխարհաբարը: Արդեօք այս կէտի վերայ լաւ խորհած են «Քաղտնիք»-ի թշնամիներն:

«Քաղտնիք»-ի բնագիրն նահատակուած է գրութար «Քաւթթ բէկի» նահատակութեամբ, որի բազմաշխատ հեղինակն գրում է ցաւօք սրտի. «Այլ զայս ամենայն արդիւնս տասնամեայ երկանց իմոց սրբապիղծ ձեռն մի անանուն յափշտակեաց ի միում վայրկենի և եթող զիս ի խոր տրտմութեան» (Կար. վ. Շահնազարեանց, յառաջ. պատ. Ղևոնդ վարդապետի): «Քաղտնիք»-ի անյայտացած բնագիրը ձեռք բերողն, գուցէ, որոշած է հրատարակել տալ մեր մահից յետոյ, ինչպէս արած է (ըստ ասութեան բազմաց) «Քաւթթ բէկ»-ին յափշտակողն: Բայց երբ տեսած է և լսած որ «Քաղտնիք»-ի աշխարհաբարն արդէն պատրաստ է, սկսած է տարածել անուանարգ, պատուաղարտ և թշնամալի լուրեր, իւր նպատակին չհասնելու պատճառաւ: Պատճառն այդ նպատակը խափանելն էր, որ մենք թոյլ տուինք փութով հրատարակուիլ «Քաղտնիք»-ի աշխարհաբարի բովանդակութիւնն («Մեղու»-ի միջոցաւ, որից անմիջապէս յետոյ բորբոքուցան կատաղի թշնամութիւններն:

7) «Աղուանից կաթողիկոսներին հաստատում էին պարսից շահերը 1), որոնց հրովարտակները կարելի է տեսնել Սարգիս Կպիսկոպոս Զաւալեանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» գրքի վերջում (Մասն Բ. էր. 180—495):

1) Գրելու էր զլիսատառով Պարսից և ոչ թէ փոքրատառով: Այսպէս գործածուած է և շատ տեղերում, ինչպէս են վրաց, աղուանից, ևն. չատուկ անուներն:

Այնտեղ կալ և ֆանահ խանի մի «Բարձր հրամանը», որով Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին խանը հաստատում է այդ պաշտօնի մէջ և պատուիրում է Ղարաբաղի ժողովրդեան նրան (կաթողիկոսին) «ամենայն կերպիւ ընդունել կաթողիկոս և մեծ»: Մի այդպիսի հրաման տուել է և Շամախու Մամատ Զաչիտ խանը 1) : Մելիքները Ղարաբաղի աէրերն էին, ասում է «Գաղտնիք»-ը, բայց եթէ այդպէս է, ինչո՞ւ թուրք խաներն էին կաթողիկոսին հաստատում» եր. 14—15):

— Կարևոր է մէջ բերել այդ երկու հրամանագրերը, որպէս զի ընթերցողք ևս կարողանան կազմել մի պարզ և որոշ գաղափար՝ բողոքատելով պարսնի գրածը այդ հրամանագրերի մտաց հետ:

« Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Է Բ Ա Ր Ձ Ր 2 ) .

Բարձր հրաման է զի .

Որովհետև ի նախնի արքայութեանաբնակ Սաֆաբիա արքայից) զոր տէր Աստուած զհանգիստս ծաղկօք փայլեսցէ) զհնազանդելի հրովարտական տուեալ կաթողիկոսութիւնն և գլխաւորութիւնն հասարակութեան հայոց Ղարաբաղու, Շիրվանու, Կեանջայու և Աղուանստանու հանգուցեալ Յովհաննէս և Գրիգոր կաթողիկոսացն, զկնի վախճանման վերջնոյս՝ Ներսէս կաթողիկոսին կրկին յանձնեալ էր) բայց որովհետև յիշեալ Ներսէս կաթողիկոսն հասեալ էր ի յալիս ծերութեան և այժմ լսելի եղև թէ վախճանեալ է նա, առ այս պարտէ յամենայն ժամանակի անձն մի լինել, որ ի տէր կաթողիկոս այժմ ընտրեալն ի Հայոց Յովհաննէս կաթողիկոսն որդի Մելիք բէկի ի 25 շապան ամսոյ, ի

1) Ըստ օրինի գրուելու էր, Մամատ Զաչիդ-խանն, ինչպէս պահանջում է այդ այժմեան գրականական կանոնն:

2) Գրեթէ այս ձևով գրուած են Պարսից Շահերից Աղուանից կաթողիկոսներին շնորհած հրովարտակներից շատերն:

Թուականին Տաճկաց 1176 յանձնեցաւ կաթողիկոսութիւնն, վասն որոյ հասեալ հրամանիս պարտ է նա կաթողիկոսական գործն կատարելով՝ ստանայ ամենայն ամի զամենայն հասանելիսն ի միջի նշանակեալ հրովարտական Սաֆաբիա արքայից) և առ ի վատնել և ծախել զայնս վասն հարկաւոր պիտոյից իւրոց. ո՞վ հասարակութիւնք յիշեալ գաւառացն, ի ֆրիստոնէից ընտրեալ Մելիք-բէկի որդւոց Յովհաննէս կաթողիկոսին Աղուանստանու, ամենայն կերպիւ ընդունելով զնա կաթողիկոս և մեծ, և զամենայն հարկաւորութիւնսն յիշեալ գործոց համարելով նմա՝ ի խորհրդոց և ի բանից նորա մի ելանիցէք, զպատիւ և զյարգութիւնսն արժանի համարեսցիք և ընդգէմ հրամանի նորա ոչ կայցէք և համարեսցիք ըստ ամենայնի ձեզ պարտաւորութիւն. զբեցաւ ի 25 շաբան ամսոյ 1176 ամի Տաճկաց):

(11098)  
65-25032-55  
22032-55

Տ. Կ.  
Փանահ - խանին:

« Այժմ քրիստոնէից ընտրեալ Աղուանից և Գանձասարու վանիցն Յովհաննէս կաթողիկոսն ներկայացաւ մեզ, և իւրեան խորհուրդներն մեզ յայտնեց, և Սաֆիբայի թագաւորաց հրովարտակներին կեօրայ, Աստուած նոցա ողորմի, Գանձասարու վանից և Աղուանից կաթողիկոսութիւնն նոցին նախնեացն պատկանեալ է, և է այժմ. և յիշեալ հրովարտական և հրամանաց կեօրայ կրկին մեր բարձր կողմիցն էլ վերոյիշեալ կաթողիկոսի մասին և հրաման էլաւ մեր կողմիցն, որպէս հարկ է իւր կաթողիկոսութեան գործերումն ջանք անի և Հայոց գիւղորէից և նոցա գլխաւորաց հրաման



լինի, որ Յովհաննէս կաթողիկոսին ձեր հաստատ կաթողիկոս իմանալով և նորա պատկանելի արգելենքն նորա յանձնէք:

Գրեցաւ ջամատիա սանի 1177 թուին Տաճկաց:

Մամատգալիտ-խան Շամախու»

**Տ. Կ.**  
Մամատգալիտ-խան.

Աղուանից երկրի իւրաքանչիւր նոր գահակալող հոգևոր գլուխ ուղղակի Պարսից ժամանակակից Շահիցն էր ստանում իւր կաթողիկոսական հրովարտակը: Շահերի ներկայացուցիչներն էին խաներն, որոց ներկայանում էր նորընտիր կաթողիկոսն և ցոյց տալիս շահական հրովարտակը: Խաներն տալիս էին կաթողիկոսին մի մասնաւոր հրաման, որն հիմնուած էր լինում հրովարտակի «բարձր հրամանի» վերայ: Այդ մասնաւոր հրամանով, իւրաքանչիւր խան պատուիրում էր, միայն իւր իրաւասութեան տակ եղած ժողովրդեան՝ *հաւու-դեհու-ճանաչել* նորընտիրը և հնազանդել նմա: Ինչպէս յայտնի է, այս իմաստով գրուած է Շամախու խանին մասնաւոր հրամանն: Բայց որովհետև բնաւ խան նստած չէր Արցախում, ինչպէս վկայում է պատմութիւնն. որովհետև ամբողջ Արցախի տէրերն էին միայն Հայ «հարազատ — Մէլիքներն», որք վարած էին և վարում էին մարմնաւոր իշխանութիւնը և որք հաստատուած էին նոյնպէս Շահերիցն. որովհետև օրինաւոր խան չէր Փանահն, այլ ինքնակոյ, ապօրինի և հակառակ նոյն իսկ Պարսից Շահերին, վասն որոյ երբէք խան չճանաչուեցաւ այդ Փանահն ո՛չ Յովհաննէս «հարազատ կաթողիկոսից» և ոչ «չորս հարազատ Մէլիքներից»: Նոյն իսկ Փանահի հրովարտակից պարզ յայտնի է, որ Աղուանից Յովհաննէս կաթողիկոսն զինքը խա՛ն ճանաչած, բնաւ

առ ինքն դիմած և իրանից պահանջած չէ այդ հրովարտակը, ինչպէս դիմած է այդ կաթողիկոսն Մամատգալիտ-խանին՝ իբրև Պարսից կառավարութիւնից հաստատուած օրինաւոր խանի: Առաջի խանն գրած է. « և այժմ լուչի եղև թէ վախճանեալ է նա (Ներսէս կաթողիկոսն): Իսկ երկրորդ խանն. «Այժմ Քրիստոսէից ընդլալ Աղուանից և Գանչասարու վանիցն Յովհաննէս հաւու-դեհու-ճանաչեալ ներկայացաւ Տեղո: Ակներև է որ Յով. կաթողիկոսն դիմած և հրովարտակ խնդրած չէ Փանահից, այլ սա իւրովի գրած է և կաթողիկոսին զրկած այն: Փանահն տեսնելով որ Արցախի մէջ նստող Աղուանից հոգևոր գլուխն չգիմեց առ ինքն և չպատուեց զինքը իբրև օրինաւոր խան, դիմած է այդ հնարագիտութեան — գրած և զրկած է այն հրովարտակը: Եթէ կաթողիկոսն անգամ կամենար ներկայանալ այդ խանին, անկարող կը լինէր, քանզի Արցախի բուն տէրերն էին «չորս հարազատ Մէլիքներն», որք թշնամի էին Փանահին: Կաթողիկոսն, որ նոյնպէս թշնամի էր այդ խանին, չէր կարող ընկնիլ չորս Մէլիքների աչքից և յանգզնիլ զիմել մի մարդոյ, որ օրինաւոր խա՛ն չէր, այլ ինքնակոյ: Արեմն յայտնի է որ Փանահից գրուած հրովարտակն իբրև անպետք թուղթ մնացած է Շահական հրովարտակաց մէջ, որն, միւս հրովարտակաց հետ 1840 թուին փոխադրուելէ հայերէն, որոնցից ընդօրինակած է և Սարգիս սրբազանն:

Երբ համեմատուի Մամ. Զայ. խանի հրամանաթուղթն Փանահ-խանի հրովարտակի հետ, երևան կելնէ ամենամեծ տարբերութիւն: Առաջնոյն գրածն ունի համեստ և խա՛նայն ձև, իսկ վերջնոյնն՝ Շահական: Շահական հրովարտակներն, որք տպուած են Ս. Եպիսկոպոսի գրքի վերջում, իւրեանց ճակատներին կրում են հետևեալ վերնագիրը. «ԱՍՏՈՒԱԾ Է ՀԱՍՏՍ. ԻՄ ԲԱՐՁՐ ՀՐ-

ՐՈՎԱՐՏԱԿՆ» 1): «ՀՐԱՄԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ Է»: «Բարձր Հրաման Ապիւլ Միւզգաֆար Եաղուբ Բհատուրին 2): «ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ Է»: Թահմազ Բհադր 3): (Ա. Շահ-Թահմազ): «ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ Է : Բարձրագոյն Հրաման էլաւ 4): «ԱՇԽԱՐՀ ՀՆԱԶԱՆԳԵԼԻ ՀՐԱՄԱՆ ԷԼԱԽ 5): «ՆԱ Է ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ. ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ Է 6): «ԱՍՏՈՒԾՈՅ Է ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆՆ 7):», «Աստուծոյ է Լաֆաւորուլիւն 8):»: Հարկ է յիշեցնել, որ բացի առաջին երեք Շահերից տրուած Հրովարտականերից՝ միւս բոլոր Հրովարտակաների տակ կան և ժամանակակից վերջերի և խորհրդականների ստորագրութիւններն: Կարևոր է յուշ ածել նաև որ մէջ տեղ չկան Աղուանից մի քանի կաթուղիկոսների Հրովարտականերն, ինչպէս են Քոլատակցի Արիստակէս Գ. Արաշեցի Մելքիսեթ, Քոլատակցի Սիմէօն Գ. Ջալալեան Երեմիա Բ. Հրովարտականերն:

Մենք դիտմամբ մէջ բերինք այդ Շահական Հրովար-

1) Ջհան-Շահից տրուած Աղուանից Մատթէոս կաթուղիկոսին և Յով. կաթուղիկոսին: Սա ի թիւս այլ իշխողաց հրամայում է և Մէլիքներին, բեխաներին (գիւղապետ), զօրապետներին, ևն. հնազանդիլ այդ կաթուղիկոսներին:

2) Եաղուբից Աղուանից Շմաւօն կաթուղիկոսին տրուած:

3) Սորանից » Գրիգոր » »:

Այստեղ չիշուած է որ խոչնեն Աղուանից մի գաւառն է, թէ Շմաւօնի չաջորդն եղած է Սարգիսն և թէ այս Գրիգորն եղած է սոյն Սարգսի եղբայր Մեհրապ բէկի որդին:

4) Ա. Շահ-Ապասից Յովհաննէս Թ—ի տուած (Աղուանից կ.):

5) Շահ-Սեֆուց տրուած Աղուանից Գրիգոր կ., որի նախորդն էր Յովհաննէս:

6) Բ. Շահ-Ապասից տրուած Աղուանից Գրիգոր կաթ.:

7) Բ. Սեֆուց » » Պետրոս կաթուղիկոսին:

8) Շահ-Սուլթան Հիւսէյնից Եսալի կաթուղիկոսին:

տակաց վերնագրի ձևերը, որպէս զի ընթերցողն շօշափէ, տեսնէ, համոզուի և վճռէ, որ Փանահն բնաւ իրաւունք չունէր տալ Յովհաննէս կաթուղիկոսին Շահահն և վերջերիս յարուլ չեւիլ հրովարտիչ. վասն զի «ԱՍՏՈՒՄ Է ԲԱՐՁՐ. ԲԱՐՁՐ ՀՐԱՄԱՆ ԵՂԵԽ» խորագրերն, որ յատուկ էին միայն Շահերի և սոցանից Հրամայուած վեղիւնների՝ երբէք իւր իրաւունքն չէին, մանաւանդ մի «ճըւ-խանի»...: 1763 թուին Աղուանից երկրի վերայ կաթուղիկոս հաստատուեցաւ Ջալալեանց Յովհաննէսն: Միւսնոյն թուականում գրած է և Փանահն այդ ամբարտաւանութեամբ և հպարտութեամբ լի Հրովարտակը և միւսնոյն թուականում փորահար սպանմամբ պատժուած է Եիրազում Ջինդ-Քեարիմ-խանի (Շահի) հրամանաւ: Ինչպէս լսվում է, աւանդութեամբ ասում են թէ Փանահն պատժուած է իւր այդ յանդգնութեան պատճառաւ, մանաւանդ երբ սա Արցախի անգամ տէրն չէր և յանդգնած էր գրել իւր հրովարտիչն մէջ «Ղարաբաղու, Եիրվանու, Կեանջալու և Աղուանստանու» ընդհանուր բառերը, որք նոյնպէս յատուկ էին միմիայն Շահերի և վեղիւնների «Բարձր» Հրամաններին:

Միւսնոյն թուականում Եիրազից Շուշի եկած է Փանահի որդի Իբրահիմն իբրև խան, սա ևս իրաւունք ունեցած չէ Հրամանագիր տալ Արցախի հասարակութեան, որ հնազանդուէր իր կաթուղիկոսին: Սմա անգամ ո՛չ հնազանդուած են և ո՛չ խան ճանաչած են Աղուանից Յով. կաթուղիկոսն, Արցախի չորս «հարազատ Մէլիքներն» և «հարազատ-ժողովուրդն»: Եւ միթէ այս իսկ չէ պատճառն, որ հասարակամ Յովհաննէս կաթուղիկոսն զեղակուր նահատակութեամբ զոհ եղաւ սոյն «ճըւի» գաւառանութեան, իսկ Մէլիք-Բախտամն անքորուեցաւ ի Պարսկաստան: Այսու ամենայնիւ սոյն խանն ստացաւ Հայ քաջերից իւր արժանաւոր պատիժը: Հայրն

փորձահար սպանմամբ պատժուեցաւ, իսկ որդին գլխատմամբ:

8) «Մի շահի<sup>1)</sup> ստորագրեալ Փանահ-խանը իրաւունք է ունենում ըստ իւր հաճութեան Ղարաբաղում մի աւելորդ մելիքութիւն էլ հաստատել (Խնձորստանում): Բուն մելիքները չեն բողոքում այդ իրողութեան դէմ Շահին և վերջինս statu quo-ի խանգարման ուշադրութիւն չի դարձնում: Եւ զարմաճալի էլ չի սա (այս): Մի անկանոն ասիական կառավարութիւն չի կարող ձեռքի տակ ունենալ կանոնաւոր (և) եռապետական իշխանութիւններ, որոնք չէին հիմնուած դաշնադրերի վերայ» եր. 15:

— Պարոնի այդ տողերն հակասում են միմեանց, առաջի ասածներն ջրուում են վերջիններից, իսկ վերջիններն՝ առաջիններից: Եթէ արդարև «անհոն» էր Պարսից կառավարութիւնն, աւելորդ էր բողոքել, քանզի անկանոն կառավարութիւնն ո՛չ կլսէր այդ բողոքը և ո՛չ կվերականգնէր նախկին կարգը:

Ո՛չ թէ Պարսից կառավարութիւնն աւերեց Հայաստանը, այլ Վասակ Սիւնին և սորա փեսայ Վարազվազանն և Մեհրուժան Արծրաւնին. ո՛չ եթէ Յոյներն գըրաւեցին Անին, այլ Վեստ—Սարգսի մատնութիւնն: Ահա սոյն պատմական փաստերն, Արցախի պատմութիւնըն և աւանդութիւնն ապացուցանում են որ ո՛չ եթէ Փանահն խանն իրաւունքով «հաստատել» էր Խնձորստանի մելիքութիւնը, այլ այդ գործը գլուխ բերին Մելիք-Շահնազար Գ-ի և Միրզախանի տիրանենգութիւնն և ազգամատնութիւնն: Այս հաստատում է և Յակովբ Շամիրեանն, որ սոյն թուականից 115 տարի առաջ գրած է. «Թէպէտ մեք ևս եղաք զոյն ինչ խուղելոյն հետագօտութեամբ իրագրած, սակայն գրեթէ զեղելոյն բա-

1) Արցախի լեզուաւ նշանակում է 5 կոպէկ. հարկ էր գրել. Շահի:

ցատրել վասն ամօթոյ լուեցաք» (աՆոր տետ.» եր. 119):

Արդեօք պարոնն կարո՞ղ է երաշխաւորել որ Եւրոպայի անհոն-արեալ Տէրութեանց մէջ պատահած չեն և նոյն իսկ մեր օրով չեն պատահում այդպիսի անկարգութիւններ, որոց առաջքը առնելու անկարող են գտնուում մինչև անգամ ամենազօրեղ Պետութիւններն: Անհրաքելի ապացոյցներ են Բուլղարիայի, Մահալու և սորա յաջորդների հանրաճանօթ լեղափոխութիւններն, ևն: Թէև այնքան զօրեղ բողաքարկուներ կան, թէնչ պատճառաւ չեն վերականգնում statu quo-ն: «Խորհուրդս այս մեծ է» բայց ես ասեմ ի քաղաքականութիւն և ի քաղաքագիտութիւն:

Նմանապէս պարոնն թէնչ փաստով է ապացուցանում որ Արցախի մելիքներն բողոքած չեն Փանահ և Իբրահիմ-խաների անիրաւ արարմանց դէմ: Եթէ արդարև մելիքներն բողոքած չեն, ուրեմն թէնչ պատճառաւ հետզհետէ Արցախ արշաւեցին պարսկական զօրքով Ուրմեցի Փաթալի-խանն, Ներքինի-Շահի հայր Մամատ-Հասան-խանն և նոյն իսկ Սյա-Մամատ-Շահն: Մորթա ամեն անգամ եկած ժամանակ, ո՛չ եթէ Հայոց հետ պատերազմած են, որ ընդդիմացած չէին, այլ պատերազմած են նոյն իսկ այդ «ճրուերի» անկարգութեանց դէմ՝ ինչպէս յայտնի է պատմութիւններից:

9) «Չամչեանը (Հատ. Գ. եր. 793) ասում է թէ երբ պ(Պ)արսից զօրքը պաշարել էր Գաւիթ-բէկի վերջին ապաստանարանը, Հալիձոր բերդը (1726), (Պարսից զօրաց) հետ միացան ի թիւս այլ հայերի և բաղմաթիւ հայ քաջեր Արցախից, որոնք կուում էին Գաւիթ-բէկի դէմ» եր. 17:

— Խնդիրը պարզելու համար՝ կարևոր է մէջ բերել Մ. վ. Չամչեանի մի այլ հատուածը, որով աւելի աչքի է ընկնում նորա սխալն. «Այսպիսի յաղթութեան գործս (Գաւիթ-բէկի) լուեալ և այլոց հայոց՝ որք բնա-

կէին յայլևայլ գաւառս) ի Գողթն, ի Ջահուկ, ի Կենա-  
ւուզ և յայլ տեղիս աշխարհին Սիւնեաց և Արցախոյ,  
գալին առ Դաւիթ ի զօրաւորագունիցն, և միաբանէին  
ընդ նմա. և եղև թիւ զօրաց նորա երկու հազար: Եկն  
առ նա և թորոս իշխան Չալնդուրոյ՝ յերկրին Արցախոս  
Հատ. Գ. եր. 786:

Այսօր ամեն ոք գիտէ որ «Չալնդուրն» Արցախում  
չէ, այլ Մեծ-Սիւնեաց մի գաւառն է. սակայն Չամչեա-  
նըն սխալմամբ այդ գաւառը ընծայում է Արցախին:  
Այսպիսի սխալներ պահաս չեն Չամչեանի պատմութեան  
մէջ: Ուրեմն ոչ եթէ Արցախէցի հայ քաջերն միացած  
են Դաւիթ-բէկի թշնամեաց հետ, այլ Պէրկիշատի հա-  
յերն, որ ի ստորև:

Փնաք և պատիւ պ. քննադատին, որ այդպիսի  
թիւրիմացութեամբ մրոտում է իւր պապերի քաջու-  
թեամբ փայլած անունները և նոցա անաղարտ պա-  
հուած պատիւները: Տեսէք թէ Արցախի տղամարդոց  
քաջութեան մասին քնչ է պատմում Սրապիօն<sup>1)</sup>-պապին  
Նաղուբ-խանին. «Դաւիթ-բէկի զօրանալն երբ հռչա-  
կուեցաւ... Փոքր-Սիւնեաց աշխարհէն և ևս քաջ մար-  
դիկ եկին միաւորեցան նորա հետ» (1877-ի «Արարատ»  
եր. 413): «Արցախական երկիրն ի միջին դարուց և այ-  
սըր Խաչենք կոչի, որև Փոքր-Սիւնիք» (Հ. Ալիշան ի  
«Մեծն Հայաստ.» աշխարհ. եր. 86):

Յայտնի են Մեծ-Սիւնեաց գաւառներն, որք են Սի-  
սեան, Չանկեագօր, Կենաուազ, Բաղք կամ Ղափան,  
Մեղրի, Չաւնդուր և Պէրկիշատ: Հետևապէս եթէ պ.  
քննադատն եղած լինէր պատմագէտ և աշխարհագրա-

<sup>1)</sup> Սրապիօն-պապին Կենաուազ գաւառի Սրապիօն-իշխա-  
նի թոռն էր, որ նախ բնիկ բնակիչ էր Մանլին գիւղի, իսկ  
քննիչ փոխադրուած էր Տաթև:

գէտ, հարկաւ ուղղած կլինէր Մ. վ. Չամչեանի սխալ-  
ները և ոչ թէ իբրև ճշմարտութիւն ընդունած և իբր  
փաստ մէջ բերած:

Իսկ Դաւիթ-բէկի յաղթուելուն, զօրաց տկարանա-  
լուն և Չաւնդրի իշխան և զօրավար-Թորոսի նահատա-  
կուելուն բոլոր պատճառները Սրապիօն-պապին վերագ-  
րում է Երեցվանիկցի Ֆռանգիւլ-իշխանին և զօրավարին,  
որն ուրանում է հայութիւնը և քրիստոնէութիւնը,  
իւր կողմն է շրջում իւր սեպհական երկու հազար Հայ  
զօրքը և իւր բարեկամ, մի քանի իշխան հայեր, միա-  
նում Մեծ-Սիւնեաց դրացի, բայց թշնամի, մահմետա-  
կան խաների հետ, որոց առաջնորդում է ամեն պատե-  
րազմներում, որ Դաւիթ-բէկի դէմ, և մեծապէս վնա-  
սում Դաւիթ-բէկի անկման: Տես նոյն թիւ «Արարատ»-ի  
445—ցվերջի երեսները:

10) «Խնածախցի և Պալուճեցի ալիւր տանողները այդ  
պատերազմում կոտորել են... 4770 մարդ. ամեն մի հայ 55  
մարդ է կոտորել, ասում է հեղինակն և հալերից ըստ երևու-  
թիւն ոչ ոք չի սպանուել: Ահա ձեզ մի գեղեցիկ առաս-  
պել» եր. 19:

— Այդ տեղ մի աւուր մէջ հինգ անգամ կըկ-  
նուած է պատերազմն և «հայերից» սպանուած են եր-  
կու մարդիկ, բայց պարոնն տեսած կամ ուշագրութեան  
առած չէ:

Պատմութիւններն վկայում են, որ սկանաւոր յաղ-  
թութիւններն և դիւցազնական քաջազորութիւններն,  
չարաչար յաղթուելն և բազմաթիւ կոտորուածներն  
միշտ կախուած չեն զօրքի բազմութիւնից կամ սակա-  
ւութիւնից, այլ ուժի զօրութիւնից, սրտի աներկիւղու-  
թիւնից, բանակավալրի նպաստարար դիրքից, փորձառու  
հմտութիւնից, համամիտ և համակամ միաբանութիւ-  
նից և վստահ յարձակումից, իսկ ընդհակառակն ներ-  
հակ հանգամանքներից:

Սամսոն, ձեռներն ետևն կապտուած, կոտորում է այդ կապը՝ իշի մի չոր ծնօտով սպանում հալար փղըշտացի և ինքն ողջ մնում:

Բաղրատունի Սմբատեան քաջն—Սշոտ միայնակ յարձակում է զինքը շրջապատող թշնամու վերայ, որից կոտորում «Էրի հինգ հարի-ր» մարդիկ և ինքն մընում անվնաս: (Վարդան Բարձր. եր. 105—106 տպ. Մոսկ.):

Պարսից զորավար—Մեհրան-Շապուհն տեսէք թնչ է պատմում իւր Վաղարշ թագաւորին Հայոց զորավարի և զօրաց քաջութեան մասին. «Բայց զմիոյ աւուր գործըն (Վահանայ Մամիկոնէի) ես իսկ չիշեմ որ անդ էի, սակայն նոր համարիմ և ի վեր քան զմարդկան իրս, թող թէ որ լսէ, զիմարդ կարէ հաւատալ: Քանզի (Վահան) թուով երեւոտն արամբք ի վերայ երկի հալարաց առն (Պարսից) յաներկիւղս յարձակեալ, և զայսպիսի գործ վճարեալ, զոր ամենայն որ անդ էին տեսողքն՝ այսօր չիշեն, թուի թէ երկիւղ գործոյն չելանէ ի մտաց, զի և ոչինչ այլ իմիք նման չէին այն նորոգ իրք, բայց եթէ յորժամ ժիր մշակք քաջք սուր մանգաղաւ և գերանդեաւ զխոտ հարկանիցեն և բազում որայս մօտ ի մօտ առ միմեանս կուտեալ թողուցուն, և ինքեանք ուրախալից ցնծութեամբ անհոգ իւրաքանչիւր տունս գնացցեն, ստոյգ ըստ այսմ օրինակի յարձակեալք ի վերայ Միհրանայ այնքան արամբք հերձեն վեր ի վայր զբովանդակ գունդն (Պարսից), և շատ լաւ որեար կոտորեցին: Եւ զահաւոր այրն զԳրիհնոն զՍիւնեաց տէրն սպանին»: Յետոյ աւելացնում է թէ այդ երեւոտն հայերըն այդ անհաւատալի յաղթութիւնից և կոտորածից վերջն անվնաս անցան, գնացին ուրախութեամբ: (Վաղար Փար. 483—486. տպ. ի Վենետ. 1873):

Հայոց քաջ զորավար Վասակ Մամիկոնեանն, իւր

Հայ քաջ զօրքով, թնչալէս Հայ մարդ գլուխ կոտորեցին հարի-ր պարսիկ. (Փաւս. Բիւզ. Գպրութ. Գ. գլ. Լ.) և Հայերից ոչ ոք չվնասուեցաւ:

Գաւիթ Կիւրապաղատն, իւր 3000 աղեղնաւորներով և 2500 հեծելազօրքով, կոտորեց, ցրուեց և հալածեց Սրաբացուց հարիւր հազարից բաղկացած բանակը, որ իջած էր Սպահնեաց դաւառում, և գերի առաւ թշնամու զօրավար Մամլան-Սմիրայետի կիւր. «Մատ. Ուռ. եր. 44—45. տպ. յԵրուսաղէմ):

Լևոնեան Թորոս Բ-ն, տասն և երկու ձիաւորներով և մի քանի Հայ տղամարդիկներով, Ռաբանի ճանապարհի վերայ կոտորած է երէք հալար թուրքեր: («Սիւսուան» եր. 53):

Վերոյգրեալ պատմական փաստերն ապացուցանում են, որ Խնածախցի և Պալլուճեցի քաջերի, մարդ գլուխ 55 պարսիկ սպանելն ոչ եթէ «գեղեցիկ առասպել» է, այլ գեղեցիկ տղամարդութիւն և սքանչելի քաջագործութիւն:

11) «... աշխարհիս ո՞ր հասարակ զօրավարն անգամ կը համաձայնի 7000 զօրք ուղարկել երկու ողորմելի զիւղ (Խնածախ և Պալլուճա) կործանելու» եր. 20:

— Երբէք զարմանալի երևոյթ չէ մեր մէջ, որ պատմութիւն չիմաստասիրողն և պատերազմական հանգամանաց պահանջների վերայ ստոյգ գաղափար չունեցողն համարձակ հանդիսանում է պատմական և պատերազմական իրողութեանց քննադատ, այլ զարմանալին այն է, որ այդպիսիներն գովաբանում են միամիտ խմբագիրներից:

Հայոց Պապ թագաւորի յաջորդ՝ Վարազդատ թագաւորն և նախարարներն մտադիր էին սպանել զՄուշեղ զօրավար Մամիկոնեանը, սակայն սաստիկ վախենում էին Մուշեղից—միայն մի մարդից. «քանզի յոյժ երկնչէին

ի նմանէ: Թէ զգալ, ասէին... ոչ ոք կարէ զգէմ քաջութեան նորա առնել: Ապա որոշուում է սիրահրաւէր ընթրեաց վերայ կատարել այդ եղեռնագործութիւնն: Մուշեղի արբած ժամանակ յարմար միջոց համարելով վեց քաջ տղամարդիկ բռնում են նորա աջ և վեցն՝ ձախ բազուկը, իսկ Բատ Սահառունին թրով գլխատում է զՄուշեղը: (Փաւս. Բիւզ. Դպ. Ե. գլ. 16.):

Բուղա-ոստիկանն զրկում է հրոսակներ, որ բռնէին և իրան բերէին զՍիսական Վասակ-իշխանը, որն փախած գնում էր Կոտայս գաւառի կողմերն: «Իբրև զհետ կրթեալ հասին հուպ իշխանն հէնք հրոսակին, ապա ընդ կռուին դարձեալ նորա (Վասակայ) առ ի գործ զվաղակաւորն, առհասարակ զնոսա թաւալգլոր խաղացուցանէր և ինքն անցեալ գնայր» (Յով. կաթ. գլ 12): Սրդ եթէ երկու քաջերի համար միայն այսպէս, ութսուն քաջերի համար սրպէս:

Ռուսաց զօրեղ կառավարութիւնն քանի քանի հազար զինավարժ և պատերազմակիրթ զօրքեր զրկած էր նուաճել Լէկզիները, ինչպէս անուանում է հասարակ ժողովուրդն: Քանի տարիներ տեւեց այդ նուաճման գործըն: Ո՛րքան Ռուս և Հայ կիրթ զօրքեր ջարդուեցան այդ անկիրթ, անկանոն, անվարժ լեռնային հերոսներից և հազիւ թէ նուաճուեցան:

«Երկու ողորմելի զիւղեր» Զ. և Մ. կամ նուաճելու և կամ հիմնադրակ կործանելու համար զրկուեցան 15000—20000 կիրթ զօրքեր...:

Մի Մահտի, սորա յաջորդները և մի քանի վայրենի արաբներ նուաճելու գործում միացան Անգլիական, Օսմանեան և Եգիպտական կառավարութիւններն: Սոյն երեք կառավարութիւններից քանի քանի հազարներ— կիրթ, հնարագէտ և ռազմագէտ զօրքեր ջնջուեցան, իսկ ցարդ անուաճելի մնացին այն անկիրթ և վայրենի արաբներն:

Սրդ այդ վայրենի Լէկզիների, գիւղերի և արաբների վերայ զօրք, թնդանօթ և մեծ ուժ զրկողներն ոչ եթէ «զօրավարներ» էին, այլ Կայսրներ, Սուլթաններ, Կայսրուհիներ և փոխարքաներ: Ապա ուրեմն անտեղի է պարոնի առարկութիւնն:

12) «Պարոն քննադատն առարկում է թէ մի անուս, անգրագէտ Քեանդխուտա — Խաչատուր Բարխուտարեանցն ինչպէս կարողացաւ նախագահել ժողովին և խօսել քաղաքական խնդրոց վերայ, մինչդեռ այդ Բարխուտարեանցն իւր նամակները անգամ գրել էր տալիս այլոց. եր. 22:

— Քաղաքագիտութիւնն սեպհական ձիրք կամ առանձնայատկութիւն չէ միայն քաղաքացիներին, գրագէտներին, ռուսալներին և փիլիսոփաներին, այլ և խելացի գիւղացիներին, բազմամեայ փորձառուներին, անուս, բայց տաղանդաւոր լեռնականներին, անգրագէտ, բայց բնատուր անձնաւորութեանց:

Կարո՞ղ է հաստատուել, որ աշխարհիս վերայ պատերազմ սկսուած օրից մինչև գլահանութեան և ռուսման հասնիլն կամ թէ կառավարութիւններ հաստատուելուց ցարդ, բոլոր ռազմագէտներն, քաղաքագէտներն և նախագահներն եղած են ընդհանրապէս քաղաքացի, ռուսալ, գրագէտ և իմաստուն անձինք և նոյն իսկ են և այժմ...:

Մի պարզ, անուս և անգրագէտ նահապետ էր Հայկ-Գիւցազն, որն հաւաքեց իւր որդիքը ու թողները, խորհելով կարգադրեց թէ ինչպէս յաղթելու էր թըշնամուն: Միթէ տէրութիւն հաստատող և ահագին զօրք գումարող հսկայ և քաղաքականութիւն փոքր ի շատէ սովորած Բէյն չսպանուեցաւ այդ Գիւցազնից:

Մի պարզ, անուս, անգրագէտ ոմն էր Արամ Հայկազեանն, միթէ չարաւ ժողովներ, չնախագահեց, չյառաջացան սորա օրով գեղեցիկ կարգադրութիւններ և քաղաքական կարգեր և կանոններ:

Մի պարզ և անքաղաքագետ քուրմ էր Յոթոր, սակայն սորա իմաստուն, խելացի և օգտակար խրատները սիրով լսեց և դործագրեց Մովսէս, որ ուսեալ, կրթեալ և միանգամայն քաղաքակրթուած էր Փարաւոններէ երկրի բոլոր գիտութիւններով:

Մի պարզ հովիւ էր Գաւիթ, որից լաղթուեցաւ հսկայ Գողիաթն և որն 40 տարի թագաւորեց Իսրայէլացւոց ամբողջ ազգի վերայ:

Մի պարզ, անուս ծառայ էր Մահմետականաց օրէնսգիրն, սա թնչպէս կարողացաւ ի մի ձուլել այն վայրենի ազգերը, մղել այնքան պատերազմներ և հաստատել օրէնքներ:

Հորկ է լիշեցնել Վիլհէլմ-Տէլլը և իւր հովիւ Ջուլիցերեացիները, Գէորգ-Վաշինգթոնը և Ջէմս-Հարֆիլդը, վերջիններիցս առաջինն մեծացած էր վայրենի Ամերիկայի մի անտառապատ ագարակում, իսկ վերջինն մի աղքատ գիւղացի էր: Այսու ամենայնիւ սոքա նշանաւոր տեղ գրաւած են քաղաքագիտաց շարքում, առաջինն լինելով Ամերիկայի վրկիչն, իսկ երկրորդն՝ զովելի նախագահ նորա Հասարակապետութեան:

13) « Մենք հետաքրքրվում ենք իմանալ թէ ինչու այդ անարկաւ բռնակալը (Ներքինի-Շահն) չանկարձ ուզում է ջընջել իր երկրի մահմետական կառավարութիւնը չօգուտ հալերի որոց խաթրին խօսք է տալիս երկրից արտաքսել իր հաւատակիցներին, որոնք հաստատ բնակութիւն ունէին հիմնած: «Գաղտնիք»-ի մտքից աչն է դուրս գալիս, որ Շահը առհասարակ Մէլիք-Մէժլումի ձեռքին խաղալիք էր դարձել. երեի մի մեծ շնորհ էր արել նրան պարսկական 60—70 հազար զօրքի հետ խառնելով իր երկու հազար մարդիկը (զօրքը) » եր. 23,

— Հիմնովին աւելորդ հարցեր և անտեղի առարկութիւններ:

Ազգաց պատմութիւններն ապացուցանում են, որ մարդկութեան մէջ ալգպիսի երեւոյթներն լառաջացած

են քաղաքական շահերից, նորահաստատ կառավարութիւնները ամրասնդելու հետամտութիւնից, իշխանական կեանքը ապահովելու ձգտումից, հասարակութեան խաղաղութիւնը վերահաստատելու նպատակներից ևն.:

Ի՞նչ պատճառաւ մի աւուր մէջ, Մովսիսի հրամանաւ, սրախողխող կոտորուեցան 24000 հրէաներ նոյն իսկ իւրեանց հասակից Հրէաներից:

Ի՞նչ պատճառաւ, Տաճկաց Սուլթան-Մահմատի հրամանաւ, մի աւուր մէջ ջնջուեցան Պալատի բախում 12000 մարդիկ—Եհէբէի — դարձեալ իւրեանց հասակիցներէ:

Ի՞նչ պատճառաւ նահատակուեցաւ Աղուանից կաթողիկոսութիւնն, որ ապրած էր 1400 տարուց աւելի, նոյնպէս և մէլիքական իշխանութիւններն:

Ի՞նչ պատճառաւ ջարդուեցան այնքան պարսիկներ իւրեանց հասակիցներէ Ջինգ, Գարիմ-խանի, Ներքինի-Շահի գահակալելու ժամանակներում:

Միթէ սակաւ են օրինակներ պատմութեանց մէջ. քանի քանի աւատական իշխանութիւններ ջնջուած են հասակից նասալարու-նիւններից, տեղերից տեղեր փոխադրուած շատ ժողովուրդներ, կրկին փոխադրուած ուրիշ երկիրներ, ևն.:

Շահն ո՛չ եթէ «Մէլիք-Մէժլումի ձեռքին խաղալիք էր դարձել», այլ զրգոււած էր սորանից և Ջաւատխանից: Այդ իրողութիւնը հաստատում է և Նաղուբխանն ասելով. «Ջաւատխանն և Մէլիք-Մէժլումն . . . նոցա (Հերակլի և Իբրահիմ-խանի) չգալու (Շահին չըզիմաւորելու) վերայ ժամանակ դտան և ևս զրգուել Շահին և ապացուցանել թէ նոքա երկոքեանը... ծածկաբար վաղուց է դաշնակից են չճանաչել քո Շահութիւնը: Էս եղելութիւնը աւելի ևս էն ժամանակ տեղի ունեցաւ Շահի սիրտը զրգուել, մինչ... ինքն (Շա-

Հըն) Եուշու մօտ նստած էր» (Արարատ 1877. Եր. 295):

Շահն հետապնդում էր ջնջել Իբրահիմի խանութիւնը ո՛չ եթէ յօգուտ Արցախի Հայոց և ի շնորհս Մելիք-Մեժլումիին, այլ յօգուտ Պ րոսկաստանի Գահին, ի շնորհս—յապահովութիւն իւր Շահութեան և ներքին խողաղութեան: Շահն քաջ գիտէր որ այդ «ճրութաներն» Պարսից գահակալների դէմ միշտ ապստամբած և նոցա դէմ Եուշու դռները փակած էին, ինչպէս իւր դէմ, նոյնպէս և իւր Հայր Աղա-Մամատ-Հասան կամ Հիւսէյին-խանի և Ուրմեցի Ֆաթալի-խանին դէմ: Շահն քաջ գիտէր որ Պարսկաստանից Արցախ գաղթեցրած շահներն միանալով այդ խաներին՝ Հակառակ զինած էին Պարսկաստանի Շահութեան: Շահն հետապնդում էր գործ դնել այդ քաղաքականութիւնը, որպէս զի միանգամ ընդ միշտ վերջ տար այդ անկարգութեանց, Մելիք-Մեժլումի սրտի հետ իւր կողմն գրաւէր և Արցախի միւս մէլիքների, զօրքերի, Հասարակութեան և Աղուանից կաթողիկոսի սրտերը ևս, որք սառած էին մանաւանդ այդ «ճրութեան» անկարգութեանց պատճառաւ Պարսկաստանի սրտից և հակուած դէպի Ռուսաստանի սիրտն:

14) Պարոնն առարկում է թէ «սողաքան» բառն տակաւին գոյութիւն չունէր և իբր փաստ ասում է. «անչափ էր մինչև անգամ Աշտարակեցի Ներսէս վարդապետին (կաթող.)» որ քաղաքական բառի տեղ գործածէ «պոլիտիկայ» բառը: Իսկ փոքր ինչ լեռոյ նշանակած է «Ուհան» անուան մասին մի ծանօթութիւն, որ է. «Ապուշ ու հաստազլուխ մարդկանց Ղաբարազում Ուհան յ) են անուանում» Եր. 24:

— Քաղաք բառից ածանցուած և բարդուած են

յ) Հաստատում են որ պ. 1էօ-ի տոնի մէջ ևս եղած են Ուհան-ներս

սողաքան, սողաքան, սողաքան-ութիւն, քաղաքագէտ, ևն. բառերն: Առաջին անգամ գործ ածած է Պղատոն քաղաքական «պոլիտիկայ» բառը Քրիստոսից 429 տարի առաջ իւր «Բեսպուլըլիկա» վերնագրով հեղինակութեան մէջ: ապա գործ դրած է Արիստոտէլ: Ապա հետզհետէ ընդհանրանալով Եւրոպական տէրութեանց մէջ՝ ստացած է բուն այժմեան նշանակութիւնը, «պոլիտիկայ»: Այդ բառը գործագրած են և մեր մատենագիրներէն ոմանք, եթէ ոչ բոլորովին այժմեան նշանակութեամբ, սակայն և ոչ բոլորովին հետի այդ նշանակութիւնից: Խորենացին առնելով Փեղզացի Արիստոն պատմչից գրած է՝ Արտաշէսի թագաւորի յոճորակաւորութեան մասին ի միջի այլոց, «որպիսի շուք բազմադիսիս արարին առ ի պատիւ զիոյն» (Արտաշէսի) «սողաքան» կարգօք» Խոր. գրք Բ: գլ. Կ: 3 «Յաղագս «սողաքան» քաղաքականութիւն» (Կաթող. տն. գիրք Մահ. գլ. Ի.): «Սմբէժ լիցի իշխանն իշխանութիւնն և քաղաքացին ի սողաքան-ութիւն» «ոչ ի սողաքան-ութեան պայտախալք» (Ներս. 1ամբ.): «Լիւնք սողաքան-ութիւն» (Մայր-Մաշտոց): Այդ բառերը գործածած են և Ս. Երնորհային և Յ. Մանգակունին: Մեր նախնի թարգմանիչներն, կատարելագործած լինելով իւրեանց ուսմունքը և կրթութիւնը Աթենքում, Աղէքսանդրիայում, Ատտիկէում և Կոստանդնուպոլսում, արդէն քաջածանօթ էին այդ բառերի նշանակութեան. վասնորոյ և գործ դրած են այդ բառերը: Կիլիկիոյ Հայ իշխաններն, թագաւորներն և հոգևորականներն, միշտ յարաբերութեանց մէջ լինելով Յունաց) Հռոմայեցւոց և Գերմանացւոց կայսերների, իշխանների և հոգևոր գլուխների հետ, նմանապէս ծանօթ էին սողաքան-պոլիտիկայ-ի հետ: 1701—1800 թիւերն նոյնպէս Արցախի Հայ մեծարատ մէջրդա յ) 1, մամի, ողբարատ նայ յ) մմյ: մն

լիքներն և կաթուղիկոսներն քաղաքական յարաբերութեանց մէջ էին Ռուսաստանի հետ: Ուրեմն սոքա ևս անձանօթ չէին այդ բառերին:

Հետևապէս այդ բառերն անյայտ չէին և Աշտարակեցի ներսէսին» քանզի այժմ անգամ ոմանք գործ են անում քաղաքական, քաղաքականութիւն բառերը, իսկ ոմանք քաղաքական բառը: Այդպէս արած է և ներսէս Աշտարակեցին:

Նախ Մելիք-Մեծուն մն գործ գրած է քաղաքական և քաղաքականութիւն բառերը, ապա Բէկնազարեանցն և ապա միւսներն, որք սոյն մելիքի առաջակալ մարդիկներն էին: Գործածած է և Եղուր-խանն, որ ժամանակակից էր Բէկնազարեանցին. «Էս մի քաղաքականութիւն էր Պարսից» (1877-ի «Արարատ» էր. 147): «Սարտարի քաղաքականութեան շատ յարմար էր» նոյն էր. 182: Ապա ուրեմն այդ բառերն միայն քննադատի համար տեղադրեն և անյայտ, իսկ գիտնոց համար՝ իրականութիւն և յայտնի:

15) Աղուանից կաթուղիկոսները քանիսն են եղել» էր. (25): մմ ծածածցոց զյգոցայ քիւս (ըտոչաՄ-ղյաՄ)

— 1676—1810 Աղուանից անուամբ միշտ եղած են երկու կաթուղիկոսներ, որոց «հարազատներն» ըստ «Բաղտնիք»-ի նստած են Գանձասարում, իսկ «ճըռեղն» Երից-մանկանց վանքում և Ամարասում: Տես այս մասին և Շահխաթ. Հատ. Բ. էր. 346—348, Բայց ինչպէս լինում են սպրդած սխալներ ճեռազրաց և տըպուած հեղինակութեանց և թարգմանութեանց մէջ, նոյնպէս սպրդած է «Բաղտնիք»-ում, 44 էրեսի և 9 տողի մէջ, «հարազատ կաթուղիկոսներն», որ ըստ ուղղագրութեան լինելու էր «հարազատ կաթուղիկոսն»: Աերջապէս այդ սխալն կամ հեղինակինն է կամ թարգմանչինն և կամ տպագրութեան, թէև արդէն ստացած

ենք վերջնոյս հսկողութեան և զգուշութեան, գրականը:

Ազնիւ մարդիկ հեռի են բժախնդրութիւնից: Եթէ ամենաթեթիւ ակնարկով անգամ նայելու լինինք այլ քննադատի տետրակին վերայ, կը գտնենք, ոչ միայն տպագրական, այլ և քերականական, աշխարհագրական և պատմական, բազմաթիւ սխալներ: Հեռի չգնանք սոյն 15) թուահամարի տողուտնից բառի Ա-ն փոխանակ գրելու գլխատուով, ինչպէս սրահանջում է այդ այժմեան ուղղագրութեան օրէնքն, նա չաճախ գրած է փոքրատուով: Այդպէս վարուած է նա Պարսից, Արաց ևն. յատուկ անուանց հետ, զորս տեսան ընթերցողք ցարդ մեր ուղղածներում և տեսնելու են կրկին: Նոյնպէս անհասկացողութեան պատճառաւ շփոթած է Արցախը Մեծ-Սիւնեաց հետ և այս գաւառի Խնածախը Խաչենի Խնածախի հետ ևն.: Պարոնն գրած է իւր տետրակի 26 էրեսում թէ Արղութ. եպիսկոպոսի Եկատարինէ Բ-ին ներկայացրած խնդրագրի պատճէնն կայ (ԵՕԾՐ. ԱԵՒ.) Հատ. II էր. 53). սակայն բնաւ չերևցաւ այնտեղ այդ: «Բաղտնիք»-ի 267 էրեսում գրուած է թէ Գարեգին գնդապետն վիրաւորուեցաւ, իսկ սպարոնն, այդ դէպքը համառօտագրած ժամանակ, սխալմամբ գրած է իւր տետ. 94 էր. թէ՛ մեռաւ—Գարեգին գնդապետի մահը: Եղաք մայրախոյզայքմ զյա ըրյաձ ծայրմ ևտղ

16) Իրոտ անկանոն և խառնափնփոր են պարոնի տետրի 25—28 էրեսների դասաւորութիւնն, վասն զի խառնուած են միմեանց հետ 1701, 1722, 1790 և 1795 թուականների գործողութիւններն, եղելութիւններն և հալ զօրաց քանակութիւններն: Այնպէս որ միմեանց հետ չփոթուած են Մեծի-Պետրոսի, Եկատարինէ Բ. կայսրուհու և Աղա-Մամաթ-Շահի ժամանակների դէպքերն: Այդ շփոթութիւնը բացատրելու պատճառաւ ամիսովում ենք պարոնի փաստերը կամ տարկու թիւները հետեւալ բովանդակութեանց մէջ:

Ա. «Գաղտնիք»-ի հեղինակն ասած է թէ 1701 թուին Ղարաբաղում դումարուած կար 60,000 հաւ զօրք և Ուտեաց գաւառուում 18,000, ինքալէ Օրին, ըստ վկայութեան Արդու-թեանց Զ. եպիսկոպոսի ասած է Մեծին Պետրոսի թէ «Բացի Ղարաբաղցի հանրից, միայն Շամախու շրջակայքում հաւա-քուած են 17 հազարից աւել զինուած մարդիկ» Իսթիքին «ամբողջ Պարսկական Հալաստանի զօրքի թիւը հասցնում է աւելի քան 177 հազարին» Եթէ արդարեւ հայերն ունէին այդչափ զօրք, ինչ պատճառաւ չթօթափեցին այդ ուժով Պարսից լուծը և չդիմադրեցին Ներքինի Շահին:

Բ. Նոյն Արդութեանցն ասած է թէ իւրաքանչիւր մելիք չէ կարող աւնենալ 1000-ից աւելի զօրք «Մելիք Ազամ կարողութեամբ հազար արանց պատերազմողաց» (եր. 20): Իսկ Բէկնազարեանցն՝ թէ 2000 կարող է ունենալ:

Գ. Արդութեանց ասած է որ 1722 թուին Գանձակեկած է Վրաց Վախթանկ թագաւորն 40,000 զօրքով: Իսկ Բէկնազարեանցն թէ «տալաւ հղած է Վրաց զօրքն և Շատ հաւոցն»:

Դ. Արդութեանցն գրած է թէ Մեծն Պետրոս խոտաացած էր տալ հաւոց իբր օժանդակ

	40,000	ոռու զօրք.
Երեցեանն թէ	25,000	»
Բէկնազարեանցն թէ	15,000	»

Ուրեմն Բէկնազարեանցն դիտմամբ պակսեցրած է ոռու զօրաց թիւը, որպէս զի շատացնէ հաջ զօրաց թիւը:

— Տեսնենք թէ որքան ուղիղ են պարսիկ եզրակացութիւններն:

Ա. Կարևոր է ի նկատի ունենալ որ 1701—1722 թուերում եղած Հայոց այդ լեղափոխական շարժումներն մասնաւոր եղած չեն, այլ գրեթէ ընդհանուր: Սոյն լեղափոխութեան մասնակցած է ոչ միայն Արցախն, այլ և Շամախին, Նուխին, Մեծ-Սիւնիքն, ամբողջ Տփլիսի և Արարատեան նահանգներն, բայց ոչ յայտնապէս, ինչպէս յայտնի է այդ Ստորև մատնանիշ կ'անենք զօրութիւր, իսկ այստեղ կ'ասենք որ 1701—1722 թ. տակաւին ծնուած չէր Ազա-Մամատ-Շահն, այդ թուերում եղած Հայ զօրքն նոյն քանակութեամբ չէր կորուց մը:

նալ, որ 1795-ին և 1797-ին գեմադրէր նոյն Շահի արշաւանաց, քանզի որպէս բարանի է Հայերն գաղթած էին այդ ժամանակ այս և այն կողմերն. մանաւանդ թէ այդ Շահն անհաշտ թշնամի էր Արցախի խանութեան գոյութեանն և բարեկամ «հարազատ մելիքութեան» վերականգնելուն: Ուրեմն հարկ չը կար կռուել դորա դէմ: Իսկ Պարսից լուծը թօթափելու համար հարկաւոր էր թնդանօգ, թնդանօգաձիգ զօրք և մի քանի հազար կրթուած զօրք: Ահա այդ միայն էր պակաս հայոց և այդ միայն էին պահանջում Ռուսիայից:

Բ. Իւրաքանչիւր մելիք միշտ պատրաստ ունենում էր 2000 զօրք 1701—1730 թուականներն և գուցէ աւելի, ինչպէս վկայում է Աղուանից Եսայ. կաթ. պատմիչն. «աւելի քան գերկոտասան հազար»: Բայց երբ Հայերն չչտացան իւրեանց խոտացուած օժանդակութիւնը, աւելի զայրացան պարսիկներն Հայ մելիքների վերայ Ռուսաց բարեւուն պատճառաւ, գաղթեց Արցախի ժողովրդեան մի մասն և տկարացաւ մելիքների ոյժն: Այսու ամենայնիւ. ի պահանջել հարկին մելիքներն հազարից աւելացնում էին իւրեանց զօրաց թիւը նոյն իսկ Մելիք-Ազամ Ա-ի մահից յետոյ, որն վախճանուած է 1780 թուին, այն է Արդութեանցի «Մելիք-Ազամ կարսղութեամբ հազար արանց պատերազմողաց» ասած թուականից տասն տարի առաջ, երբ արդէն մելիք էր դորա որդի մեծ լուծն: Ուրեմն Արդութեանցի խօսքն 1790 թուի համար է:

Գ. Վրաց Վախթանկ թագաւորն երկու անգամ է կած է մինչև Գանձակ. առաջինն 1722-ին և Այրիւի 20-ին միայն 40,000 Վրացի զօրքով: Իսկ երկրորդն նոյն թուի Սոթրը-Խաչի ասինն—սեպտ. 15-ին գուցէ

Նոյն Տեսնելու կաթող. 55 էր. այդ Շահին մտայն.

75,000 վրացի և հայ զորքով, որպէս զի Հոկ. 1-ին զիմաւորէր Շամախում Սեծին-Պետրոսի, ինչպէս վկայուած է Շաւի. կաթողիկոսն: Վերավաղվաղակի ժողովեալ (Վախ. արքայի) զբազմութիւն ազգացն Վրաց և Հայոց, և ոչ ոք եթող, զոր ոչ երարձ ընդ իւր ընդ որոց և զիս (զՇաւի կաթ.)... և ելեալ ի Տփլիսս անբաւ ամբոխիւ, զոր որքանութիւնն անյայտ գոյով մեզ, ոչ կարացաք գրել, և ասդ յառաջ կոչեալ զհարմայեաց նախ քան զինքն յառաջ ընթանալ յերկիրն մեր Ղարաբաղ և զհայազուն զօրսն, որ գումարեալ կային անդ ի ձեռն մելիքներաց և գ. (չորս) գլխաւոր եղեալ երիտասարդացն, որոց անուանքն էին Աւան, Շրուան, Շահնի և Սարուխան, որն սոքա հարիւրապետք և իւրբաշիք կոչէին: Սոքա կազմեալ էին զօրս բազումս անկէ քան զերկոտասան հազար... և այսպէս բազում արութիւնս ցուցեալ յերկրի մերում, որոց պատմութիւնքն յառաջակայս յաճախագոյնս գտցես (Շաւի. կաթ. եր. 56—57):

Այդ բաժանաւորացն էթէ Հայ եղած լինի 35000 (1); Արցախում պատրաստի 12000 (2); Ուտեաց գաւառում: 18000 (3); Սեծ-Սիւնեաց մէջ. 12500 (4):

Հայ զօրաց ընդհանուր գումարն լինում է 78000 ինչ:

- 1) Պարզ է որ Արարատեան նահանգի Հայերն հաւարուած էին այդ ժամանակ Տփլիսի մտերմութեամբ, իսկ առաջ Արցախում մտերմութեամբ մտնողացն իմացիս, բայց ի վրայիս:
- 2) «Աւելի քան զերկոտասան հազար» ք հաշուած է 12,500: իսկ (ի յոգցօր զբաղ. 000,00 մյովն մի-ՈՅ ձեռք):
- 3) Ուտեաց գաւառի զօրաց թիւը Օրին Նշանակած է 17000-ից աւելի, իսկ Բէկնազարեանցն՝ 18000:
- 4) Կարևոր է ինկատի բռնենալ որ Բէկնազարեանցն

պէս գրած է «Գաղտնիք»-ի հեղինակն, որի մասին վկայուած է Շաւիի ահանատես պատմիչն: Ուրեմն հաստատուած է «Գաղտնիք»-ի հեղինակի գրածն:

Գ. Աւելի մեծ տարբերութիւն կայ Արդութեանցի 40,000-ի և պ. Երեցեանի 25000 Ռուս զօրաթւերի մէջ քան վերջնոյս և Բէկնազարեանցի 15000-ի մէջ: Սակայն անհերքելի ճշմարտութիւն է, որ մեր երկիրը — Կովկասեան նահանգը զբաւեցուցած մասնակ Ռուսաց զօրքն 15,000-ից աւելի եղած չէ: Այդ զօրքի պակասութիւնը բացուած է տեղական Հայ զօրքն: Այս ճշմարտութիւնը չեն ուրանում և Ռուսաց և Պարսից ժամանակակից յիշատակարաններն, սկսեալ 1795—1826 թվերն: Ուրեմն յայտեղրակացութեամբ ճշմարտութիւնը շահում է Բէկնազարեանցն: այսպէս յայտնուած է շահուած է Հարկէ բացատրել յի ինքիր, այսինքն է Հայ զօրապետներն «հարիւրապետական իւրբաշիք» են անուանուած Շաւիի կաթողիկոսից, իսկ «զօրապետ» Բէկնազարեանցից: Այս հարցը կամ խնդիրը լուծում է Սրապիօն Պապին ստեղծուած Վարչակարգ արին (Սեծ-Սիւնեաց բոլոր մելիքներն և էշխաններն) ու հաստատեցին զՎախիթբէկն իւրեանց Վերայ գլխաւոր մեծաւոր, իսկ զմիւս մելիքները կամ զօրք ունեցողները զօրավար անուանեցին, զոր օրինակ — Մխիթար զօրավար, Թորոս զօրավար Փարսազան զօրավար, Ծաւանգիւլ զօրավար ևն. նոյն

Սեծ-Սիւնեաց զօրքը ևս հաշուած է 60,000-ի թում: Բայց որովհետեւ Գալիթ-Բէկն Տփլիսից Սեծ-Սիւնիք հրաւիրուած էր 1722-ին, վասն որոց 12,500 զօրքն մնացած էր իւր (տեղում Սեծ-Սիւնիքում: Ահանատես Սրապիօն պապին հասցնում է մինչև 13000 իւրաքանչիւր մելիքի շատկացնելով 2000 զօրք: «Իմ հորեղբայր Պապն որ ամենայն պատերազմի մէջ իւր 2000 զօրքով Ներկաւ էր» (1877-ի «Արարատ» եր. 416): «Բերից վանիկիցի Ծրանգիւլ կար... ցերկու հազար զօրք կարող էր ժողովել, ևն.» Նոյն. եր. 447:



ներքին առանձնայատկութիւնից, դրօշմած է նոցա վե-  
րայ առանձին առանձին և զանազան մականուններ:  
Մանաւանդ Ասիայ մէջ, դրեթէ, չկայ մի ժողովուրդ,  
որ գործադրած չլինի այդպիսի մականուններ: Բայց մեզ  
հասած են շատ սակաւ անուններ—միայն պատմու-  
թեանց և վեպերի մէջ դրուածներն—իսկ անյայտացած  
են դարերի հոլովմանց հետ բազմաթիւ, անգիր անուն-  
ներ այդպիսիներէց և գիակաց հետ աներևութացած:  
«Գող-Վասիլ, Բայլ-Վահան, Աշոտ-Ողորմած, Աշոտ-Եր-  
կաթ, Անողորմ-Պետրոս, Կայծակ-Գալուստ վարդապետ,  
Զրիմ-վարդապետ, Աղաւնի եպիսկոպոս, Յովհան-Ոսկե-  
բերան, Ներսէս-Շնորհալի, Գէորգ-Մեղրիկ, ևն. ևն.»  
«Ղարաղաջ» Բոս-օղլի, Բալու Նոսիպ, Եօլայ Սղմազ,  
Թանղրի Թանիմազ, Իեօկայ Պախան, Զփլազ, Քեասաբաս.  
Ղարա Սահաթ, Աղաջդան Փիրի, ևն» Առաք. պատմ.  
գլ. Ե: «Իժնեայ Սլաք» Խոր. գիրք Բ. գլ. Ը.: «Գոմէջ  
Տիկին» Ուռ հայ. տպ. երուս. եր. 585: «Եօթն գայլ»  
նոյն. եր. 5: «Կարմրակէլ» «Թոխմախ Մահմուտ Չաք.  
Սարկաւագ: «Թուրքերը Պապ հօրեղբօրս կը վերակոչէին  
Բաբը Չհաննամ, այսինքն զժողովքի դուռն. և Միսիթա-  
րին Խրրս, այսինքն վարաջ կամ խոզ» (Սրապիօն-Պապի  
միւլնոյն ասորեթիւ «Արարատ» եր. 416): Շուշում, որք  
քաջածանօթ են պարօնին. «Փրփերանց, Ելլըճաշանց,  
Ճըգտանանց, Տարճևանց, Ճըռ-Մըլիքանց, Քեօրոլլունց,  
Ճըռ-Նազար, Անտէր-Վանէս, «Փուստունց» ևն.:  
«Բ. Արգէն պատմականութեանց եղած են Սամսոն,  
Հայկ, Մեծն-Տիգրան, Վահագն, Տորք, Արշակ Ա., Վա-  
հան Ամատունի, Սպանդարատ Կամսարական, Տրգատ,  
Վարազդատ, Մուշեղ Մամիկոնեան, Աշեցի, Ալոն, ևն.  
ևն.: Միթէ Արցախում սակաւ եղած են օւժեղներ, որոց  
մենք ականատես ենք. Ալփութիւն-վարդապետան, Քէ-  
շիշ-Օղլին, Նարդանն, Պալլուճեցի, Սագի Ալուխանեա-

ներն, Մանասանն, ևն., Խնածախցի Ասրի Բէլլուեանն,  
Քէօշարի Մանուչարեանն, չորս եղբարք, Բրուտեանցնե-  
րն, ևն.: Իեռ քանի քանի օւժեղներ կան մեր մէջ  
Արցախում, զորս ոչ պարօնն գիտէ և ոչ անհոգ և ան-  
հետաքրքիր մարդիկ: Եթէ Արցախի օւժեղներն ևս ու-  
նեցած լինէին Յօւնաց և Պարսից Աքիլլէսների և Զա-  
լերի, Սամսոնի և Տրգատի բախտը, այսօր Հայ գրական-  
ութեան մէջ փայլած կը լինէին Արցախի տղամարդոց  
օւժեղութեան համբաւներն: Ահա այդպէս են ուրեմն  
Բեկնագարեանցի նկարագրած քաջերի մականուններն և  
ամանց օւժերն ևս:  
— Գ. Պարօնն առարկած է. «Ղարաբաղի տեղական  
բարբառի մասնաւոր հնչիւնները<sup>1)</sup> գրի վերայ: 2) արտա-  
յայտելու համար (1) Մակար վարդապետը առանձին կա-  
նոններ է հնարել: Սրինակ օ տառը Ղարաբաղցիք մի  
քանի բառերում 3) արտասանում են eu. այդ արտասա-  
նութիւնը յա արտայայտում է էօ տառերով: Նմանապէս  
և օ տառը արտասանում են փափուկ a (ինչպէս la) դրա  
համար էլ դորժ է ամում է օ տառերը: Մակար վարդա-  
պետի այդ կանոնները ընդհանրապէս մեզ մօտ չեն ըն-  
դունուած»:   
— Կան մարդիկ, որք իւրեանց անզօր փաստին ոյժ  
մալու ճգամբ, բազմիցս խօսում կամ գրում են ընդ-  
հանրութեան կողմից: Պարօնն, փոխանակ խօսելու իւր  
կողմից և արտայայտելու իւր անձնական կարծիքը, ար-  
  

<sup>1)</sup> Աւելորդ բառ է «տեղական» իսկ երկղիմի «մասնաւոր-  
րն» եթէ «մասնաւոր հնչիւնները» հարկ է արտայայտել, ու-  
րեմն և ընդհանուր հնչիւնները ևս Գուլէ գրելու էր. «Ղարա-  
բաղի բարբառի շատուկ հնչիւնները»:  
<sup>2)</sup> Կամեցած է գրել էրօնը կամ թղթի վերայ:  
<sup>3)</sup> Երնի, մտացած է մատնանիչ անն, թէ որ բառե-  
րում են արտասանում eu և որ բառերում la....

ձակում է վճիռ ընդհանրի բերանից: Արագը տարին կտարին գիրքն տպուած է 1883 թուին, որի լեզուի մասին, բացի շնորհակալութիւնից, ոչինչ չենք լսած ոչ ոքից. մանաւանդ ստացած ենք շատ նամակներ հեռուոր և բանիբուն անձինքներից, որք առհասարակ յայտնած են իւրեանց գոհունակութիւնը: Եթէ արդարև Արցախի հասարակութիւնն կամ այսպէս ասենք, գէթ լեզուագէտ և ուսեալ մասն ընդհանրապէս չէր ընդունած, այդ գրքի լեզուն, անշուշտ ցարդ հրատարակաւ բողոքած կը լինէր: Նամանաւանդ Շուշում կան Լէօ-ից շատ աւելի բարձր գրագէտ անձինք: Այդ գիրքն ապարանից ստանալուն պէս, իսկոյն առաջին նուէրը մի օրինակ ստացած է այ. Լէօ, որն կարդալուց վերջն յայտնած է մեզ իւր խորին յարգանքը և ջերմ շնորհակալութիւնը այդ հեղինակութեան մասին իբրև Պարաբաղի բարբառը առաջին անգամ գրողի: Աւրեմն քնչ կը նշանակէ չորս տարուց յետոյ Լէօ-ն փոխէ և առաջի ասածներին հակառակ խօսքեր արտասանելն: Արդեօք շարժառիթն յետոյ ծնած թշնամութիւնն և անտեղի չկամութիւնն է թէ բարենորութիւն: Գուցէ սխալուիմ ենք:

Սենք չենք զարմանում, որ պարոնն, բոլորովին վստահ, ձեռնարկում է իւր կարողութիւնից բարձր մի խնդրի: որպիսի է լեզուաքննական ինչիւրն: Նա չարաչար սխալում է, երբ ենթադրում է իբր թէ մենք հեռուաւ ենք ծածկահայոց աշխարհաբար բարբառին: Պէտք է նա իմացած լինէր, որ իւրաքանչիւր հեղինակ պարտաւոր է իբրև ամենախոնարհ ծնուայ հարստակիտ հին հայերէնագրական, նոր գրականացան. պեղական և օտարական լեզուների կանոններին և պահպանել ամեն միւսի հընչմանց և արտասանութեանց ձայները: Այդ թէ ոչ նորա գրածն կը լինի մի ալանդակ խառնուրդ:

Հին հայերէնագրական և նոր գրական. բան, գործ, գալ, ուլն, ուլ, գա-տարկ, գա-ւաթ, լաւ, ևն:

Արցախ-աշխարհ. բեան, գեործ, գեալ, հէօլ, գէպրտակ, գեաւաթ, լեաւ, ևն: Այսպէս է արտասանում Խաչէն գաւառի Խնածախ գիւղի և նոյն իսկ շուշու ժողովրդեան մի մասն: Այդ հնչմանց ձայները մենք պահած ենք վերոյիշեալ հեղինակութեան մէջ:

Պարոնն. Գեորգի (Լատիվերուցի): Գեօր-գի, Կօ-մար, Գեօ-գալ-բէկն (Ձաբար. Սարկ): չԿեօ-տակ պաւլաղ, Կեօ-չէր, Կի, Կեօք-չախ, Գե-լի, Գար-տաջ, ևն. (Մահաթումեան): Սոյն կարգին են պատկանում և քաջերից ամանց անուններն, ինչպէս են Տէօլ, Նէառ, Տէ-տէ, և ոչ թէ ըստ պարոնի Տոլ, Նառ, «գաղա» եր. 32: Վերջին բարս երբէք չէ տարբերում հին քերականների առ, բբ, գգ, գգ, հնչիւններից: Այդ վերի փաստերն անպարզեցանում են, որ գաղղիերէն eu արտասանութեան ձայնն համապատասխան է էօ և ոչ թէ միայն օ տառի նոյնպէս լա-ն՝ լեա-ի և ոչ թէ լա կամ լե-ի ինչպէս էր «գաղա»-ն:

Պարոնն պատճառարանում է, որպէս թէ զգուրահնչելի են հէօլ, բեան, ևն. բառերն: Իսկ երբ փաստաւոր դրուած են և գրուած են: — Եթէ ոչ նոյնութեամբ արտասանելու համար: Ոչ ոք քննութեցող չէ հնչում իւր աչքի տեսած ուլ բառը հէօլ, Գօր-գի-ն՝ Գեօր-գի. լաւ-ը լեաւ: Միթէ չկան մեր հին և նոր լեզուների մէջ երկու կամ երեք ձայնաւոր տառերով մի վանկ կազմող բառեր. օրինակ, գեօլ, գիւղ, կեանք, Կեօս բաղաբ, Տէօլ գաւառ, Սեալ լեռան, Նա-ւեան ևն: Արդ մեր մէջ բերած օրինակները գրող հեղինակներն ոչ ծածկահայրատանցի են և ոչ նոցա բարբառներին և հնչիւններին հետեալ, այլ բուն Հայաստանցի և շատ տարիներ մեզանից առաջ վախճանուած: Սակայն

տեսէք ինչպէս վարուած են օտարահնչիւն բառերի և արտասանութեան ձայննրի հետ, պատկերացրած են այնպէս, ինչպէս հնչում է տեղացին և օտարն:

20) Պարսից, Հռովմայեցոց, Յունաց, Օսմանցոց, Ափխազաց... անընդհատ արշաւանքները(ն)... համարեա թէ անկարող եղած են վնասել Մեծ և Փոքր Սիւնեաց և ոչ մի կեանքին եր. 37:

Հրակիրում ենք ընթերցողաց ուշադրութիւնը պարոնի այդ (հատուածից) բաց թողած բառերի վերայ: «Պարսից, Հռովմայեցոց, Յունաց, Ափխազացոց, Վրացոց և Տալստանցոց անընդհատ արշաւանքներն, որք իւրեանց անդիմադրելի զոյրութիւններով այնքան վնասներ պատճառեցին Հայաստանի բոլոր մասերում բնակող Հայ ժողովրդեան կրօնական, քաղաքական և բարոյական համազգային կենաց, արտաքին գոյով, համարեա թէ անկարող եղած են վնասել Մեծ և Փոքր-Սիւնեաց և ոչ մի կեանքին» (Բաղտ. եր. 71): Նոյնի հեղինակն 72 երեսից շարաւարելով գրած է. «Բայց երբ գոյութիւն ստացաւ մեր երկրում ճրութեանը և այս ճրութեանը ծնաւ ճրութեանը և արաբացում, այն ժամանակ ծագեցաւ ներքին երկպառակութիւն, խռովութիւն, արիւնհեղութիւն և անվերջանալի պատերազմներ: Ահա այս բոլոր ներքին անկարգութիւններն տկարացրին Արաբադէ հարազատ-մելիքութեան ոյժը և վնասեցին մեր քաղաքական, բարոյական և նիւթական կենաց, բայց ոչ բոլորովին»:

Պ. Լէօն, բաց թողլով այդ «արքային» և «ներքին» բառերը և չըմբռնելով պատմութեան ոգին, յանգում է այն եզրակացութեան, որ Հայաստան արշաւող թուրքներն «վնասել են» Մեծ և Փոքր-Սիւնեաց երեք կեանքին և ս: Սպառնում են ստախօս է Բէկնազարեանցն: Մենք դիտմամբ ներկայացրինք հեղինակի այդ հա-

տուածները ընթերցողաց, որպէս զի կազմեն որոշ պաղար Բէկնազարեանցի գրածի ստուգութեանն և այլրոնի թիւրիմացութեան մասին:

Ինչպէս դժուարաբոյժ են մարդոց ներքին սցուերն քան արտաքիններն և ինչպէս ամենավնասակար են տան և քաղաքի միջից գոյացած զոյերն և թշնամիները քան գրութից եկածներն, նոյնպէս ամենավնասակար են որևիցէ ազգի և երկրի սրտից գոյացած, համարեա թշնամիներն: Ո՞վ այնքան վնասեց Հայաստանի զինուորական կեանքին. — եթէ ոչ միայն մի համարեալ Հայ, մի ներքին թշնամի Մեհրուժան: Ո՞վ սպանեց Արշակունեաց հարիւրաւոր տարիներ ապրող թագաւորութիւնը, արքային թշնամին թէ ներքին: Բազրատունեաց թագաւորութիւնն արքային թշնամեաց զաւաճածութեամբ մեռաւ թէ ներքին: Արազպնանց ժամանակ Հայաստանի ոյժն արքային թշնամեաց ջարութեամբ տրկարացաւ թէ ներքին:

Բոլորովին պարզ է հեղինակի գրածն: Ես յայտնում է Սայրի ներքին արքային բազրատութեամբ, որ արքային պրտերազմներն, համարեա թէ այնքան վնասած չեն երկու Սիւնեաց կեանքերին, որքան վնասած են ներքին թշնամիներն և ներքին պատերազմներն: Եւ մի թէ ճիմարիտ չեն հեղինակի խօսքերն: Մինչդեռ Հայաստանում, ամենուրեք մեղած էր հայկական, մարմնաւոր իշխանութիւնը, երկու Սիւնիքում դեռ կենդանի էր Հայ Ֆելիքսիւն: Երբ զանազան տեղերում եղած էր և լինում էին հայկական կրօնափոխութիւններ, երկու Սիւնիքում յարատւում էին իրօնակն և բարոյական կեանքերը: Աւրեմն այդ երեք կեանքին թաթարներն վնասեցին թէ կանկ-թամիւրներն: Պարսից Շահերն թէ Օսմանեան Սարը Աղաթափաներն: Հեղինակն ասում է որ սորա և ոչ նորքն, մի քանի դժգոյ անյայտանալոց



— Ամեն ոք գիտէ որ գլխատուած մարդն Քրիստոսի ժամանակ անգամ յարուժիւն առած չէ: Այդ մի սխալ է, որ սպրդած է «Գաղտնիք»-ի 80 եր. 18 տողի և 94 եր. 16 տողի մէջ: Փոխանակ տպագրուելու «Ճրգ-Մելիք-Միրզախանեան ճրգ-Մելիք-Ալլահվերտին» և «Ճրգ-Մելիք-Միրզախանեան ճրգ-Մելիք-Ալլահվերտուն», վրիպակաւ տպագրուած է «Ճրգ-Մելիք-Միրզախանն» և «Մելիք-Միրզախանին»: Նմանապէս «Պրախմագեանին» տեղ տպուած է Պրախմագին: Այդ տեղ իսկապէս մեղաւոր չէ «Գաղտնիք»-ի հեղինակն, այլ, ինչպէս կանխաւ խոստովանած ենք, կամ մերն է այդ սխալն և կամ տպարանիւնը: Բայց միթէ անսխալ են բոլոր ազգաց տպագրուած գրքերն: Կարող է երաշխաւորուել այդ գործին: Ուշիմ ընթերցողն ինքնին դիւրաւ կարող է ուղղել այդ սրտալը. քանզի այդ սխալն արդէն ուղղուած է «Գաղտնիք»-ի 98 եր. 2 տողում:

23) Աբրահամն ասում է թէ Իբրահիմ-խանն ունէր 6000 զօրք, իսկ ես 5000 կանոնաւոր և 3000 անկանոն զօրք: «Թէ միանգամայն սուտ է այս թիւը, չափովում է նորանով, որ կանոնաւոր զօրք այդ ժամանակ գոյութիւն չուէր: 1780 թուականին զօրավար Սուվորովին տուած ծրագրի մէջ Յովսէփ արքեպիսկոպոսն ասում է թէ հարկաւոր է մի քանի թնդանօթաձիգ և հետեակ զօրականներ թողել հայ դաւաններում, որ սրանք սովորացնէին հայերին կանոնաւոր զինուորութիւնը (Собр. акт. Зап. II. кр. 70)»: Յետոյ եզրակացնում է թէ, եթէ հայերն ունէին այդ չափ զօրք, կարող էին այդ 8000 զօրքով «փշրել (,) տրորել թուրք (պարսիկ) խանին» և մեյքներն ինչու էին դիմում Ռուսաց»:

— Ամեն ոք գիտէ, որ մելիքներն ունեցած են «կազմակերպեալ զօրագունդեր», որպիսին պահանջում էր Մելիք-Ղլւմշիւտից Մինաս-աղալազարեանցն: Ամեն ոք գիտէ նաև որ մելիքների զօրքերն վարժուած չէին Եւրոպական, կանոնաւոր զինակրթութեամբ: Անկիրթ էին

գորանով, բայց կրթուած էին միայն պատերազմներում, յաղթութիւններում և ունակութեամբ, ինչպէս բնական է այդ Ասիական—նահապետական սովորութեանց և լեռնականաց: Մանաւանդ թէ ինքն հեղինակն լուծում է պարզապէս այդ արդէն պարզ հարցը. «Մօզրեզօրն, փոխանակ Նեաուաաթօվի հմտալից խորհրդին հետեւելու, որ նշաններով ազդարարում էր՝ լեզու չհասկանալու պատճառաւ, սկսաւ պաշտպանողական զիրք բռնել իւր սալտատներով, ինչպէս յատուկ է նրբեալ զինուորականութեան. իսկ Հայ զօրագունդն թրահար ձեղքելով Պարսից զօրաշղթան՝ կրկին գնաց Տփլիս» («Գաղտնիք» եր. 263): Ուրեմն այլ է նախնաւորն և այլ նրբեալն: Կանոնաւոր ասելով պարզ հասկանալի է այստեղ հարկան զօրք. իսկ անխան, որ նոր է մտնում պատերազմի: Թէև 1752—1826 Արցախն եղած լինելով պատերազմի դաշտ, ամեն տղամարդ արդէն սովորած էր գէնք զսրծ ածել: Արդէն Եսայի կաթուղիկոսի ասած «աւելի քան զերկոտասան հազար» և Արղուժեանցին «Մելիք-Աղամ կարողութեամբ հազար արանց պատերազմողաց» ասացուցով յայտնի է, որ մելիքներն ունեցած են կանոնաւոր զօրք: Ոչինչ պակաս պարզ է և նոյն Արղուժեանցի խօսքերն, որի միակ նպատակն եղած է մատակարարել և Հայոց Եւրոպական, զինուորական կրթութիւն, այն է թնդանօրաձգութիւն և կրթեալ զինաշարժութիւն: Արցախի Հայ զօրքն չէր, որ իւր անկրթութեամբ հանդերձ միանալով մի բուռն Ռուս զօրաց հետ, քանիցս հալածեց և կոտորեց Պարսից քսան հազարներից բազկացած բանակները: Արցախի այդ Հայ զօրքն չէր, որ Շուշին պաշտպանեց 1826-ին Աբաս-Միրզայի 40,000-ից կազմուած զօրքի դէմ: Մի տես թէ ի՞նչ է գրում Ռուս հեղինակն Արցախի այդ «նշիլն», Հայ զօրաց և ժողովրդեան քաջութեան մասին. «Բայց Շուշու միջի գործնէութիւն»

նշն անսահման էր և միանգամայն անհաշտալի, ուրա-  
 նոր գիշերները պատրաստում էին վառօր և գնդակ ու  
 ցերեկն ի գործ դնում, կանայքն և շահիլ աղջիկունքն  
 անգամ ցոյց էին տալիս իւրեանց քաջութիւնը և եռան-  
 դը՝ օգնելով պատնիշներէ վերայ գտնուող (իւրեանց)  
 մարդկանցը, նրանց պատրոններ հասցնելով: Մինչև այս  
 էլ շատ պատմութիւններ են լսուած Շուշեցոց (Ար-  
 ցախեցւոց) վստահ անձնուրացութեանն համար (Կեանք  
 կն. Մատթոսի, հայերէն. էր. 100):

Օտարներն մեր երեսին են տալիս մեր երախտա-  
 մուների ապերախտութիւնը...: Բայց միթէ ներքինի-  
 Շահին 70,000-ի բանակին և Աբաս-Միրզային 40,000-նե-  
 ըի դէմ Շուշին քաջօրէն պաշտպանողն Հայերն չէին, որ  
 կոտորեցին Իբրահիմ-խանի 6000 զօրքը և հետզհետէ  
 նուազցրին այդ խանի զինուորական ոյժը: Եթէ Հայ  
 կանայք և օրիորդք քաջապէս օգնում էին Շուշում իւ-  
 ըեանց արանց և եղբարց, Հայ տղամարդիկ չէին կարող  
 ի ստիպել հարկին օգնել իւրեանց զինուոր եղբարց: Սո-  
 քա են Բէկնազարեանցի իշաճ 3000 անկանոն զօրքն:

Իսկ մեղիքներէ Ռուսաց դիմելն սկսուած էր Մե-  
 ծին-Պետրոսի օրից և ոչ թէ այդ խանի ժրով, ինչպէս  
 գիտէ ամեն ոք:

24) Պարոնն կարծում է թէ Մելիք-Աբով և Մելիք-Մեծ-  
 լում Խաչենից կուսապատ կոչած էին իւրեանց զօրքը և զօ-  
 րապետները միայն նորա համար, որ չպոնէին նոցա թէ ինք-  
 եանք թիֆլիսից նամակ գրած էին Կայսեր: Այն պատճառաւ  
 ծաղրելով հետեցնում է. «Շէնց սրա համար էին զօրքերը կան-  
 չելը...»: «Ո՛հ, կարի ե սուսպելս, այլ ե սուսպելաց առաս-  
 պել» (Խորեն. Բ. ք.), էր. 49—50:

— Բէկնազարեանցն պարզ գրած է. «ՌՄԽԳ (1794)  
 թ. Մելիք-Մեծլումից և Մելիք-Աբով Գ-ից գրուած. մի  
 հրամանագրից հրաւիրուեցաւ Գանձակ բոլոր Հայ հա-

րագատ զօրքն: Զօրապետական ժողովն կարև-Չարու  
 ձեռնով դիտել տուաւ այդ մեղիքներին, որ խիստ վը-  
 տանգաւոր էր այդ միջոցին Շուշուց հեռանալն և ճը-  
 խանի զօրանալու միջոց տալն:—Հրամայում ենք ձեզ  
 փութով Գանձակ գալ բոլոր զօրքով» («Գաղտնիք» էր.  
 111): Եւ լետոյ բացատրելով զօրաց հրաւիրման պատ-  
 ճառը՝ ասում է. «Ահա այս պատճառաւ հրաւիրուած  
 էին և հարագատ Հայ զօրքն և զօրավարներն (Սարգիս  
 եպիսկոպոսի կաթողիկոսանալուն) օժման հանդէսը փա-  
 ռաւորելու» (նոյն էր. 113): Այդ տողերն ասացոյց են,  
 կրկնում ենք, որ պարոնն չէ հասկանում իւր կարդա-  
 ցածի պարզ միտքը, այսու ամենայնիւ նա քննադատ է  
 Հայոց պատմութեան...: «Ո՛հ, կարի է անհասկացողու-  
 թիւնս. այլ և անհասկացողութեանց անհասկացողու-  
 թիւն»:

25) «Նոյն իսկ հին Քշտաղս գաւառը, որ(ք) լինում է  
 Առաքել պատմագիրը (Գլ. Գ.) ըստ վկայութեան Չառչեանի  
 գտնվում է «Աղուան հաջոց ի սահմանս Սիսական գաւառի և  
 Խաչենոյ: Եթէ առպէս է, էլ ինչ գաղթականութիւն կարող  
 է լինել, քանի որ «Գաղտնիք»-ի նկարագրած և այժմեան Խը-  
 նածախը այդ ցոյց տուած սահմաններումն է գտնվում» էր. 52:

— Պարոնն, իւր այդ ձեռնարկութեամբ ապացու-  
 ցանում է, որ ոչ պատմութիւն գիտէ և ոչ աշխարհագ-  
 րութիւն և ո՛չ գիտէ ըմբռնել իւր կարդացածի իմաստ-  
 ները: Թողունք հեռաւոր տեղերը, նա գէթ ցարդ չգի-  
 տէ թէ քանի Խնածախ կայ իւր հայրենիքում և որ  
 գաւառներում են գտնուում այդ գիւղերն: Ամեն Սիւ-  
 նեցի) բացի պարոնից, այսօր գիտէ, որ երկու Խնածախ  
 կայ: Հին-Խնածախն Մեծ-Սիւնեաց Քշտաղ գաւառումն  
 է, իսկ Նոր-Խնածախն Խաչէն գաւառումն: Այլապէս  
 առաջին գիւղն գտնուում է Մեծ-Սիւնիքի Զանկեազօր  
 գաւառում, իսկ վերջինն Արցախի Խաչենում:

Առաքել վարդապետն երբէք իշաճ չէ հին-Քշտա-

ղըս» ինչպէս գրած է պարոնն: Միթէ կայց լե «նոր-  
 Բշտաղ»: Պարոնն անգէտ գոլով «Բշտաղ» բառին, փակ-  
 ցրած է նորա «Հին բոբլիկ» բառը: Բշտաղ նշանակում  
 է (կեճատուած ոճով) Բաշաթաղ — Ներքին — Թաղ: Մեծ-  
 Սիւնիքում կրկին են — Վերին-Բաշաթաղ և Ներքին-Բա-  
 շաթաղ. (տես Կար. վ. Շահ. Օրբել. պատ. Ա. Հատորի ծա-  
 նոթութեանց մէջ):

Առաքել պատմչի ժամանակ դեռ գոյութիւն չու-  
 նէր «Նոր-Խնածախն, որն գոյութիւն ստացած է, ըստ  
 «Փաղտնիք»-ի 1770 թուին: Իսկ Չամչեան, թէև իւր  
 պատմութեան թելը հասցրած է մինչև 1784 թիւն,  
 Վենետիկում նստած, չէր կարող իմանալ Խաչենի Խնա-  
 ծախի գոյութիւնը: Սակայն պարոնն պարտաւոր էր այդ  
 իմանալ և ուղղել Չամչեանի սխալը:

Երբ Հին-Խնածախի ժողովրդեան մի մասն, ըստ  
 Բէկնազարեանցի, դաղթած է Գաստակերտ, որից և «Փո-  
 բրը-Խնածախ», որ նշանակում է անասունց կորուսած, լետոյ  
 Խնածախ կոչուած. ուրեմն, եթէ այս գաղթել չէ,  
 քնչ է . . . :

26) Պարոնն առարկում է թէ ինչ պատճառաւ Մակար  
 վարդապետն չիշած չէ Խնածախցի քաջերի քաջագործութիւն-  
 ները իւր յօրինած «Միրզա և Աննա» վէպի մէջ. եր. 53:

— «Իսկ ձերուսիք Հին և նոր պատմութիւններ  
 կը պատմեն: Ոմանք Ախտա-խանի և Հասան-խանի վե-  
 րայ, ոմանք Վրացոց Գէորգ Թագաւորի շտտակերու-  
 թեան վերայ վէպեր կը վիպեն» ևն.:

«Խաներու ժամանակ քնչ նեղութիւններ կը քա-  
 շէինք, զենքերը ձեռք առած հասասի պէս մերտունե-  
 րըն ու ապրանքներն մենք պէտք է պահպանէինք . . .  
 Հիմի մեր էտրաղներն պատերէն ելած չունին»: «Պարսից  
 ժամանակ եթէ մի մարդ յանիրաւի քեզ վերայ սուր

քաշէր կամ ինչքդ չափշտակելու յանդգնէր, կարող էր  
 արձակ համարձակ այնպիսին մի գնդակի մատաղ անել,  
 կեանքդ և ինչքդ ապահովել» (Միրզա և Աննա եր.  
 67—69):

Միտմամբ մէջ բերինք այդ հատուածները: «Էն և  
 նոր պատմութիւններ կը պատմեն, վէպեր կը վիպեն» ևն. խոս-  
 քերն ապացոյց են, որ ձերուսիք պատմում էին իւրեանց  
 սխալի քաջագործութիւնները: Բայց եթէ մենք չենք  
 վիպագրած այդ ամենը, պատճառն այն է, որ ուղղակի  
 կապ ունեցած չեն մեր ընտրած հայ նիւթի հետ: Սա-  
 կայն համառօտակի յիշեցրած ենք ընթերցողաց «պատ-  
 մութիւններ» կը պատմեն»-ը և այս չափով բաւակա-  
 նացած:

27) Պարոնն չէ հաւատում, որ Իբրահիմ-խանն վերջին  
 ծայր չուսահատութեան մէջ ընկած լինի, իսկ Ներքին-Շահն  
 խոնարհած և նամակ գրած լինի Մելիք-Մեծուսին և Մելիք-  
 Աբով Գ.ին:

— Պարոնն ինքնին վկայում է, որ ինքն զուրկ է  
 և քաղաքական հանգամանքները ճանաչելուց, չենք ա-  
 սում իմաստասիրելուց: Պատմութիւններն հաստատում  
 են, որ ոչ եթէ Իբրահիմի նման փոքր մարդիկ, այլ  
 կայսերներ, թագաւոր և թագաւորազուններ վերջին  
 ծայր չուսահատութեանց մէջ ընկած են, ստիպեալ քա-  
 ղաքական, ձախող բերմանց անդիմադրելի հոսանքնե-  
 րից: Բաւական է յիշեցնել Հրէից Եզիկիա արքայի դու-  
 թիւնը Աժգահակի, Նաբալիօն Գ-ի, Սուլթան Ազիզի,  
 ևն. վերջին չուսահատ վիճակները: Աբաս-Միրզան, լը-  
 սելով Մատթոյի մուտքը ի Պարսկաստան, փութով  
 այրել հրամայեց Հազարի և սորա շրջակայ գիւղերի մէջ  
 պատերազմի համար ամբարուած բոլոր պաշարները և  
 ինքն հանեց Թաւրիզից իւր պալատը. (Տես Կեանք Կն.  
 Մատ. Հայեր. եր. 116):



Ուրմնաց Վերահիմ-ճրո-խանն» որիս ակերջին ճայր յուսահատութեան պատճառները գեղեցիկ բացատրած է Վաղտնիքի-ի հեղինակն 109—110 երեսներում, զորս պարոնն զլացած է մէջ բերել: (ԸՅ—5ժ

Պ. քննադատն համոզուած է որ Շուշին Աղա-Մամատ-Շահի դէմ պաշտպանողն միմիայն: Իբրահիմ-խանն եղած է և ոչ Հայերն: Այդ համոզմունքն ինքնին ոչ չընչանում է պատմական փաստով: Շուշին միայն մի անգամ գրաւուած է պատերազմաւ և այդ այն ժամանակ, երբ Հայ մելիքներն իւրեանց հաւաքական ուժերով, միացած են Ուրմեցի Յաթալի-խանին հետ ընդդէմ Սելիք-Շահ, Գ.ի և իւր համախոհ խանին: Իսկ միւս բոլոր արշաւանաց ժամանակներում անգրաւ մնացած է Շուշին: Եւ այս այն պատճառաւ, որ միշտ Հայ զօրքն և Հայ մելիքներն էին պաշտպանում այդ բերդը և ոչ թէ (ճրո-խանն), ինչպէս այդ անպարտելիք կանխաւ: Իսկ եթէ, ըստ պարոնի, արդարև վերջին ճայր յուսահատած չէր այդ խանն, եթէ նա մնչուած չէր քաղաքական բռնն դիմադրութիւնից, եթէ նա միայնակ կարող էր իւր զօրութեամբ պաշտպանել առանց մելիքների ուժերին, թնչ պատճառաւ նա միայնակ Շուշին չպաշտպանեց և Աղա-Մամատ-խանի երկրորդ արշաւանաց դէմ 1797-ին, այլ վատաբար փախուած տուաւ այդ բերդից Բալաքեան:

Սմեն օք գիտէ, որ մելիքներն մելիքութեան մէջ հաստատուած էին Շահերի հրովարտակներով: Ուրեմն երբէք անհաւատալի չէ, որ ներքինի-Շահն նամակ գրած լինի Սելիք-Մեժլումին և Սելիք-Աբով Գ.ին, ինչպէս դեռ ցայսօր զրում են Նայսերներ, թնագաւորներ, սուլթաններ և Շահեր իւրեանց ստորագրեալներին, որք հաստատուած են նոյն իսկ իւրեանց հրովարտակներով: Այ՛, գրած են և զրում են մանաւանդ այն ժամանակ,

երբ պահանջում է հարկն և ստիպում են քաղաքական հանգամանքներն: Ս.յն այնչափ լայտնի է, մինչև անգամ կարօտ չէ փաստի, քանզի շատերն բազմիցս կարողացած են և շոշափած թէ պատմութիւններում և թէ լրագիրներում:

28) Պ. քննադատն չաճախ կրկնած է թէ Իբրահիմ-խանըն ունէր այնչափ պարսիկ զօրք, որով միայնակ չազթեց Հայ մելիքներին:

— Այդ առարկու թիւնն պարոնի պատմագիտութեան անտիճանացոյցն է...: Սեր 21 թիւ պատասխանում նպացուցինք պատմական փաստով, որ այդ խանն չունէր պարսիկ զօրք, բացի մի քանի զօրքից: Ուրեմն այդ խանն ոչ էթէ պարսիկ զօրքով լաղթեց «Հարագատ-մելիքներին», այլ անհարագատ Հայ մելիքների—Սելիք-Շահնագարի, ճրո-Սելիք-Միրզախանների, ճրո-Սելիք-Առստամների Հայ զօրքով:—Հայերն լաղթուեցան Հայերից:—Թէ այդ խանի զօրութիւնն միմիայն Հայերն էին, այդ հաստատում է և նոյն իսկ Եղուբ-խանն 1795-ի արշաւանաց ժամանակ. «Միայն Իբրահիմ-խանը և Վրաստանի Վալին համարձակեցան նշկահել Շահի հրամանին: Առաջինը (Իբրահիմ) յուսալով Շուշի անառիկ ամրոցի պնդութեանը և իւր ժողովրդոց (իւր հետ միաբանած Հայ մելիքների զօրաց) քաջութեանը» (Արարատ 1877 թ. եր. 295): (188 զմ ց-գ. զաղ. Ս. զճմգաա

29) «Առհասարակ «Գողտնիք»ը չափազանց բարենոցի և մարդասէր է ցոյց տալիս Աղա.Մամատ-խանին: Մարդ զարմանում է, կարդալով Սելիք-Մեժլումի և այդ բռնակալի լարաբերութիւնների մասին<sup>1)</sup>... այնինքն մի թագաւոր ուզում է պարզե տալ մի մարդուն, (Բէկնազարեանցին), որ իր զօր-  
լաւ Լաւ հաներէն չէ այս նախագատութիւնն: Գրուելու էր «կարգալով մարդ զարմանում է այն բարաբերութեանց վերայ, որք եղած են Սելիք-Մեժլումի և այդ բռնակալի մէջ»:

քը կոտորել էր. թե՛ անարկու ներքինի շահին (Ներքինի-Շահին) աչքախի գեղեցիկ լատկութիւններ տար մի մահմտական պատմիչ, աչք ներքին կը լինէր. Բաց երբ նոյնը անում է մի հայ, մի քրիստոնեայ գրող, աչքախի շատ լանցատր է: Ապա գալիս է այն եզրակացութեան թէ Եաղուբ-խանն և Խուբովն նկարագրած են աչք Շահը իբրև մի բարբարոս մարդ: Իսկ «Գաղտնիք»-ի հեղինակն «Չաքարիաչի պէս պապանձուել է աչք սոսկալի գաղանութիւնների մասին» եր. 56—59:

— Անաչառ պատմագրաց յատուկ է նկարագրել լաւ և յոռի արարքները այն անձանց, որք տեղ գրաւած են իւրեանց հեղինակած պատմութեանց եջերում: Օրինակ. Ս. գիրքն նկարագրած է Սաւուղի, Պաւթի և ալլ թագաւորաց թէ՛ լաւ և թէ՛ յոռի արարքները: Յովսէպոս պատկերացրած է Հռովմայեցի Վեսպիանոսի և Տիտոսի և Հրէից լաւ ու վատ գործերը և Նոր-Վտակարանն՝ Պետրոսի ուրացութիւնը և զղջումը: Եղիղէն նը շանագրած է նախարարաց և Վարդանի ուրացութիւնը և գիւցազնական քաջագործութիւնները, ևն. ևն.: Իսկ Եաղուբ-խանն՝ նոյնպէս միւսնոյն Շահի երկու կողմերը. «... (Շահն) շատ ուրախ դիմօք և փաղաքշող խօսքերով ընդունեց ինձ և բանակին նայելոյ օրը հրապարակաւ գովասանութեան արժանի եղայ...: Շատ երեւիլի պաշտօնատարներ և պալատականներ՝ էս իմ յառաջադիմութեան համար ցանկանում էին հետո ծանօթանալ» (Նոյն աւրեթիւ «Արար.»-ը եր. 221): «Բարձրագոյն անկեղծը՝ ասաւ Շահն. Եաղուբ-խան»): Սաբուճով քեզ Ղազ-

1) Եաղուբ-խանն պատմում է Շահի բարեսրտութիւնը և առ Արցախի հաչերն: Ասում է որ Շահն պատուիրած էր իւր սպասաւորաց զգուշանալ, որպէս զի պարսիկ զօրքն չվնասէին հաչոց և սպասաւորներն խոստացան գրաւական դնել իւրեանց զլուխները: «Շահը էսգունք (հաչոց գանգատը) մինչ լաւ...: Շուռ եկաւ իւր սպասաւորաց երկուսին, անւամբ վիշելով:

վինու քաղաքակետ եմ նշանակելոց» (Նոյն եր. 258): Իսկ վատ կողմերը՝ կարգաւ ցանկացողներն կարող են տեսնել նոյն տարեթիւ «Արար.»-ի 259 և 294 երեսներում:

Յն Սոյնպէս և «Գաղտնիք»-ի հեղինակն ներկայացնում է ներքինի-Շահի լաւ կողմերի հետ և վատը. «... հետգհետէ Կուր գետի մէջ նետուեցան Շահի անողորմ հրամանաւ շատ վրացի ազնուական, կղերական և ժողովրդական մարդիկ: Շատերն լողալ իմանալով ջանացին ազատուել: քայց զնդակահար եղան գետի ափերում երկուստէք շարուած սարուազներից: Իսկ Շահն, կամրջի վերայ նստած, զուարճանում էր այս ցատկի անողորմութիւնը» («Գաղտնիք» եր. 165—166): Բաց յայսցանէ պախարակում է և նոյն Շահի անլուր քարբարոսութիւնը և անխիղճ (անդթութիւնները) «Եղիտ-խրամանի»-ն (մարդաշան), նոյն եր. 232—233:

Այժմ թողնում ենք ընթերցողաց վճռել: Ո՞վ է շատ յանցաւորն:— «Մի հայ, մի քրիստոնեայ գրող շատ յանցաւոր է»: Թէ մի հայ, մի քրիստոնեայ կարգացողն շատ յանցաւոր է: Այդ արարմունքն առիթ է տալիս մեզ ասել. կամ պարոնն կարդում է թղթի մի երեսը միայն կամ չէ հասկանում իւր կարդացածի միտքը և կամ ճգնում է պարզամիտների համարմանց մէջ ստորացնել «Գաղտնիք»-ի վարկը...:

Երբէք զարմանալի երևոյթ չէ, որ Շահն պարզաւած է պատուանշան և Մեկիք-Մեթլուսին և իւր զօրքերը կոտորող Բէկնազարեանցին: Արդէն շատ վեհապետներ վարուած են և վարում են այդպիսի քաղաքակա-

հաչոյել թէ երեք օր առաջ զլուխնիդ էիք զրուս դնում. եթէ ճշմարիտ լինի ժողովրդեան անբաւականութիւնը. էս ի՞նչ է ուրեմն, աղաւականներիդ (պարսիկներին) կողմն էք պահում: Վաղը ցոյց կը տամ ձեզ» (Նոյն «Արար.»-ի եր. 308):

նույն թեմամբ, այսինքն է քաջ մարդիկ չենք առած ենք  
 քաղաքական նպատակներ յառաջ տրանելուն: Երբ ասի յս  
 Սրբակ Բ. Թագաւորի սպարապետն—Վասակ Մա-  
 միկոնեան—որից զլիատուած էր Պարսից Շապուհ թագ-  
 աւորի արտոնագետն և բազմաթիւ սպարսիկ զօրք, մեծ  
 պարզեւներ յտացաւ նոյն իսկ Շապուհ թագաւորից.  
 Փաւս. Բիւզանդ. Զորք. Իպ. զլ. ԺԶ: Դասք յոս. Ժամբ.  
 Վահան Մամիկոնեանն, որ ջնջած էր այնքան պար-  
 սիկ զօրք, վորձայտրուեցաւ Պարսից թագաւորից մեծա-  
 մեծ պարզեւներով և շատ ասանձնաշնորհումներով:  
 Վասպուրականի Ասիւպելջ հայ իշխանի որդի Գուրբ-  
 գէն, որ կոտորած էր այնքան տաճիկ զօրք և տարած  
 լաղթութեան փառքը, նուէրներ ընդունեց Բուղա ոս-  
 տիկանից. զի յուեալ Բուղայի գայս ամենայն (քաջու-  
 թիւն) խօսեցաւ ընդ նմա (ընդ Գուրբգէնի) զխաղաղու-  
 թիւն և սուսեր և գօտի և երիվար պարզեւեալ նմա՝  
 կացոյց զնա իշխան Վասպուրականի. Թովմա Արծ.  
 Քլ. ԺԲ.:

Ռուբինեան Թորոս Ա-ն., Յունաց ազգից այնքան  
 մարդ կոտորելուց և Դագկայ արեան վրէժք լուծելուց  
 յետոյ, վարձատրուեցաւ յոյն Կայսրից Տարգիւ և պատու-  
 անոտութիւն տրուաներով. «ի Յունաց պատուեալ Պատու-  
 սեւաստու կոչեցաւ, որ գրեալ թէ գերագոյն աստիճան  
 պատուոյ էր առ Բիւզանդացիս» (Սիսուան էր. 48):

Ապա ուրեմն երբէք պարճանայի չէ, որ ներքին-  
 Շահն ևս, իւր քաղաքաքական նպատակները յառաջ  
 տանելու քաղաքականութեամբ, պարզեւած է նշաններ,  
 և Մելիք-Մեծ լուսին և իւր զօրքերը ջարդող Բէկնա-  
 զարեանցին:

1) Պարոն Ռաֆֆին կարծում է թէ 1795-ին Ներքին-  
 Շահն տնեցած չէ չքանչան, որը պարզեւէր Մելիք-Մեծ լուսին:  
 Արդէն 1188-ին Ռուբինեան Ասոն թագաւորն կրում էր Ս.

30) Պարոնն առարկում է թէ մենք, Արցախ բառը «ար-  
 յե ցրի ստուգարանելով սխալուած ենք և թէ մենք Վարարաղ  
 բառի ստուգարանութիւնը առած ենք «Մատաթովի կենսագ-  
 րութիւնից»: Յետոյ գրում է, Արցախն գրուած է նախնի մա-  
 տենագիրներից նաև Արճախ և Արծախ» էր. 61. Նմանապէս  
 ասում է, որ Մակար վարդապետն սխալուած է Խոխոնաբերդ  
 բառը ստուգարանելով «խոխան բերալ ա»: Այս մասին պատ-  
 տաբանում է թէ Կիրակոս պատմագիրն գրած է մ «ի բերդի,  
 որ իջի Խոխոնաբերդ» ընդ բարբառոն Պարսից» էր. 157.  
 այ. Մուկ. և այլուր անուանում է նաև Կիրակոսն. «քակեաց  
 զանձապէլի բերդս նորա, զոր Խոյականայ բերդ կոչէին ըստ  
 Պարսկական բարբառոն» (Կիր. էր. 186) էր. 70.

— Եթէ արդարև մենք սխալուած ենք այդ բա-  
 ռերի ստուգարանութեանց մէջ, պարոնն պարտաւոր էր  
 — փաստերով— ուղղել մեր սխալները իւր բարձր գի-  
 տութեամբ և ոչ թէ միայն ասել Արցախն գրուած է  
 և ճ, ք և ց տառերով: Եւ թէ Կիրակոսն անուանած է  
 «Խոխոնաբերդ և Խոյականաբերդ»: Մենք կր խնդրէինք  
 պարոնից, որ բարեհաճէր ստուգարանել այդ բառերը և  
 բաւականացնէր զմեզ և ընթերցողները: Արցախ պարզ  
 բառ է, բարդ թէ ածանցեալ: Պարսից լեզուի մէջ կայ  
 Էրբ բառ, կայ խոխա բառ, Խոխանաբերդն ուղիղ է թէ  
 Խոյականաբերդն:

Իսկ մենք կ'սենք, որ յատուկ անունների (երբեմն  
 և Հասարակ անուանց մէջ) տառափոփոխութիւններն  
 չեն կորցնում կամ այլափոխում տեղանունների նշանա-  
 կութիւնները: Ինչպէս Շաղիմ, Մաղիմ, Երուսաղէմ.  
 Անգղիոյ, Անգլիա) Թիփլիզ, Թիփլիս, Տիփլիս, Թիլիսիզ,  
 Նորայ, Չորայ, ճառ. Գիզակ, Տիզակ, Տուզակ, Եւն. և  
 Այդպէս է և Արցախ, Արծախ, Արճախ. Վարարաղ, Գա-  
 րարաղ. ևն. Կայթակղութիւն և զայթակղութիւն.  
 պատրիարք, պատրիարդ ևն. Խոխոնայ մմ, Կիչմ, Կիչմ, Կիչմ.  
 Կետրոսի հշար, որը զրկած էր Իննեկենդիոս Գ. պապն. (Սի-

Յայտնի է, որ Հայ գրականութիւնն ծնած է Ե. դարում: Այդ սորածին գրականութիւնն, լինելով՝ փւր խանձարրի մէջ, չէր կարող լինիլ այդ կատարեալ ամեն մարդոց նկատմամբ: Ուրեմն անկարելի էր որ անսխալ լինէին այդ դարու բոլոր գրուածներն: Մանաւանդ, ապարանի կամ մամուլի չգոյութեան պատճառաւ, գրչից գրիչ անցնում էին բոլոր ձեռագիր մատեններն: Բոլոր արտագրողներն միապէս քաջազմուտ էին լեզուի ուղղագրութեանց, Հնչմանց և արտասանութեանց կանոններին:— Անկարելի է երաշխաւորել: Սյս պատճառներին վերագրելու է այդ տառափոխութիւնները, աղճատուած և ալլափոխուած բառերը և տեղանունները, որոց յաճախ պատահած են ձեռագիր մատենագրութիւն ընթերցողներն: Այդ թերութիւններից ազատ չեն և նոյն իսկ սպագրուած մատեններ, ինչպէս զիտէ Հըմուտ և ուշիմ ընթերցողն: Հետեալէս ուղիղ է Կիրակոսի ձոխանաբերը, 1) և ընթորինակողներից աղաւաղեալ «Սոյականայ բերդ»-ն. այսինքն Հայերէն կոչուած է «Սոխանաբերդ», իսկ պարսկերէն «Սոյական»:

Պարոնն չարաչար սխալուած է ասելով թէ Մակար վարդապետն Մատթովի կենսագրութիւնից առած է Ղարաբաղի ստուգաբանութիւնը: Մատթովի գոյութիւնից

ստան եր. 484. էջ 2): Հաստատում են որ շքանշանն գործածական դարձած է Եւրոպական տէրութեանց մէջ սկսած թի. դարում Գաղղիացոց Լուդովիկոս Ժ.ից և սորա Ռիսոր Լուվաիցն. Ռուսացաան մտած է Մեծին-Պետրոսի օրով և ապա մտած է Պարսկաստան փոքր ինչ չեսոյ:

1) Յառակ անուններն տարբերուած են միայն կէն, ար, ձեծ, քր, քըր, քերն, քերին, են. բառեղով. օր. Հին-Աղամ, Նոր-Աղամ, Հին-Նախիջևան, Նոր-Նախիջևան, Մեծ-Սիւնիք, Փոքր-Սիւնիք, Վերին-Քաշաթաղ, Ներքին-Քաշաթաղ, Միջին-Ասիա, են.:

շատ առաջ է Ղարաբաղ բառի գոյութիւնն: Այդպէս է անուանում և Եսայի կաթողիկոսն. այդպէս է ստուգաբանում և Հ. Ղ. Ալիշ. անտառախիտ (է) և այգաւէտ, վանն այնորիկ Գարաթաղ կոչեցաւ (Տեղ. Հայոց Մեծացեր. 86 տպ. 1855): Գրասէրներն մեծապէս դոճ կը լինէին պարոնից, եթէ բարեհաճէր աւելի գեղեցիկ և ուղիղ ստուգաբանել:

— 888 —

31) Պարոնն առարկում է թէ ոչ «Գաղտնիք»-ում չիւուած է Եաղուր-խանի անունն և ոչ սորա գրուածներում՝ Բէկնաղարեանցի անունն: «Եաղուր-խան (և) Խուբովը միաձայն վկայում են, որ Շահի Շուշուց հեռանալու պատճառը բերդի անառիկ զիրքն էր»: Իսկ Բէկնաղարեանցն՝ թէ Շահն Շուշին անգրաւ թողեց Մելիք-Մեծլումի խորհրդով. եր. 83 — 64: Այսպէս է և այս. «Հեղինակի (Բէկնաղարեանցի) ասելով, Պատթովի-Շահը չի մասնակցել այդ (Երևանի 1804-ի) արշաւանքին, այլ Թեհրանից տեղափոխուել է Թաւրիզ... Բայց իշխան Եզոր Խուբովն, որ ականատես է եղել այդ պատերազմին, ասում է թէ Շահը ինքն էր եկել Երևան և այդտեղից... լստոց պնացել է էջմիածին, ուր Դաւիթը լանձնել է նրան Դաւիթէլ կաթողիկոսին, որին Շահը ուղարկել է Մարաղա քաղաքը» եր. 89: Յետոյ եզրակացում է թէ Բէկնաղարեանցն ականատես պատմիչ չէ:

— Ա. Եաղուր-խանն խոստովանում է, որ ինքն վերջին ծայր թշնամի էր սկզբներում խեղճ Հայոց. «Մէթէ ես և մօտս նստած քաղմականները շէինք իմանում, որ իրաւունքը Հայոց կողմն է... բայց փոխանակ ողորմելի Հայերին խնայելոյ և խղճալոյ և ճըմարտութիւնը պահպանելոյ, դառն երեսօք ու զայրացմամբ գոչեցի. սպասաւորներ, էս ճերունի Հայերին երեսին եմ ասում ձեզ, թէ ուզածներնիդ սրանք չտան, տալիս եմ ձեզ իրաւունք՝ ողջ գիւղը յափշտակել, երել, վեր ի վայր կործանել», (1877-ի «Արարատ» եր. 147): «Բայց այնուհետեւ էնպէս կոշտ և կռոշտ եղայ... որ քրիստոնէի անունն անգամ լսելը զգուցելի էր ինձ. և որպէս

թէ նրանց ընդդէմ մին աներևոյթ ասելու թիւն էր  
գոյացել սրտուճա՝ նոյն եր. 182: Եղուր-խանն ասուճ  
է, հայերին այն ժամանակ մօտեցայ և ծանօթութիւն  
տուր որ հայ եմ, երբ Եազն սպանուած էր Եուշում և  
ես ամեն գոյքից, հազարից անգամ կողմապաշտած փախ-  
չում էի գլուխս գոնէ ազատել, եր. 333—336 և 370  
—383:

Բայց որովհետև հայերն այդելի էին Եղուր-խա-  
նին, ուրեմն ոչ նա Բէկնաղարեանցին յայտնած է իւր  
հայ լինելը և ոչ վերջինս իմացած է որ հայ էր առա-  
ջինն: Հետևապէս գրած չեն և երկոքեան:

Բ. Նոյն իսկ Եղուր-խանն վկայում է, որ Եազն  
Երուշին անգրաւ թողած է Մելիք-Մեժլումի և Զաւատ-  
խանի գրգռմամբ կամ խորհրդով. «... Մելիք-Մեժլումն  
(և Զաւատ-խանն) ժամանակ գտան և ևս գրգռել Եա-  
զին և ապացուցանել թէ նորա երկոքեանը ևս այսին-  
քոն (Սբրահիմ-խանն և Հերակլն) ծածկաբար վաղուց է  
գաշնակից են չճանաչել քո Եազութիւնը: Էս եղելու-  
թիւնը աւելիս ևս էն ժամանակ տեղի ունեցաւ Եազի  
սիրտը գրգռել մինչ քանի մի օր.. ինքն (Եազն) Եու-  
շում մօտ նստած, բննեց, տեսաւ անմատչելի է գրղ-  
եակն: և էն տեղեաց (Արաստանից) վերագառնալիս  
Արաքսաղի խանին էլ պատժէ սւ վրէժխնդիր լինի:  
Արաստանի հարստութեան և մանաւանդ բնակչաց գե-  
ղեցկութեան համբաւն շուտով շատացրին Զաւատ-խա-  
նի և Մելիք-Մեժլումի խորհրդէն կողմնակիցները (նոյն  
տարեթիւ «Արար.» եր. 295—296): Այդ տղերն ան-  
հերքելի փաստ են որ Զաւատ-խանն և Մելիք-Մեժլու-  
մըն խորհրդէ մէջ, համոզած են զԵազն նախ տանել  
Տփլիս և յետոյ բերել Արցախ: Այդ խորհրդում խանիս  
և մելիքիս համոզման ուժեր տուած են և Եազի առա-  
ջակալ խորհրդականներից շատերն: «Բաղանիք»-ը կար-

դացողներին յայտնի է և այն, որ Եազին, Զաւատ-խա-  
նին և բոլոր միւսերին անյայտ էին Մելիք-Մեժլումի,  
Բէկնաղարեանցի և Եուշում պարշարուած Մելիքների  
մէջ եղած ծածուկ յարաբերութիւններն և նամակագ-  
րութիւններն:

Գ. Արգէն գիտեն պատմութեանց հմուտ անձինք,  
որ միւսնոյն պատմական անցքեր պատմագրող երկու  
կամ աւելի պատմաբանք բոլորովին համաձայն չեն լի-  
նում ամեն պարագաներում: Ականատես պատմագիրնե-  
րից ոմանք նկարագրում են ընդարձակ և ոմանք հա-  
մառօտ: Ոմանք չեն յիշում այս ինչ կամ այն ինչ պա-  
րագաները, բայց ոմանք մանրամասնաբար աւելաց-  
նում են այնպիսիներ, որք չեն գտնուում միւսերի մէջ:  
Այսու ամենայնիւ այդպիսի անհամաձայնութիւններն և  
պակասութիւններն երբէք չեն ստորացնում պատմագ-  
րաց պատիւը և հեղինակուած պատմութեանց վարկը:  
Իւրաքանչիւր պատմաբան ունի իւր «դոգմա-նի-նը» և ընդ-  
րո-նի-նը:

Եթէ ներէին մեզ մեր վատառողջութիւնն և ժա-  
մանակն, մէջ կը բերէինք բազմաթիւ և հակասական  
օրինակներ Հայոց պատմութիւններից, որոց մէջ լի են  
ժամանակների, տեղանունների, անձնաւորութեանց, ևն.  
անհամաձայնութիւններ: Մէջ ենք բերում միայն Ս. ա-  
ւետարանը, որ շատերին քաջածանօթ է: Սմեն ոք գի-  
տէ որ Յով. և Մատթ. առաքեալներն օկանատես պատ-  
մաբաններ էին: Առաջինն մանրամասնօրէն նկարագրած  
է Ազգարոսի յարութիւնը և Սամարացի կնոջ պատմու-  
թիւնը, իսկ միւս երեքն բնաւ չեն յիշում այս երևելի  
պարագաները: Աուկասն պատմում է Զաքարիայի աւե-  
տիսը, Յով. Մկրտչի ծնունդը, Աղքատ-Ազգարոսի, Մե-  
ծատան, Անառակ-որդու առակները, բայց միւս երեքն

չեն լիշատակում: Մատթէոս և Ղուկաս գրած են ազգահամար և 12 Առաքելոց անունները, իսկ Յովհաննէս ո՛չ այս և ո՛չ այն: Ա՛խ, սիրելի ընթերցող, միթէ կարելի է եզրակացնել թէ որովհետև միւս երեք առաքեալներն (կամ գէթ Մատթէոսն) չեն գրած Ղազարոսի բարձրահռչակ յարութիւնը և Յովհաննէս չէ լիշատակած իւր 11 ընկերների անունները յականէ յանուանէ, Աղքատ-Ղազարոսի, Մեծատան և Անառակ-որդու առակները, ուրեմն Քրիստոսի հետ եղած չեն ոչ առաջինները և ո՛չ վերջինս: — Ամենեին ո՛չ: Ինչպէս իւրաքանչիւր պատմաբան, նմանապէս դոցանից ամեն մին ունեցած է իւր ուղղութիւնը, իւր ընտրութիւնը և իւր ուշ գարձրած պարագաները: Սակայն Քրիստոնէութիւնըն որքան ուրախ է, որ այդ չորս աւետարանիչների շնորհիւ ամբողջացած է Քրիստոսի գործունէութիւնն: Բէկնազարեանցն մանրամասնաբար նկարագրում է երբեք իմանի, իսկ Նաղուբ-խանն չէ նկարագրում: Առաջինն նշանակում է Տփլսից Պարսկաստան տարուած գերելոց թիւը, բայց վերջինն՝ ոչ:

Հետևապէս մի նորութիւն և մի զարմանալի երեւոյթ չեն Բէկնազարեանցի և Խուբովի մէջ եղած անհամաձայնութիւններն Յաթալի-Շահի Երևան գալու մասին: Բայց արի՛, տես, որ Ռուսաց լիշատակարանն ևս տարբերում է ականատես Խուբովից, քան զի սա ասում է որ Շահն 1804-ին զրկեց զՌանիէլ կաթողիկոսը Մարաղա քաղաքն, իսկ ռուս լիշատակարանն (պաշտօնական նամակ) «Բաբախան-Շահն ձեռնաուրթեամբ Ռաթի (կաթողիկոսի) վեր առաւ իւր հետ զՌանիէլ (կաթողիկոսը) 1805 թուին» Собр. арт. Зап. в. кр. 864: Միայն խնդիրն այն է որ, պարոնի մատնանիշ արած, ականատես Խուբովի գրածն անգամ անհամաձայն է ճշտութեան: Խուբովն ասում է, թող տարեթիւ տար-

բերութիւնը, Ռանիէլ կաթողիկոսն զրկուեցաւ Մարաղա, իսկ Բէկնազարեանցն՝ թէ զրկուեցաւ Թաւրիզ: Այս կէտում Բէկնազարեանցի ասածն, համաձայն է 1847 թուի «Բազմավէպին» եր. 40—41: Թէ այսպէս և թէ այնպէս, եղելութիւնն ճշմարիտ է:

Բայց մենք կ'ասենք որ Շահն իւր բանակի հետ եկած չափտք է լինի Երևան, այլ յետոյ, նոյնպէս Աբաս-Միրզան, իւր հօր Երևանից Թաւրիզ հեռանալուց յետոյ գրած լինելու է այն նամակը: Եւ այս հաւանական է:

32) Պարոնն առարկում է թէ Ներքինի-Շահն, որ այնքան սիրում էր զՄելիք-Մեծլումը և մինչև անգամ երդմամբ խոստացած և «դաշնաթուղթ» անգամ տուած էր չվնասել հայոց, ինչ պատճառաւ առաջինն ոտնակոխ արաւ երկրորդին աղերսանքը, վնասուեցան և Թիփլիսի հայերն: Նաղուբ-խանն (1877 թ. եր. 301 «Արարատ») ասում է. «Չլմիածնապատկան զարդերը քսանաչափ սնդուկների մէջ իրան Շահին ընծայ տուին»: «Երկուսից մէկը. կամ Մելիք-Մեծլումը Շահի մօտ չափազանց աննշան մարդ էր, որովհետև նրա աղաչանքը առանց հետևանքի մնաց, կամ թէ նա այնպիսի անսիրտ արարած էր» որ չկարողացաւ փրկել հայերը. եր. 65—66:

— Երբ Շահն քանդում է իւր դաշինքը, դժբուժ իւր երդումը և անլուր թողում մելիքի աղերսանքը, այդ տեղ երբէք մեղաւոր չէ մելիքն, այլ երդմնազանց Շահն: Բէկնազարեանցն կանխատեսած էր այդ ուխտազրծութիւնը. «Թէպէտ Մելիք-Մեծլումն գրում է վրստահօրէն: «Շահն երիցս կրկնեց անսուտ երդմամբ...: Սակայն այս հանդիսաւոր խոստման և երիցս երգման կատարումն ինձ անհաւատալի է թուում: Շատ անգամ պատմութեանց մէջ կարդում ենք, որ մեծ մեծ մարդիկ մեծամեծ երդմամբ և մեծամեծ խոստմամբ արձակած են անդառնալի հրամաններ և անյեղաշրջելի վճիռներ, որոց հետևութիւններն եղած են միայն ամենամեծ սը-

տախօսութիւններ և ամենամեծ աչքակապութիւններ: Այսպիսեաց վճիռներն, հրամաններն, երգումներն և խոստումներն կամ ցնդում են օդի մէջ և կամ մնում թղթոց վերայ գրուած անհոգի դիակ» («Պաղտնիք» եր - 38—39):

Արդարև պատմութիւնն վաւերացնում է Բէկնազարեանցի համոզումը: «Արդ ի չորս հարիւր յիսուն և չորս թուականին (Հայոց) առաւ Անի, ո՛չ պատերազմի օրինիւ, այլ պատիր բանիւ, քանզի երգմամբ և խաչիւ հաւանեցուցին զՊաղիկ հրամանաւ թագաւորին (Յունաց) թէ միայն ի տեսանելն զքեզ, զարձուցից ի քեզ զթագաւորութիւնդ քո... Զոր տեսեալ թագաւորին (Միխայէի) ո՛չ յիշեաց զերգմունս և ո՛չ զխաչին միջնորդութիւն, այլ առ իւր արգել զՊաղիկ թագաւորն Հայոց» (Լաստիվերտ. եր. 41):

Եթէ մի քրիստոնեայ կայսր այսպէս, մահմետականն որպէս...:

Վասակ-Սիւնին քանի քանի անգամ իւր մատանեաւ կնքեց Քրիստոսի աւետարանը. երգմամբ, լալով և խաչը և սեղանի բեմը գրկելով և համբուրելով...: Բազմաթիւ են օրինակներ:

«Եջմիածնապատկան զարդեր» երբէք ասած չէ Նաղուբ-խանն: Ահա իւր գրածն. «Երբ միջին երևելի և հարստագոյնն էր Հայոց եկեղեցւոյ գարանը, ուր քսանաչափ սնդուկներ լիքն ոսկեայ սկիհով, խաչով ևն.» (1877 թ. «Արար.» եր. 301): Պարոնն որ տեղից հանեց «Եջմիածնապատկան»-ը:

Մենք մեր 29) թուահամար պատասխանում ցոյց տուինք որ Շահն անձամբ պատուիրած էր իւր զօրաց և մարզոց ամենեւին չվնասել Շուշու հայոց: Շահի սպասաւորներն և մեծերն երաշխաւորած էին այդ՝ գրաւական գնելով իւրեանց զլուխները: Ուրեմն ինչպէս ե-

ղաւ որ ոտնակոխ արին Շահի հրամանը և վնասուեցան հայերն: Արդ՝ եթէ անզուսպ պարսիկ զօրքն ոտնակոխ էր անում իւր Շահի, իւր Վեհի պատուէրը, ո՛ւր կը մնայ մի մեկիքինն: Երկուսից մէկը. կամ պարոնն պատմութիւն չը գիտէ և կամ անկարող է ըմբռնել իւր կարգացածի միտքը և կամ լանիւրաւի դատափետում է մի հայ մեկիք, մի քաջ տղամարդ և մի պատմագիր: Երկուսից որը և ընդունենք, քննադատի անհեթեթ ձեռնարկութիւնները պիտի խորտակուին»:

33) «Մեկիք-Մեծլումը մի մեծ պետութեան գլուխ չէր, որ մշտական չարաբերութեան մէջ լինէր պարսից (Պարսից) դէրան հետ և դեսպան ունենալու հարկաւորութիւն զգար» եր. 68: «Մեկիք-Մեծլումը ինչ չարաբերութիւն է ունեցել դրանից չետոյ Շահի հետ. թող ցոյց տան» եր. 69:

— Մեկիք-Մեծլումն իւր ժամանակի մեծ մարդն էր, բայց եթէ միայն պարոնի համար չափազանց աննըշան մարդ էր, այդ մտտին ոչինչ ասելիք չունինք: Սոյն մեկիքն, թէև վաղահաս մահուամբ սպանուելու պատճառաւ, երկար չարաբերութիւն ունեցած չէ Շահի հետ. բայց եթէ ամենեւին ունեցած չէ չարաբերութիւն, կը խնդրէինք պարոնից ապացուցանել փաստերով:

Պարոնն սխալուում է, երբ ասում է թէ Բէկնազարեանցն դեսպան զնաց միայն Միկիք-Մեծլումի համար: «Սակայն ոչ սակաւ օգուտ է հարազատ մեկիքութեան համար՝ Շահի մօտ ունենալ քեզ (Բէկնազարեանցի) նման մի անձը» («Պաղտնիք» եր. 171): Մեկիք-Մեծլումն ապրած է նորանից յետոյ զրբթէ միայն մի տարի: Իսկ միւս մեկիքներն և գործող անձինք երկար ժամանակ չարաբերութիւն ունեցած են Բէկնազարեանցի հետ և վերջինս կատարած է միջնորդութեան գեր Պարսից դրան մէջ: Յանկացողք կարող են տեսնել «Պաղտնիք»-ի Բ. Հատորում:

34) «Շահը Ղարաբաղով չի գնացել Պարսկաստան (Վրամն. Մելիք.)» եր. 187) այլ Երևանի վրայով («Արարատ» 1877 թ. եր. 302): Ուրեմն Աբրահամը, որ Շահի հետ էր, չէր կարող Խուտափիրինը տեսնել» եր. 69:

— Եաղուբ-խանն ասում է, «Ատեան կազմեց (Շահըն հաւանականաբար Գանձակի մօտերքում), խորհուրդ տեսաւ, ամենը հաստատեցին Շահի չգնալը Ղարաբաղու ճանապարհով... Շահը գնաց Թաւրէզ քանի մի ժամանակ կենայ էնտեղ: Բանակը չուեց զէպի Երևան» (1877 թ. «Արար.» եր. 302), «Լալով Պարսկաստան անցանք Խուտափիրին կամրջով» («Գաղտնիք» եր. 173):

Իրիտամը մէջ բերինք այդ երկու հատուածները: Բէկնագարեանցն երբէք չիշած չէ թէ ինքն գնաց բանակի հետ. թէ ինքն գնաց Շահի հետ, այլ թէ «անցանք Խուտափիրին կամրջով»: Նոյն իսկ Եաղուբ-խանն որոշած չէ թէ Երասխի ս'ր հունով անցան այդ ահագին բանակն և գերիներն. միայն թէ ասում է. «հասանք Թաւրէզ, Երևան, Նախիջևան և Մարանդ<sup>1)</sup>» աւերակ թողլով մեր քամակումն.» նոյն «Արար.» եր. 302: Հետևապէս առաջին հեղինակի պարզ խօսքերով և վերջնոյն «Ատեան կազմեց, խորհուրդ տեսաւ» բառերով ընթերցողն եզրակացնում է մեզ հետ, որ Բէկնագարեանցըն Պարսկաստան գնացած է Խուտափիրին կամրջով, այսինքն բանակից բաժանուած, առանձին ճանապարհով: Եւ այս երբէք տարակուսելի չէ, ըստ որում Եաղուբ-Խանն ասում է. «Շահն մտադիր էր, որպէս ասել էմ, վերադառնալ եկած ճանապարհովը Շուշուոյ խանին պատժելոյ համար, բայց Ղարաբաղու լերինքն ու սա-

1) Յալանի է որ Երևան, Նախիջևանն և Մարանդն ըստ մեծի մասին պարսիկ ժողովուրդ էր, պարսկահպատակ երկիր էր և ապստամբ չէր. քնչ պատճառաւ աւերակ դարձաւ Պարոնն թող բարեհաճի բացատրել:

ղերն խոչընդոտ էին նրան». նոյն եր.: Սակայն խոչընդոտ չէին Բէկնագարեանցին Պարսկաստան անցնելու, վասն զի իւր հայրենի երկիրն էր և սովորական ճանապարհն և տեսած տեղերն:

35) «Չարմանում ենք, որ «Գաղտնիք»-ի հեղինակը Աղուանից թագաւորների կարգում է գրել և Բաղաց թագաւորներից երկուսին: Մովսէս Կաղականտուացու չիշած թագաւորներից վերջինն է Սենեքերիմ: Բայց «Գաղտնիք»-ը գրել է և զորա որդի Գրիգորի անունը և ի հաստատութիւն այդ լրանի Մակար վարդապետը ծանօթութեան մէջ գրել է Մատթէոս Ուռնայեցու սրտմուծիւնից մի կտոր այս կերպով (եր. 184) «էին և այլ թագաւորք հայոց (Հայոց) ի Գարբանդ աշխարհին... որք էին թագաւորք անարատք»: Ինչու է Մակար վարդապետը «աշխարհին» կէտեր գրել: Ահա ինչու: Ուռնայեցին այսպէս է գրում. «և այլ թագաւորք Հայոց ի Գարպանտ (Գարբանդ) աշխարհին (,) որ ասի կապանք. Սահմանակից օղաց (0) և Աղուանից»: Ուրեմն Գարբանդ բառը, ինչպէս և իրաւապէս<sup>1)</sup> կարծում է Հ. Չամչեանը (Հատ. Բ. եր. 1043—1044) այստեղ սխալմամբ գրած (գուցէ ընդօրինակողի միամտութեամբ<sup>2)</sup>. փոխանակ Արանդ բառի). որովհետև ցոյց տուած սահմաններին նույն, այդ թագաւորներն էին Բաղաց կամ Սիսականի թագաւորները, որոց Աղուանից թագաւորների հետ խառնելու մի հիմք չկայ: Ս. Օրբելեանը մի ոտանաւորի մէջ գովել է այդ թագաւորներին և ոչ մի տեղ նրանց չի անուանել Աղուանից թագաւոր: Ուռնայեցու հետ միևնույն տարում (ՇԼԳ) <sup>3)</sup> այդ իսկ Սենեքերիմը գրում է. «(կ)ամաւ կարող հզօրին Յիսուսի ես Սենեքերիմ թագաւոր Հայոց կացեալ ի տանս Սիսական և Բաղաց աշխարհիս» (Ճան. Չալ. Սարգ. եպ. եր. 280): Հետևաբար երբ Սենեքերիմը Աղուանից տիրոջ չէր կրում, ո՞ր տեղից է «Գաղտնիք» շինողը ասում

1) Կամեցած է գրել. «ինչպէս իրաւամբ»:

2) Գուցէ Չամչեանի սխալանացն հետևողի պարզամտութեամբ:

3) ՇԼԳ թուին գրած է Մատթէոս:

Թէ Ղարաբաղի մելիքները Աղուանից թագաւորներինցն են ծնուել <sup>4)</sup>» Եր. 71—72.

— Խնդիրը հիմնովին պարզաբանուող համար կարևոր է ինկատի ունենալ.

Ա. Աղուանից պատմչի, Մատթէոս Ուռհայեցու Ստեփ. Օրբելեանցի յիշատակած անձինքը, որք իշխած են Աղուանից երկրում և Մեծ-Սիւնեաց աշխարհում:

Բ. Շօշափելով տեսնել թէ Ուռհայեցու մատնանիշ արած իշխողների անուններն Աղուանից իշխողաց անուններին համապատասխան են թէ Բաղաց իշխողներին անուանց:

Գ. Գարբանդն—Կապանն—սահմանակից էր Օղաց և Աղուանից թէ Բաղքն կամ Մեծ-Սիւնիքն:

Դ. Ակներև է ցոյց տալ Չամչեանի և սորա հետեւողների սխալները:

— Ա. «Գրիգոր, սորա որդին Սահակ, որ և Սեւադայ կոչեցաւ. Սեւադայ ծնաւ զԳրիգոր. Գրիգոր ծնանի զՍեւադայ, որոյ իշխան անուն կոչիւր. և զԱտրներսէհ և զՓիլիպպէ: Իսկ զերէց որդի իշխանին (վերջին Սեւադային) զՅովհաննէս, որև Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց աջն Բարձրելոյն՝ կոչելով զնա ի թագաւորութիւն... զոր և թագաւորն Պարսից մեծամեծ զարգուք պատուէ և տայ նմա զթագ հօր իւրոյ» (Պատ. Աղուանից. Եր. 273. տպ. ի Մոսկ.)

« և թագաւորք Աղուանից Գաբիկ և Գաւիթ և Կորիկէ, որք նստէին այժմուս ի Լօռէ քաղաք Հայոց: Էին և այլ թագաւորք Հայոց ի Գարբանդ աշխարհին, որ ասի Կապանք. սահմանակից Աւզաց և Աղուանից)

4) «Ծնուել (են)» անլարմար է այստեղ, վասն զի մելիքներն ուղղակի ծնուած չեն թագաւորներինցն, այլ սոցա զտագայններինցն. վասն որոյ գրելու էր. մելիքն ծագումն իջած է Աղուանից Լափաւորինցն նմա Լափաւորական սոսմիցն:

որք էին թագաւորք անարատք և սրբակրօնք, որք յիշատակին ի սուրբ պատարագն ընդ այլ աստուածասէր թագաւորացն, որոց էին անուանք այսօքիկ, Վաչական, և Գուշակտակ նորին որդի, Փիլիպպէ որդի Գուշակտակին. Սեւադայ որդի Փիլիպպէի. Սենեքերիմ որդի Սեւադայի. Գրիգոր որդի Սենեքերիմայ, որ դեռ կենդանի էր մինչև գրէաք զայս մատենագրութիւնս մեր» (Ուռհ. Եր. 278—279. տպ. յԵրուս.):

1) «Վասակ Սիւնի» որին թագ տուաւ Ափշին-Ոստիկանն:

2) «Սմբատ» (Ա) թագաւորեալ հրամանաւ Խորասանի Սուլթանինն:

3) «Վասակ (Բ.) մանուկ որդին իւր» (Սմբատայ Առաջնոյն:

4) «Սմբատ» (Բ):

5) «Գրիգոր» (Ա.): Սոյն «Գրիգոր <sup>1)</sup>» առեալ իւր կին զամենօրհնեալ և մեծահաւատ բարեպաշտուհին Ծահանդուխտ ի տանէն Աղուանից, դուստր նոցին թագաւորազինն մեծին Սեւադայի»: Բայց որովհետև սա (Գրիգոր) ևս Վասակ Բ-ի նման վախճանուում է անորդի. «Ապա խորհեալ ի միասին ընդ իշխանս ամին յԱղուանից 6) զՍենեքերիմ եղբայր նորին Ծահանդխտոյ թագաւորագն մանուկ, յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ, հանճարեղ և իմաստուն և երկիւղած յԱստուծոյ...: Այլ յորժամ Մելիք Ծահ եղև Սուլթան, գոլով այր բարբարոյ, յոյժ մեծարեալ եղև ի նմանէ Սենեքերիմ, և մինչև ի մահ Մելիք Ծահին՝ որ մեռաւ ի շխ (1092)»: «Յոյժ երևելի վառօք թագաւորեաց (Սենեքերիմ) ի տանս Բաղաց»: «Սմա (Սենեքերիմայ) եղեն

1) Հարազատ եղբարք էին Սմբատ Բ-ն և Գրիգոր Ա-ն, որք և կոչուում էին «Աւագ Աշոտեանք» վասնզի այլ երկուքն որդիք էին «Աշոտ իշխանաց իշխանի Սիւնեցոյ»:

երեք որդիք) Գրիգոր, Սմբատ, Սևադայ և զուտոր մի: Յետոյ ասում է որ Գանձակայ Փալտուն ամիրան մի անգամ եկաւ պատերազմաւ գրաւել բաղքը, բայց ամբողջութեան պատճառաւ զարձաւ ունայն: Երկրորդ անգամ եկաւ նա Շիրակացի Գրիգոր իշխանի հետ, երգամամբ և հաւատացնելով իջուցին Բաղաբերդից զՍենեքերիմ թագաւորը Փալտնի տեսութեան նպատակաւ միայն, սակայն տեսածին պէս իսկոյն գլխատուեցաւ Սենեքերիմն Փալտնի հրամանաւն: «Ահա այսպէս շիջաւ ճրագն քրիստոնէից՝ որ կայր մնացեալ յամուրան Բաղաց»: Իսկ այդ զէպքի ժամանակը նշանակում է «Յամի յորում էր թուականն Հայոց շճՔ. (1103):»

7) «Գրիգոր որդի Սենեքերիմայ», Գրիգորն կամ Բաղաց թագաւորութիւնն, ինչպէս գրում է Օրբելեան մի ստանաւորում, մեռած է Հայոց Վիգ հարիւր տասն և հինգ (1166) թուին»: (Բաղուածոյ Ս. Օրբել. պատ. ԾԵ. ԾԹ. և 4Ս. գլուխներէց, իսկ ստանաւորի մասին տես Չամչ. Հատ. Բ. եր. 1043):

Բ. Այժմ ընթերցողք զիւրաւ կարող են համեմատել միմեանց հետ այդ երեք հեղինակաց գրածները: Ո՛րքան նման և մերձաւոր են Ուռհայեցու մատնանիշ արած անուաններն Աղուանից պատմչի լիշած անուաններին, իսկ բոլորովին հեռի Բաղաց թագաւորաց անուններէց:

Տարբերութիւնն միայն այն է, որ Ուռհայեցին Գրիգորները անուանում է Գուշակտակ, ինչպէս և Աշոտ Ողորմածի Գուրգէն որդին անուանում է Գագիկ: Նմանապէս առաջին Գրիգորը—Գուշակտակը— կոչում է որդի Բարեպաշտ—Վաչական թագաւորին, որ զրատ թուոց աւուրց տարւոյն եկեղեցիս միայն բարեպաշտն Վաչական շինեաց յարևելս 1): Մատ. Ուռհայեցին, լինելով

1) Պատ. Աղուան. եր. 271. սպ. ի Մոսկ. (Ասիեքն Բարեպաշտ Վաչականն իւր կեանքում շինած է 365 եկեղեցիներ):

Ս. գրոց տշակերտ, հետեւած է Ս. գրքի օրինակին: Ս. գիրքն սովորութիւն ունի Բարեպաշտ մարդոց որդի անուանել խիստ հեռաւոր յետագաները. օր. «Որդիք եմք Աբրահամու»:— «Բիտեմ զի զաւակ Աբրահամու էք»: «Միթէ դու մեծ ինչ ոք իցես քան զհայր մեր Յակովբ»: «Որդի Գալթի Յիսո՛ւս ողորմեաց ինձ» (Ս. աւետարան): Յայտնի է, Գրիստոսից հազարաւոր տարիներ առաջ արդէն վախճանուած էին Աբրահամ, Յակովբ և Գալթի: Այսու ամենայնիւ Հրէայք այդպէս էին անուանում և գիրենք և զՅիւսուս Գրիստոս: Այդպէս արած է և Ուռհայեցին, ինչպէս յայտնի է:

Փրկչի 962 թուին Ուռհայեցին գրած է թէ Բաղարատունի Աշոտ-Ողորմածի Օժման հանդիսին վայլ տալու պատճառաւ. «Հարկաւորեալ կոչեցին զամենազովելին զՏէր Սովհաննէս կաթողիկոսն Աղուանից աշխարհին և քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա. և մեծաշուք իշխանութեամբ կոչեցին զՓիլիպպոս թագաւորն Աղուանից՝ զայր աստուածային և զսուրբը զորդին Գուշագակայ որդույ Վաչականայ, որ էին թագաւորք Աղուանից աշխարհաց» (նոյն Ուռհ. եր. 3—4): «Գրչագրաց ցուցակի մը մէջ հետեւեալ երկասիրութեան կը հանդիպինք հետեւեալ խորագրով. «Տիրանայ վարդապետի Հայոց՝ պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից՝ Ատրներսեհի և Փիլիբէի» Հայ. Հին Գարբութիւն, եր. 763—764): Յայտնի է նաև որ զեռ այդ ժամանակ ծնած չէր Կիւրիկեան Թագաւորութիւնն և իսկապէս «Աղուանից» անուամբ տակաւին շարունակում էր Գարբանդի հայ թագաւորութիւնն:

Բայց երբ Կիւրիկեան թագաւորութիւնն ծնաւ Աշոտ-Ողորմածի Գուրգէն որդուց և այդ թագաւորութիւնն զօրանալով տիրեց Աղուանից երկրի արևմտեան հիւսիսային մի մասին, այնուհետև պատմագիրներէց

«Թագաւորք Աղուանից» անուամբ կոչուեցան այդ թագաւորներն, իսկ բուն Աղուանից անուամբ (Վաչականբարեպաշտից սկսած մինչև վերջին Գրիգորն) շարունակուած թագաւորներն՝ թագաւորք Գարբանդի: Այս իսկ փոփոխութեան պատճառաւ, ապա 973 Փրկչի թուին, գրած է նոյն Ուռհայեցին զանազան տեղերում թագաւորող անձանց անունները, որոց մէջ պարզապէս որոշում է Աղուանից և Կապանին—Գարբանդի—տեղանունները, որպէս զի չչփոթէ ընթերցողն Գարբանդի թագաւորները Լօռու և Բաղուց թագաւորաց հետ: «Յայնժամ . . . ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի, թագաւորն Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս Կարուց տէրն և Սենեքերիմ Վասպուրականայ և Գուրգէն Անձևացեաց տէրն» (Նոյն. եր. 20): Իսկ 278 երեսում լիջելով «և թագաւորք Աղուանից Գագիկ (Գուրգէն) և Գաւիթ և Կորիկէ, որք նստէին այժմուս ի Լօռէ քաղաք», անմիջապէս շարաւարում է Աղուանից թագաւորաց շարքում «իսկ և այլ թագաւորք Հայոց ի Գարբանդ աշխարհին, որ ասի Կապանք, ևն»:

Այժմ կարևոր է քննել Աղուանից պատմչի, Ուռհայեցու և Օրբելեանցի մատնանիշ արած տարեթւերը: Առաջինն, իւր պատմութեան թելը հասցնելով մինչև Քրիստոսի 1000 թուականն և ասելով Սևադայի էրեց որդի Յովհաննէսն, որ և Սենեքերիմ կոչուեցաւ, թագաւորեց, լռում է այնուհետև և ոչինչ չէ գրում Սենեքերիմի մասին, քանզի 1000 թուին վերջանում է պատմութիւնն: Այդ նշանակում է, որ Սենեքերիմն մօտաւորապէս թագաւորած է այդ թուերում: Ուռհայեցին ասում է որ 1084 թուին դեռ կենդանի էր Գարբանդի Սենեքերիմի որդի Գրիգորն: Ուրեմն արդէն վախճանուած էր դորա հայր Սենեքերիմն: Իսկ Օրբելեան-

ցըն թէ հրաւիրեցին Աղուանից Սևադայի որդի Աստուհի, Դանուհի Սենեքերիմը. թէ այդ Սենեքերիմն խիստ հանգիստ և թագաւորական կեանք վարեց մինչև 1093 թիւն և թէ Բաղաց Սենեքերիմն նահատակուեցաւ Գանձակի Փալտուն ամիրայի անգուլթ հրամանաւ (1103 թուականին): Աւելորդ է լիջեցնել, որ եթէ միևնոյն Գարբանդի թագաւոր Սենեքերիմն էր Մեծ-Սիւնիքում թագաւորող Սենեքերիմն, այդ անկարելի էր, որովհետև պատմութեանց մէջ չկայ մի օրինակ, որ մի մարդ 93 յ) տարի թագաւորած լինի: Մանաւանդ եթէ նահատակուած չլինէր Բաղաց Սենեքերիմն, գուցէ աւելի ապրէր: Նմանապէս Գարբանդում 1084 թուին «դեռ կենդանի» թագաւորող Գրիգորն—Սենեքերիմի որդին—չէր կարող ապրել մինչև 1166 թուականն ինչպէս վրկայեց այդ Օրբելեանն: Ապա ուրեմն այլ է Գարբանդի Սենեքերիմ և սորա որդի Գրիգորն և այլ Բաղաց կամ Փառխոսի Սենեքերիմ և սորա որդի Գրիգոր թագաւորըն: Նամանաւանդ առաջնոյն գերեզմանը գտնուած է Գարբանդի Խաչ-Մաս գիւղի մօտ, իսկ Բաղաց Սենեքերիմին՝ Մեծ-Սիւնեաց Ս. Վահանայ վանքումն: «Գերեզմանք այսր գեղջ (Խաչ-Մասի) զարդարեալ կան գեղեցիկ մահարձանք... ի միջի որոց է գերեզման Սենեքերիմ արքայի որդւոյ Սևադայի, ի վերայ որոյ գրի. «Այս է տապան Սենեքերիմ արքայի» (ձանապ. Ա. եպ. Ջալ. Հատ. Բ. եր. 420): «Բարձեալ տարան (զմարմին Սենեքերիմայ արքայի) ի սուրբ ուխտն Վահանու

յ) «Ասողիկ» պատմութեան վերջին գլխում գրուած է թէ Բաղաց կամ Փառխոսի Սենեքերիմն սպանուեցաւ 1003 թուին, պարզ է որ այդ գլուխն կամ լետոյ գրուած է և կամ մոռացուած է սխալմամբ 1 թիւն, որով կ'ամբողջանայ Օրբելեանցի գրած 1103 թիւն:

և անդ եղին ի շիրմի ընդ այլ թագաւորսն» (Ս. Օրբելե-  
 Եան գլ. ԾԹ): Ալներև է նաև, որ Գարբանդում թա-  
 գաւորողի իսկական անունն «Յովհաննէս» եղած է և  
 Սևադայի «երէց» — անդրանիկ որդին, իսկ Մեծ-Սիւնիքում  
 թագաւորողն՝ կրտսեր — փոքր որդին: Սորա իսկական  
 անունն կամ Սենեքերիմ եղած է և կամ յետոյ այդպէս  
 փոխուած է:

Գ. Այժմ կարևոր է ստուգել «ի Գարբանդ աշխար-  
 հին» որ ստի Կապանի սահմանակից Աւզաց և Աղուանից  
 իսկական աշխարհ: Յայտնի է որ Գարբանդի արևմտեան  
 դուռնն էր Կապանի ձորայ, 1): Այս բազմահռչակ Կապանի  
 (նեղ անցք) էր սահմանակից Օզաց և Աղուանից երկ-  
 րին. այնպէս որ ձորայ Պահակն արևելեան և հարաւ-  
 արևելեան կողմից կցուած էր Աղուանից երկրին, իսկ  
 հիւսիս-արևմտեան կողմից սահմանակից էր Օզաց երկ-  
 րին: Բայց այժմ Օսերն կետրոնացած են Կազբէկ և  
 Ելպրուս լեռանց միջավայրերում: Իսկ Բաղաբերդն կամ  
 Կապան Բաղացն և Փառխոսոն գտնուում են Աղուանից  
 երկրի հարաւ-արևմտեան սահմաններում, այնպէս որ  
 Բաղաց թագաւորութեան արևելեան սահմանն էր Ար-  
 ցախ, հարաւայինն՝ Երասխ գետն և Գողթան Լեռնաշղղ-  
 թան, արևմտեանն՝ Սրարատեան նահանգն և հիւսիսա-  
 յինն՝ Գարգման գաւառն: Ուրեմն Մեծ-Սիւնիքն Օզաց  
 կամ Օսաստանից անջատուած էր Բաղաց և Կովկասեան  
 լեռանց միջև տարածուած ահագին անջրպետով: Հնա-  
 խօս հ. Ղ. Ինճաճեան, հայկական թագաւորութեանց  
 վերայ ուրոյն ուրոյն խօսելով, Գարբանդի թագաւորու-  
 թեան մասին խօսած ժամանակ գրում է. «Հայելով յա-  
 նունս Գարբանդ, և ի զնելն սահմանակից Օզաց՝ այժմ  
 անուանելոյ Օս» հայելով նաև յանուանս թագաւորաց

1) Այժմ կոչվում է ձոր կամ Զարաթալա:

(Գարբանդի), որք ուրիշ են յանուանց թագաւորաց Բա-  
 ղաց կամ Կապանին, ... երևի թէ այս Կապան ոչ է  
 Սիւնեացն, այլ է Կապանի ձորա, որ էր առ Գարբանդաւ  
 Վասնորոյ անվրէպ համարեալ զգրչութիւն Մատթէոսի:»  
 (Հ. Ղ. Ինճ. Հնախ. Հատ. Բ. Եր. 65.)

«Քաղաքն Գարբանդ, որ է Տէրպէնտ, թարգմանի  
 Կապ և Գոսան (որպէս ոմն ի նախնեաց մերոց ստուգա-  
 բանէ) 1) անուանի է ընդ ամենայն աշխարհ վասն Գրանն  
 և Պահակին ձորայ, զորմէ անբաւ զրոյց են առ արևել-  
 եայս և ողջոյն գիրք (Տէրպէնտ — Նամէ) ..... Պա-  
 հակս այս, ըստ անուան զանագան ազգաց մերձակայից  
 տիրողաց, կոչեցաւ Պահակ ձորայ կամ Հոնայ, Գոսան Ա-  
 ղուանից կամ Հոնայ, Գոսան Խաղբայ, Կապան, Տեմիր Գոսու-  
 ևն.»: Զանագան զարբերում Գարբանդին տիրողաց ա-  
 նունները յիշատակելուց յետոյ կցում է. «ի ժԱ և ժԲ  
 դարս քրիստոնեայք ի բուռն արկին ի քաղաքս և թա-  
 գաւորք Հայք նստան ի նմա և ցհինգ 2) ազգ յիշին» (Հ.  
 Ղ. Սլիշանեան. Տեղեկագիր Հայոց մեծաց. Եր. 95 — 96):

Գ. Այժմ ամեն ինչ որոշուած և հաստատուած է:  
 Ուրեմն սխալուած է Հ. Մ. Զամչեան մերձաւորութիւն  
 տեսնելով այդ յատուկ անուանց և տեղանուանց մէջ:  
 Այս պատճառաւ նա նոյնացրած է Կապանիք և Գարբան-  
 դը Սիւնեաց Բաղք, Կապան, Ղափան, Աբանդ բառերի  
 հետ և Աղուանից Սենեքերիմ և Գրիգոր թագաւորնե-  
 րը Բաղաց կամ Փառխոսի Սենեքերիմ և Գրիգոր թա-

1) «Բայց Շապուհ Որմզդեան առ Տիրան մեր արքայ ա-  
 ռաւել սէր հաստատեաց. մինչև զօրավիկ օգնութեան կղեալ,  
 թափէ զնա չարձակմանէ հիւսիսականացն ազգաց, որ միա-  
 բանեալ էին արտաքս քան զԿապանի ձորայ» Խոր. գիրք Գ.  
 գլ. ԺԲ.):

2) Ուռհայեցու մատնանիշ արած թագաւորներն:

գաւարաց հետ: Այդպէս սխալուած են և այն անձինք, որք փոխանակ քննելու, պարզաբանելու և ստուգապէս որոշելու այս հարցը, աւելի շփոթած և մթուածեան մէջ թողած են ճշմարտութիւնը, միամտօրէն հետևելով Չամչեանի: Այդպէս սխալուած է և խեղճ Հայոց Ազգի պատմութեան քննադատ պ. Լէօն՝ պարզամտութեամբ փաստ բերելով Չամչեանի սխալները...:

Ահա տեսանք պատմական փաստերով, որ Արցախի «հինգ հարազատ մելիքներն» ըստ վկայութեան Բէկնազարեանցի, սերած են Աղուանից թագաւորական ցեղից: Ուրեմն թող այսուհետև հանգիստ լինին «Գաղտնիք»-ի թշնամիներն և ապահով նորա ընթերցողներն:

36) «Գոչի արձանագրութիւնը պարզապէս ասում է թէ հիմնողները եղել են Ամարասու միաբան Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսները և թէ դրանք շինութեանը ձեռնարկել են ոչ թէ մի հասարակ մտօք, իբրև սեփական եպիսկոպոսարան.. այլ այն պատճառով, որ այդ ժամանակ Նետողաց ազգը կործանել էր Ամարասը, երկրի բնակիչներին սրի էր դրել 1), ուստի իրանք փախչելով այս անդ հիմնել են վանքը՝ Ամարասու աթոռի փշրանքները պահպանելու համար» եր. 72—73:

— Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ես Սարգիս և Վարդան եպիսկոպոս հիմնարկեցանք զեկեղեցիս ի ՈՂ (1241) թուիս, շատ աշխատութեամբ աւագ խորանն խփեցաւ. և եղբայրս իմ տէր Սարգիս ի Քրիստոս փոխեցաւ. Ես տէր Վարդան կատարեցի բազում աշխատութեամբ և հալալ արդեամք իմովք ՈՂԵ (1248) թուիս, ի դառն և նեղ ժամանակիս՝ որ ազգն Նետողաց 2) զբազում գաւառս աւերեցին) և մնաց այ-

1) Աստուած հաբերէն համարի.....:

2) Պարոն քննադատն, իւր «Աւետարանի փշատակարանք» տետրակի 21 երեսի ստորև, շինած է մի ծանօթութիւն իբրև բացատրութիւն «Նետողաց ազգի»: Պարոնն այդ ազգը լուսարանում է «ձինաց» բառով փոխանակ թաթարաց գրելու: Միթէ «ձին» մտած է Արցախ.....:

բնակեցից Աթոռ և ավիճակ սրբոյն Երիցօրիսի, որ է զհաստատեալ արժով և յսուրբ նշանաւն և զաւարանաւն սրբեմով: Վիճակեցաւ և սոսկմանով ի Աղուանայ զեկեղեցիս ի Երամիս, մինչ ի աւագն Գատուհատի, յավակուրդն Վաղագնազեանոյ, ի Բարատնիս և ի Սողանազեանովն, զարիստ իւր զետնովն: Հաղարի Հազարազեանովն, Քրտագեղ իւր զետնովն, իւր սոսկմանովն. Ռիզակ, միջէլուկան իւր զետնովն և հայրենիքն եկեղեցեոյս տուինք, Փարսի իւրն և Գողանոցն, Եկեղեցաձորն իւր սոսկմանովն. և Ս. (1) լուծուա հող ի Տալիս, և լուծի Ռոզ, ի Բաբս. և Սոխրենիս ով որբայս սոսկմանէս) յետունէն զկաթուր յաղիկոս կամ ի շխան կամ կիսմ հայրանկետ, երեք սուրբ մի ժողովոյն նզոված եղիցի, յԱմարսուս և ամենայն սրբոց անիծեայլ մասն և բաժին ընդ Յուդայի սուցե» (Արձանագրութիւն Գոչի վանոց):

Աշխարհարառի միտքը հասկացողն և խեղաթիւրողն չէ իւրոզ ըմբռնել գրաբարի միտքը որով և աւելի կը խեղաթիւրէ: Մեր խօսքն երբէք նոցա մասին չէ, որք շատ շաւ զետեն գրաբարը, այլ թերուսների մասին է, նամանաւանդ գրաբարի միկտամբը: Մենք դիտմամբ մէջ բերինք այդ արձանագրութիւնը, որպէս զի ընթերցողն կազմէ մի գաղափար պարոնի աւարկութեանց մասին:

Նախ՝ Վրդանէս չէ, այլ Վարդան: Վարդան են գրում և Շահխաթունեանցն Հատ. Բ. եր. 366. և Ս. Եպ. Զալ. Հատ. Բ. եր. 259: Գու միշտ ծանօթի ազգը Երկրորդ՝ տուինք» բառն ապացոյց է, որ Սարգիս և Վարդան Գոչի վանուց տուին իւրեանց սեփականութիւնը և ոչ թէ Ամարասի—Աղուանից Մայր Աթոռի— որ անբռնաբարելի սեփականութիւն էր ամբողջ Ազգանից երկրի ժողովրդեան և Կաթողիկոսին: Եթէ տուինքն

և Վարդան Գոչի վանուց տուին իւրեանց սեփականութիւնը և ոչ թէ Ամարասի—Աղուանից Մայր Աթոռի— որ անբռնաբարելի սեփականութիւն էր ամբողջ Ազգանից երկրի ժողովրդեան և Կաթողիկոսին: Եթէ տուինքն

դուռնուի անգամ պարոնի արդ անհասկացողութիւնից  
 մտաւ ազատ լուսնակութիւնը, կրկին կը հանդիպուի թիւր  
 լուսնակացութեան: Եթէ արդարև, ըստ պարոնի: Սարգիս  
 և Ալարզոն Ամարասնց աթոռի փշրտանքները պահե-  
 լու համար ստուիւն արդ փշրտանքները Բաշի Բվանուց  
 և անհէջար, Կողմէն և Կանաչից Թորոյի Եղաց քա-  
 մնադրեցին յետ առնողները այդ իրաւունքը Գաշից, Ե-  
 թէ Փանայանային թաթարներն, կրկին Ամարաս քա-  
 նային Բաշի վանուց միաբաններն, սկսեցին լուծէրը այդ  
 սարսափելի նգովքը: սկ կարող էր յետ առնել Գաշից  
 այդ արձանագրութեամբ վավերացեալ իրաւունքը: Ս  
 Կանաչից Երկու անձինք չէին կարող ունենալ  
 քանքան հաշու կարողութիւն, որով ի կտար հասցնէին  
 այդպիսի մի նշանաւոր և թանկագին շինութիւն:

Ապա ուրեմն ճշմարիտ է «Գաղտնիք»-ի ասածն—  
 «Եթէ Սարգիս և Ալարզան սերած էին Աստուկ թագաւո-  
 րազնի յետախններէց, այդ վանքի շինութեան ծախսը  
 հոգացած էին Սարգիս և Ալարզանի ազգակից իշխաննե-  
 րըն, այդ վարելահողերը և զոները, լուծէրը, արտավայ-  
 րերը նուիրած էին հայ իշխաններն, իսկ արձանագրած  
 էին Սարգիս և Ալարզան, որպէս զի ապրի Գաշի միա-  
 բանութիւնն և պայծառ մնայ վանքն: Արցախում չը  
 հայ վանք, որ շինուած չլինի իշխանաց յատուկ ծախ-  
 քով: Բաց յայնցանէ արձանագրութիւնից դուրս չէ դա-  
 լին այն միտքն, որ դոքա միաբան էին Ամարասին, որ  
 դոքա փախած էին, որ դոքա ապաւինած էին այդ տե-  
 ղին, ինչպէս ասում է պարոնն: Գաղտնիքը

37) Պարոնն, խօսելով Գիզակի իշխողաց ժամանակի տե-  
 ւողութեան մասին, առարկում է թէ Գարբանդի Գրիգոր թա-  
 գաւորից մինչև Մելիք-Աւան Բ. ի իշխանութիւն ժառանգելը  
 (մտաւորապէս 1085—1710 թ.) անցել է 620 տարի և այդ-  
 քան ժամանակ միմեանց չափորդել են 16 մարդ, Նշանակում

է թէ իւրաքանչիւրը իշխել է միջին թուով 38 տարուց աւել,  
 որ և հարկէ անկարելի է: Այն ինչ 1710—1781 թիւր իշխում  
 են 3 մելիք, հետևապէս ամեն մէկը միջին թուով 23 տարի  
 էր: 73:

— Պարոնի ամենամեծ սխալն այն է, որ Գիզակի  
 իշխողաց 620 տարի տեւողութիւնը հաշուած է Գարբան-  
 դի Գրիգոր թագաւորի կենդանութիւնից: Թողունք Հա-  
 սանց, որ հաշուի մէջ չէ, թողունք և Գարբանդի Գր-  
 րիգորը: Պարոնն որ փաստով է ապացուցանում, որ  
 Գրիգոր թագաւորն այդպէս շուտ մեռած էր, որ վրձ-  
 ողագրար հետեցնում է թէ 620 տարի տեւած է այդ  
 ժամանակամիջոցն:

Սարգիկ ոչ միաչափ տարեթուով ապրում են և ոչ  
 միաչափ տարեթուով մեռնում: Թողունք այն, որ այս  
 ինչ կլիմայի տակ մարդիկ երկար են ապրում, այն ինչ  
 կլիմայի տակ միջակ, ուրիշ կլիմայի տակ շատ կարճ:

Որպէս պարոնն մէջ բերած է 3 մելիքների իշխե-  
 ցողութեան ժամանակամիջոցը և իւրաքանչիւր մելիքի  
 տուած է 23 տարի իշխողական կեանք, մենք ևս կա-  
 նենք այդպէս: Վաղարշ որդի Տիգրան Գ-ի թագաւո-  
 րած է 20 տարի.  
 Մեծն-Խոսրով թագաւորած է 45  
 Մեծն-Տրդատ 55  
 Իւրաքանչիւրն միջին հաշուով թագաւորած է 40 տարի  
 և 4 ամիս:

38) «Գաղտնիք»-ի հեղինակն 80 երեսում ասում էր թէ  
 մելիքները կոտորեցին խանի թուրք զորքերը և բաւականին  
 զորքեր Մելիք-Շահնազարին, իսկ 218 երեսում թէ «այդ պա-  
 տերազմում և ոչ մի մարդ մեռաւ, թէև երեք շարք այդ խոս-  
 քերից ասում է թէ Մելիքի (Շահնազար Գ-ի) հայ և թուրք  
 կանաչքը և զաւակները կոտորեցին: Միթէ դրանք մարդիկ  
 չէին, իստանակութիւն իստանակութեանց և ուրիշ ու-  
 չինք էր: 74: Գաղտնիքը վրձնողը չստացաւ:

— «Գաղտնիք»-ի 80 էրեսում հեղինակն նկարագրե-  
րած է թէ 1781 թուին Մելիք-Բախտամ, միաբանելով  
»Հարազատ մելիքներին« հետ, վրէժ լուծեցին Մելիք-  
Շահնազար Գ-ից: Իսկ ԻԸ. գլխում հեղինակն մի ընդ-  
հանուր ակնարկով ամփոփում է Վախթանկեան, Սըմ-  
բատեան և Վասակեան տոհմերի Արցախին տուած օ-  
գուտները: Այդ իսկ տեղում—216—218 էր. նոյն հե-  
ղինակն նկարագրում է և Մելիք-Շահնազար Գ-ի Արցա-  
խին տուած վնասները, հայրենատեցութիւնը, բազմա-  
կրնութիւնը, ևն. ևն., որովք և իսպառ զգուցի ղար-  
ձառ «Հարազատ-Մելիքներին»: Ապա գրում է. Մելիք-  
Շահնազար Գ-ից վրէժ լուծելու »Խնդիրն կրօնական  
կերպարանք ստացաւ. շարժուեցան կիրքերն և բորբո-  
քուեցան բարկութիւններն: Ժողովի որոշմամբ բոլոր  
Հարազատ-զօրքն յարձակուեցաւ Աւետարանոց բերդի վե-  
րայ..... այդ պատերազմում և ոչ մի մարդ մեռաւ,  
քանզի սոյն մելիքի (Շահնազարի) արարքներն իսպառ  
զգուած էին զօրավար Բաղին և... ժողովուրդն: Այս պատ-  
ձառաւ զնրակ չարձակեցին ոչ նոքա մեր վերայ և ոչ  
Հարազատ զօրքն նոցա վերայ. մանաւանդ... Բաղի զօր-  
վարն գաղտնի հրահանգ ընդունած էր այս մասին Հա-  
րազատ-մելիքներին կողմից»: Այդ տեղից ակնհայտ է, որ  
1781 թուին երկու անգամ պատերազմ եղած է Աւետո-  
րանոց բերդում: Առաջին պատերազմում «կոտորեցին  
ճրտ-խանի զօրքերը և բաւականին զօրքեր Մելիք-Շահ-  
նազարին»: Լեւոնային ճանապարհով Շուշի փախան նոյն  
իսկ Մելիք-Շահնազարն և ճրտ-Մելիք-Միրզախանեան  
ճրտ-Մելիք-Ալլահվերտին և Զրաբերդ փոխադրուեցան  
Մելիք-Շահնազարի և ճրտ-Մելիք-Միրզախանեանի բո-  
լոր գերդաստաններն» (Գաղտնիք» էր. 80): Իսկ երկ-  
րորդ պատերազմում «Հարազատ-զօրքն յարձակուեցաւ  
Աւետարանոց բերդի վերայ, բերդը կիսով չափ քանդեց,

Մելիք-Շահնազարի բոլոր թուրք և հայ սպորինի կի-  
ները և զուակները կոտորեց և մելիքարանը աւերեց:  
Իսկ Մել-Շահնազարն բերդի գաղտնի դռնովն փախաւ  
իւր սիրական Յիւսէին-բէկի հետ... և սպաւինեցաւ ի  
Շուշի»... և զօրք չսպանուեցաւ երկու կողմից:  
(«Գաղտնիք» էր. 218):

Ուրեմն ընթերցողն ասելու է մեզ հետ. «Ո՛չ եթէ  
«Լուսնակութիւն խոսնակութեանց» է, այլ պարզութիւն  
պարզութեանց, ամենայն ինչ պարզութիւն է հեղինակի  
կողմից. իսկ անհասկացողութիւն անհասկացողութեանց,  
ամենայն ինչ անհասկացողութիւն է քննադատի կող-  
մից»:

39) Պ. Քենդաշտի տետրակի 73—83 էրեսների բովան-  
դակութիւնն այսպէս գաղտնութիւնից առաջացած կրկնաբա-  
նութիւններ ) ևն միայն: Բայց 79 էրեսի վերջում աւտրկում  
է թէ (եղբոր-խանն ասում է.) «Նոյն գիշերը Շահին սպա-  
նում է մի ոմն Սաղդ-բէկ («Արարատ» էր. 332) և ոչ թէ Սա-  
փարալի-բէկը, ինչպէս ասում է «Խամս. Մելիք» (Ի) համե-  
մատ (և) «Գաղտնիք»-ը»:

— Ս. Հա Նաղուր-խանի խօսքերն. «Յովսէփ ծա-  
ռայիս բնէն զարթեցրի, ուղարկեցի վռազ վռազ մի  
լուր բերէ ինձ... Յովսէփը կիսաշունչ, ահաբէկ վե-  
րադարձաւ, ասեց) էս գիշեր Շահին սպանել են... Դա-  
ւիթ սպասաւորիս առաքեցի մի ճիշտ լուր բերէ ինձ...  
Դաւիթը վերադարձաւ, համբաւ բերաւ թէ ասում են  
Սաղդ բէկն է սպանել զՇահն» (1877-ի «Արար.» էր.  
332): Յայտնի է, որ եղբոր-խանն ականատես չէր և  
ո՛չ կարողացաւ ստուգել թէ որի ձեռնով սպանուած էր  
Շահն, այլ հազիւ կարողացաւ մագապուրծ փախչել դե-  
պի Մեծ-Սիւնեաց երկիրն, զոր օրինակ գրում է ինքն:

3) Այդ կրկնաբանութեանց պատասխանները արդէն տե-  
սած են ընթերցողը գործիս ընթացումը:

Հետևաբար հաստատու և ստորագրող փաստ չէր ստանա՝ էն-ն, այլ երկբայելի, կասկածելի, անհաստատու և անստույգ իշխողութիւն Մադր-բէկի նկատմամբ։ Կարևոր է ի նկատի ունենալ նաև որ Եստրալ-խաչներն խոստովանում է թէ զինքը միշտ հեռի էր պահում Շահի ներկայութիւնից. «Մինչև էն՝ օրերը (նախքան ներքինի-Շահին Արցախ արշաւելն)՝ զիշերը՝ ցերեկ, ժամանակ ժամանակ ինձ կ'ուզէր (Շահ) իբր ամօտը՝ զօրծեր կը յանձնէր, այնուհետև որպէս (Շահի) աչքից ընկած... զտապարտուեցայ, անարգուեցայ» (Նոյն եր. 259)։ Վերջապէս ներքին մարդ չէր Եստրալ-խանն Շահի մօտ, ինչպէս վկայում է ինքն։ Իսկ ներքին մարդ էր Բէկնազարեանցն, ինչպէս երևում է այդ «Բաղտնիք»-ից։ Այս իսկ է պատճառն, որ առաջինն, ինչպէս տեսնուում է (40) տարի ճգնութիւն անելուց յետոյ՝ իբր բերանացի պատմութիւնից) աւելի ուշ դարձրած է արտաքին (հանգամանքների կամ եղելութեանց վերայ)։ Իսկ երկրորդն — Բէկնազարեանցն յաւետ ներքին եղելութեանց, որպէս ըստնի է երևում է իւր զրածներից։

40) Պարոնն առարկում է թէ Մեծ-Սիւնիքում սով եղած չէ, վասն զի այնտեղ այն Աղա-Մամատ-Շահ է գնացել, ոչ չեղալի և ոչ Ջուբուխ՝ եր. 83։

— Ե իսկ երկարատև երաշտութիւնն ժանտախտ բերաւ մեզ համար, (Բաղտնիք՝ եր. 241)։ Դիցուք թէ, ըստ պարոնի, զորա չ'արշաւեցին Մեծ-Սիւնիք արդեօք չ'արշաւեցին և «երկարատև երաշտութիւնն» որից առաջացած է սովն և «ժանտախտ»-ն....:

41) Պ. քննադատն խօսելով Մեծ և Փոքր-Սիւնիքներից զանազան տեղեր զաղթողների մասին վճռում է. «զաղթողների թիւր միլիօնի է հասնում, որ բացարձակ առաջիկական թիւ է։ Ահնարին է միանգամայն, որ Ղարաբաղի և Սիւնի-

քի) պէս երկիրները մի տարուայ մէջ մի միլիօն մարդ կորցնէին և ամառի անապատ չդառնալին, որովհետև երբէք միլիօն հազար երկու տեղերում չկար և այժմ էլ չը կայ» եր. 83։

— Սուսայելը փաստով կ'ապացուցանեն և ոչ թէ զԼէն Բբով։

Ա. Կարևոր է սրտել «Ղարաբաղի» սահմանները։ «Նահանգն Գարաբաղ ի հիւսիսոյ կողմանէ սահման ունի զԲանձակ, յեւեց (յարևելեց) զԿար, ի հարաւոյ զԵրասխ, ի մտեց (յարևմտեց) զՀայկական նահանգն Ստուպատայ ցՍոթս... անտառտիտ (է) և այգաւէտ, վասն այնորիկ ԳԱՐԱՊԱՂ կոչեցաւ (Հ. Ղ. Ալիշ. Տեղ. Հայ. Մեծաց եր. 86)։ Աւելորդ է լիշեցնել, որ Մելիք-Սիւնիք-Սիւնիք և Բէկնազարեանցի ժամանակներում Մեծ-Սիւնեաց գաւառների շարքում համարում էին և Գեղամայ լճի սմբողջ արևելեան կողմերն, ինչպէս այդ հաստատում է Բէկնազարեանցն Մեծ-Սիւնեաց սահմանը Արարածեան նահանգի օրոշելու համար։ Այս Մելիք բերել Մելիք-Սիւնիք և Սիւնիք հաշիւը և բողբոջաւել պարնել վճռած, ամի միլիօն-ի հետ և տեսնել թէ արդարև միլիօնի է հասնում Մելիք-Սիւնիքներն։ — Մեծ և Փոքր-Սիւնեաց երեք հարիւր տասն և հինգ հազար բարձրամարդ տուն հայ բնակիչներեց և ոչ կէսն մնացած է։ Վիւրտանի, Ջրաբերդի, Ստորին-Կաչենի, Վարանդի և Բիգակի ժողովրդոց ամենամեծ մասըն գաղթեցին. իսկ Վերին-Կաչենն, Ջառխտն, Ղափանն և Մեղրին համարեալ թէ ամբողջապէս դատարկուած են բնակիչներից, յորոց շատերն մեռան և շատերն մեռաւ ի տապալակ զմարտիկներն սովն և սպանելու»։

1) Արդեօք պարոնի աշխարհագրութեան մէջ ինչպէս նշանագրուած է. Սիւնիքն Ղարաբաղի մէջ բովանդակուած է թէ «անանձին» անանձին էն. Ո՞ր Սիւնիքը կ'ամեցած է մատնանիչ անել ծանկալի երիմանալ։

տերն գաղթեցին: Ահա հաշիւն, որքան կարելի է եղաւ ձեռք բերել: Մելիք-Աղամ Բ-ն ահա ներկայացնում է այսպէս:

20,105 ընտանիք զոհ եղան սովին և ժանտախտին: 144,990 տուն (գաղթեցին զանազան տեղեր):

Այդ ամենը միասին գումարած կը լինի 165,095 տուն: Իսկ, միջին հաշուով, տան գլուխ 5-ով բազմապատկած 825,475 անձն:

Ապա ուրեմն Մեծ և Փոքր-Սիւնեքն ոչ եթէ միմի միլիոն մարդ կորցրել են, այլ միլիոնից 174,525 մարդ պակաս:

Գ. քննել պատճառները: — Ստեփ. Օրբելեան ԺԱ. դարում գրած է թէ միայն Մեծ-Սիւնեացի իշխողներն ունէին զբերդս 43, վանօրայս 28, և զեօղս 1400: Հայր Ա. Ալիշանեան գրում է Սեղահեջ և Հաբանդ. որք ի միջին դարս կոչեցան Բաշաթաղ և Հաբանդ, յորս բաւար լի քան զհարիւր զեօղս իշէ Ստեփանոս Ուռպելեան հարկատուս թեմի Սիւնեաց աթոռոյն (Տաթևին), այժմ հազիւ հարիւր զեօղք ի բովանդակ թեմին նշանակին և 16 ի նոցանէ կալուածք են աթոռոյն» (Տեղ. Հայոց Մեծաց եր. 86 ազ. 1853): Ուռհայեցին անուրի թէ հըրաւիրեցին Աղուանից Յովհաննէս կաթողիկոսը և սորա հետ քառասուն եպիսկոպոսներ և թէ այդ կաթողիկոսը իւր քառասուն եպիսկոպոսների հետ սյուզարկեցին մեծամեծ արօք և սիրով ի յաշխարհն Աղուանից՝ եր. 3—5: Իսկ այժմ բովանդակ Հայոց Ազգի մէջ հազիւ թէ լինին 40 եպիսկոպոսներ, մինչդեռ այն ժամանակ Աղուանից երկրում միայն կային 40 եպիսկոպոսներ: Իսկ այժմ միայն երկու եպիսկոպոսներ Արցախում և Շամախում:

Այս տողի 144,990-ի մէջ հանում ենք «Գաղանիք»-ի 241—253 երեսների գաղթեալ ընտանեաց բոլոր թիւերը:

Գաղանիք եթէ Մեծ-Սիւնեաց այդ 1400 զիւղերը միջին հաշուով միմեանց վերայ, թուենք 151 ծուխ, որոց վերայ աւելացնենք և Բաղայ և Փոռխոսի թուանորանիստ քաղաքների բնակիչները 6000 ծուխ, միայն Մեծ-Սիւնեքում եղած կը լինի 217,400 ծուխ: Եթէ այդ ծուխերը բազմապատկենք միմեանց վերայ 5-ով, միայն Մեծ-Սիւնեքում եղած կը լինի 1,087,000 արն: և էքան հոտ: Բայ եթէ այդչափ ևս եղած լինի Արցախում, այն ժամանակ երկու Սիւնեքում ի միասին եղած կը լինի 434,800 ծուխ և 2,174,000 անհատ: Այդ եթէ Օրբելեանից մատնանիշ արած թուականից, մինչև Մեծ-Սիւնեք-Աղամ Բ-ի ցոյց տուած թուականն, այն է 632 տարում 334,800 ծխից պակասած էր 119,800 ծուխ և միայն երկու Սիւնեքում մնացած 315,000 ծուխ: և եթէ Մելիք-Աղամի 1798—1853 Հայր Ալիշանի թուականն — միայն (55 տարում) — Մեծ-Սիւնեքում հազիւ թէ 100 զիւղ հայ մնաց, միթէ պարզ հաշիւ չէ: Այժմ ինչ ասելիք կը մնայ մեզ և ինչ չհաւատարիք Բաղայ նիքս-ի թշնամեաց, երբ ընթերցողք տեսան Աղուանից 40 եպիսկոպոսներից միայն երկուսն կայ մէջ առեց, Մեծ-Սիւնեաց 1400 զիւղից 100-ն. 28 վանքից 4-ն և այն խղճալի գրուածեանց, մէջ իսկ 43 բերդերից և ոչ մին:

Գ. Ի նկատի ունենալ զօրաթիւերը և աներակները: —

Արդէն զիտենք որ երկու Սիւնեքն միասին կարողանում էր պատերազմի հանել 34000—25000 զօրք: Այս երկու թն նշան է բազմամարդութեան: Մեծ և Փոքր Սիւնեքում միմեանց զիւղերը 1166—1798 թուականներն Աւաջնոց մասին մեծ Չամխանի պատ. Հատ. Գ. եր. 80 և 1042. Իսկ երկրորդին «Գաղանիք» եր. 240:

բըր-Սիւնիքն բաղմամարդուած էր Երեք ամենայարմար  
 օգտակարութեան պատճառաւ ամուր էին այդ երկիր-  
 ների գիրքերն, բերրի և այգեւէն հողն և գետ կենդա-  
 նի մեղեքութիւնն։ Այդ իսկ է պատճառն որ ցարգ Շու-  
 շղամ կան Գանձակեցիներ, Երևանցիներ, Ղարաապոցի-  
 ներ, Հին-Նախիջևանցիներ, Ազուլեցիներ, Ղազանչեցի-  
 ներ, ևն.։ Այս ամենը (ի հաշիւ առած է Մելիք-Սղամ  
 Բն և նշանակած 315000 ընտանեաց թուում)։

Այդ երեք հարիւր տասն և հինգ հազար ծխոց  
 թիւն չափազանց է երևում Պաղտնիք-ի թշնամեաց Արզ-  
 ուր Մեն և Քնչ (եղան Պարտաւի, Արցախի գաշտավայրե-  
 րի, Տիգրանակերտ և) արանի, Կիւլստանի գաշտավայրերի,  
 քաղաքատեղի, Թարթարի ձորերի, ամբողջ Վերին-Խա-  
 չենի, Փառխոս քաղաքի, Գեղարբունեաց նահանգի 47  
 գիւղերի, Սոթի գաւառի 81 գիւղօրէից, ամբողջ Զա-  
 ուստ գաւառի, Սին-քեանդի (1000 գիւղ), ևն. ևն.  
 բնակիչներն։ Այդ տեղեաց հայկական արեւակաց բեկոր-  
 ներն և մօտ անցեալի հնութեան նշաններն գետ խօ-  
 սուց և վկայում են Մելիք-Սղամ Բ-ի գրածի ճշգ-  
 մարտութեանն։ Անհաւատներն թող միանգամ շօջին

մ մ-է քղցման 20 և 001 քղցման 0041 բաժնայՍ-ձմՍ

